



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏՄԻ 1966 ՅՈՒՆԵՍԿՕ
digitised by A.R.A.R.©

ԹԻԻ 6

باكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزافيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԴՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԴԱՐՆԵՐ

ՎԱՐՈՋ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
 ԵԴ. ՊՅՅԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ


ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՇԵԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
G. SASSOUI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban
 Հեռաձայնի թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Կ. ՄԵՀԵԱՆ
 ԱՐՄԱՆՏ
 Ա. Ն. ՋԱՐԵՈՒՏԵԱՆ
 ԱՐՇԻ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 Վ. ՋՕՐԵՆՑ
 Վ. ԳՐՈՍՄԱՆ
 Պ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
 ՕԴԱԲԱՐ
 Յ. ՔԻՒՐՔՅԵԱՆ
 Ն. ՋԱՐԵՈՒՏԵԱՆ
 ԵԴ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
 Ա. ՍԻՆԵԱՎՍԿԻ
 Բ. ԹԱՇԵԱՆ
 Վ. ՈՇԱԿԱՆ
 Ն. Փ.
 Բ. Փ.
 Մ. Պ.
 Յ. Գ.

 ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ն. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

Ծ Ո Ւ Ն Ի Ս 1966

ՊԵՏՐՈՒԹ

4. ՄԵՇԵԱՆ

ԱՐՑՈՒՆՔԷ ԲԱՌԵՐ

Գիշերը կիսուհի էր, երբ դուրս ելանք շարժանկարի սրահն: Պողոտաներուն վրայ արտակարգ եռուղեո կար:

— Մտնենք օրհարան մը, եթէ չես անապարհեր, — ըսաւ Վահէ:

Հաւանեցայ: Եւ պուլվար Մոնմառ-թրի անկիւնի սրճարանը՝ սեղանի մը շուրջ տեղ առինք դէմ դիմաց:

Սպասեակը բերաւ սուրճերը: Վահէ հանեց ծխախոտ: Սրտնիկ՝ սահեցուց զայն սկահակներուն քով: Կոնակը տըւաւ նստարանի յեցակին: Լայն շունչ մը տուաւ եւ երկու ափերը դրաւ սեղանի եզրին:

— Վահէ՛, — ըսի՝ դիտելիս վառելիքը եւ ուժայ մը առնելով սուրճէն, — ինձի կը թուի, թէ մասնագութիւն մը ունիս: Տունէն կու գայ, թէ՞ դործէդ:

Մօտեցաւ սեղանին, վերցուց իր սկահակը, առաւ քանի մը ուժայ եւ՝

— Ո՛չ տունէն եւ ո՛չ ալ դործէն, — պատասխանեց, — այլ՝ տարիքէս...

— Միթէ՞, — զարմացայ:

— Եւ պէտք է խոտովանիմ, թէ երբեք այս աստիճան հմայուած ու նաեւ այս աստիճան հոգեկոտած չէի:

— Սիրային տագնապ մը ուրեմն...

— ... Որ ողորդութեան մը վերածուեցաւ: Առաջին անգամ դինք տեսայ, երբ օթովիւն բարձրացաւ: Հաղիւ մտած ներս՝ դրաւեց ամէնքին ուշադրութիւնը՝ իր հրապուրիչ արտաքին շուրջը: Դէմքը գիծերու բացառիկ ներդաշնակութիւն մը ունէր: Հեղինական նուրբ ջիւղ մը եւ փոքրիկ բերան մը՝ վարդերանգ շրթներով: Շէկ ու մեծ տաքոսային մազեր, որոնք հիւսկ տա հիւսկ ոլորուած էին գլխուն վրայ: Եւ տարօրէն կերպով մաքուր ու օպիտակ մորթ մը: Պիւսը կը ցնցուէր եւ իր չքեղ գլուխը երբեմն կը կորսուէր տեսողութեան առջեւէն՝ իմ դէմ նստած մարմնեղ մարդու մը գլխարկին պատճառաւ: Կը դիտէի դինք՝ միշտ խառափելով իր կողմէ նկատուելէ: Նստած էր ուղիղ, եւ

ատեն ատեն կը նայէր դուքս: Երբ Փոն տը Սեւր հասանք, ճամբայ տուի իրեն: Իր սլացիկ հասակը սահեցաւ քովէս, եւ իր աչքերուն լազուրը բոլորովին խոռովեց զիս: Ծորո՞ւն ու անընային բան մը կար աչքերուն մէջ: Ի՞նչ երազ մը, որ, սակայն, թախիծով մըն էր պարուրուած: Երբ հեռացաւ, պարապ մը զգացի շուրջս: Այսուհանդերձ խորհեցայ, թէ պատահական հանդիպում մըն է, եւ այս լայնատարած քաղաքին մէջ զինք կրկին տեսնելու առիթը չէի ունենար ապահովաբար: Եւ զայն նկատեցի դիմանկար մը, զոր տեսած ըլլայի նկարչական ցուցահանդէսի մը մէջ:

— Սառն դատողութեան արդիւնք, — դիտել տուի:

— Լսէ՛: Յաջորդ առաւօտ, երբ օթալիսի կայանը զացի, ուրիշներու հետ կը սպասէր մայրիկ վրայ: Ուրեմն ա՛յն թաղէն էր, ուր ես նոր եմ հաստատուած: Իր քաջ կապոյտ շրջագծեալ աւելի զգալի կ'ընէր մարմնին գիծերուն ներդաշնակութիւնը: Եւ հեռուէն իր գէմքը նման էր երկար ծաղկամանի մը մէջ զրուած շուշանի մը: Նայուածքը ուղղած էր հանդիպակաց շէնքին: Մտնեցայ: Միտց անշարժ: Խորհեցայ, թէ նախորդ օրուան ուշադրութիւնս նըկատած էր եւ խոյս կու տար նոյնիսկ պատահական նայուածքէ մը, որ կրնար դալ իրմէ ինծի: Փորձեցի անուշադիր ձեւանալ նաեւ ես: Լուռ ու փոխադարձ այս խուսափումին մէջ անկեղծ չէի անշուշտ: Եւ կը զգայի, թէ սովորական հետաքրքրութենէ տարբեր բան մը ունի իրեն հանդէպ:

— Արդէ՞ն իսկ...

— Այո՛: Բայց կրկին ապաւինեցայ «դիմանկարին»: Իր լուռ անտարբերութիւնը ունէր զուսպ բան մը: Եւ տարուեցայ խորհելու, թէ իր արտաքին շքեղութիւնէն ծնած յաւակնութիւն մը ունի: Թերեւս եւ՝ կապ մը: Խուսափուն բայց կրկնուող նայուածքներու լուռ հանդիպումը շարունակուեցաւ մէկ քանի շաբաթ: Երբեմն կ'անդադարանայի, թէ պատահականաբար եւ միամիտ ենթադրութեամբ անկիւնը եւ յառաջացած Ծը-

դուութիւններու հոգեմիտակը ունէի: Սկզբած էր նաեւ, իրմէ հեռու ժամերուս, իր գէմքին ու հասակին, բայց մանաւանդ իր աչքերուն խոռովիչ յաճախեցը մտաբէս ներս: Կը զգայի, թէ անտարբեր չէր ինծի հանդէպ: Եւ սակայն յամառ կերպով խոյս կու տար իրեն հետ խօսակցելու առիթը ընծայելէ:

Վա՛նէ լոնց պահ մը: Քանի մը ուժպ եւս առաւ սուրճէն եւ՝

— Զատիկ առաւօտ, — վերսկսաւ, — երբ եկեղեցի մտայ, բազմութիւնը խորհուրդ էր մինչեւ դուռը մուտքին: Սըպըղեցայ ներս: Եկեղեցի կանգնեցայ աջ պատին տակ: Պահ մը, անզգայաբար, զրուիս դարձուցեր էի կանանց կողմը: Ու նկատեցի, թէ ակնարկ մը յառած է ինծի: Ի՞նչ էր: Արագ հեռացուց նայուածքը, եւ երկար ատեն մնաց անշարժ՝ դէմքը խորանին: Իր ներկայութիւնը՝ Հայոց եկեղեցիէն ներս՝ յանկարծ ճանաչող լոյսի մը պէս պայծառացուց հոգիս: Յիշեցի, թէ առաւօտ մը մէկ քանի անգամ նայեր էր հայերէն դիրքի մը, զոր ունէի ձեռքս մէջ: Վարարուն գետի մը երկու ափերուն՝ իր ու իմ միջեւ յայտնուած կամուրջի մը տպաւորութիւնը ըրտւ վրաս՝ իր Հայրենիքի մը ըլլալուն պարագան: Յուսադրութեցայ: Եւ մտածումներու հակասութենէն ու հոգիս ալեկոծող յոյզերէն մղուած՝ որոշեցի անպայման խօսել իրեն հետ: Ամիսներէ ի վեր տիրող անստուգութիւնը կը սեղմէր սիրտս: Հասեր էի վիճակի մը, որ անպարտաւոր էր անտեսել պատշաճութիւնը: Զբաղում, ուսորեայ հոգեր, ծանօթներ եւ հաճոյքներ՝ ամէն ինչ իմ կողմէ գրեթէ լքումի էին ենթարկուած: Եւ ամէն տեղ ու ամէն բոլակ զի՛նք կը մտապատկերէի: Կ'ուզէի իրմէ լսել գոնէ մէկ հատիկ բառ, որ հոգիս մերսալատէր անստուգութեան պատճառած տուայտանքէն: Հակառակ պարագային՝ որոշած էի ջնջել այդ «դիմանկարը»: Պատուել զայն: Այդ վճռականութեամբ ալ հետեւեցայ իրեն, երբ հեռացաւ եկեղեցիէն: Երբ անկիւնը եւ յառաջացած Ծը-

բանտում Ա. փողոցի ձախ մայթին: Ոչ ոք կար: Յանկարծ դարձաւ ետեւ: Երեւի կռահեր էր, թէ կը հետեւի՝ իրեն: Իր քայլերուն հանդարտութենէն քաջալիրուած՝ շտապեցի եւ հասաւ իրեն: Կանգ առաւ: Կը նայէինք իրարու՝ երկուքս ալ լուռ եւ յայտնապէս յուզուած: Վեր ներքէք, ըսի, եթէ չեմ սխալի՝ Հայ էք: Չպատասխանեց: Կը շարունակէր նայիլ ինծի: Եւ կը նկատէի, թէ անսովոր խոսիք մը կ'աւելանէ իր ներքը: Իր լռութիւնը խօսում՝ բայց անհասկնալի բան մը ունէր: Կը մնար անշարժ՝ նայաւ աւելի սեւեռած աչքերու: ՉՊատշաճ չէ անշուշտ, - վերսկսայ, - ձեզի հետ խօսիլ, բայց մանաւանդ ձեզ կեցնել ճամբուն վրայ՝ առանց ծանօթացած ըլլալու: Կրկին մնաց լուռ: Դժգոհանք ունէր եւ կը վարանէր յայտնել, թէ՞ կը ցանկար խօսիլ, բայց, ինքնասիրտութենէ մղուած, կը լռէր: Զիջեցայ հասկնալ: Եւ յանկարծ ընդդիմացայ եւ ինծի դէմ: Հոգիս մոռցուեցաւ: Երեւի ընդդիմումս դրսեւորուեցաւ դէմքիս վրայ, որովհետեւ աչքերուն մէջ չքմեղանքի արտայայտութիւն մը նկատեցի: Եւ երբ, ներքին մղումով մը, քայլ մը ետ դացի, քայլ մը յառաջացաւ դէպի ինծի՝ բոլորովին այլայլած եւ անարկը միշտ սեւեռած աչքերու: Կը շնչէր արագ: Դէմքը դալիպցաւ: Աջ ձեռքը տարաւ դէպի բերանը, օդին մէջ շարժեց եւ բարձրացուց ուտերը ժխտական ձեւով: Աչքերը, իր ծուրի, հանդարտ պահերուն քաղցրութիւնն ծորող աչքերը տամկացան բոպէսպէս եւ արտասուքի երկու վճիռ շիթեր մարդարտացան այտերուն վրայ... Իսկ ես արձանացայ, երբ ան արդէն կը հեռանար արագաքայլ...
- Համար էր, - հարցուցի ցնցուած:
= Այո՛, - հառաչեց Վահէ, - եւ արցունքէ բառերով յայտնեց ա՛յն, զոր չէի կռահած ես: Տէ՛ր իմ Աստուած, ինչո՞ւ եկեր էր եկեղեցի: Իրեն շնորհըւած արտաքին չքեղանքին համար դո՞

հո՞թի՞ւն տալու, թէ՛, հակառակ այդ շնորհներուն, մարդկային տարբական օժիտին զրկուած ըլլալուն դէմ իր ցատումը յայտնելու համար...
Վահէ կրկին լռեց: Զայնը մեղմացեր էր: Յուզումը կը խեղդէր կոկորդը եւ շրթները կը գողային: Բնութեան այդ ընդդիմացուցիչ հակասութիւնը խորապէս խռովէր էր նաեւ դիւ:
- Յետո՞յ, - խղիւղեցի ճշիւ լռութիւնը:
= Այլեւս չտեսայ զինք:
- Իսկ եթէ յանկարծ հանդիպե՞ս իրեն:
Վահէ խոր ներշնչեց ծուրը, հակեց գլուխը, եւ արժուկները սեղանին ու ձեռքերը իրարու օղակած՝
= Եթէ յանկարծ հանդիպե՞մ իրեն, - մըմնջեց, - ե՛ս եւս այդ հարցումը տուած եմ ինծի, բայց չեմ կրցած պատասխանել: Ամբողջ կեանք մը, Զարե՛հ, անխօս ու անբարբառ... Նոյն իսկ մէկ հատիկ բառ լսելէ զրկուել...
- Կ'ըմբռնե՛մ, - ընդմիջեցի, - բայց չե՞ս կարծեր, թէ իր տաղանդը աւելի՛ խոր է: Դու լսելու զրկանքէն կ'ահաբեկիս, իսկ ան կը տատապի լսելու անկարելիութենէն...
= Եւ թերեւս ա՛յդ է պատճառը, որ սկիզբը՝ մէկ քանի տոթիներով, իսկ այժմ վերջնականապէս փախուտ տուաւ ինձմէ:
Ճ.
Սրճարանին երանք եւ յառաջացանք դէպի Օփերա: Անցորդները նուազեր էին, նուազեր էր նաեւ ինքնաշարժերուն աղմուկը:
Երբ իրարմէ պիտի բաժնուէինք, Վահէ, ձեռքը ձեռքին մէջ,
- Ինծի կը թուի թէ, - ըսաւ, - ես պիտի չլարենամ մոռնալ այդ դիմանքը կարելո՞ւ... Այլեւս պիտի չհարեմա՞մ պատուել զայն...:
Գ. Մ.
Փարիզ

ԱՆԴԱՄՁ ՋՐԵՐԸ

Որքան ջրեր են անդարձ հոսել այս կամուրջի տակով, —
Աչքերն յառած ցամաքած առուին՝ հոգեհում է տխուր
կամուրջը՝ վշտից կարացած մեղքով։

— Բայց ջուր գնացին, ջուր մնացին, ո՞ւր,
երբե՞ք յետ չեն գալ ջրերը հոսած,
կամուրջը շուար՝ մայում է տխուր
ցամաքած առուին՝ մեղքը կարացած...
Զի՛ լսում երգը ջրերի մաշուր։

Քանի՜ անգամ եմ տակայն ես անցել ու վերադարձել կամուրջովըն այդ,
Ու պիտի անցնեմ ու դառնամ մորեն՝ դեռ քանի՜ անգամ...
Ջուր լինէի ես, հոսէի՜ անդարձ քաղցր խոխոջմամբ։

Ծառի երակով բարձրանայի վե՛ր,
Ձուլուէի մրա տրեան մէջ կանաչ,
Նայէի լուսնին մանիշակի քաղ աչքերի մըբով,
Լեցնէի ըստինքն ես որքատունկի
Ու՛ կաք տունդ մօր գոյգ կրծքերը մով...

ԱՐՄԱՆՏ

ԱՐԱՔՍԻ Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ԵՐԵՔ ՎԱՐԴ ՄԷԿ ՈՍԿԻ



Տալէ վիթա... Մարդիկ թեոսան
վրայ նստած, բոսոր աչքերով վերաբ
կը դիտեն, իսկ գիշերային ճախրող լոյ-
սերուն մէջէն, երկինքը սեւ եւ խոշոր
բերի մը պէս կը փայլի:

Դեկտեմբերի վերջին օրն է. հակա-
ռակ ձմրան, օդը տաք է. ոչ մէկ ամ-
պի կտոր կը շողշողայ երկնքին վրայ,
եւ ոչ մէկ կաթիլ անձրեւ, կ'իյնայ ճե-
նձի գաւաթին մէջ որ ողորմելի տխրու-
թեամբ կ'երեւայ սեղանին վրայ:

Ի դին ամէն բանի, մարդիկ ուրախ
կ'ուզէին ըլլալ այդ օր, որովհետեւ
տարւոյն վերջն էր, եւ պէտք էր խնդա-
յին արեւմտեան խնդուքով: Պիտի
խաղաղանէին զուխին, պիտի ծեծէին
միտերնին, պիտի ճգմէին սրտերնին,
միայն թէ ուրախանային քիչ մը...:

Եւ այ այդ օր ուղեցի քիչ մը միւս-
ներուն նմանիլ, սակայն էակներ կան,
որոնք պէտք չէ փորձեն խնդալ, որով-
հետեւ նոյնիսկ անոնց ժպիտը արեւան
դառնութիւնը ունի, եւ խնդուքին կեղծ
է սուտ չէք մը պէս: Քիմիական
պղտոր նիւթի նման ճեղքը աչքերուս
առջեւ պարել սկսաւ. սկսաւ ուռիլ,
խայտալ, եւ ահա, դաւաթը ձեռքերուս
մէջ ճգմեցի, խնդեցի... սակայն ձեռ-
քերս չէին որ արիւնեցան... արեւան կա-
թիլը տեսա՛յ փոքրիկ աղօս մը մասնե-
րուն վրայ, անոր հայեացքին մէջ: Այդ
աղան երեք հատ վարդ կը ծախէր մէկ
սակիի Տալէ վիթա-ի թեոսան վրայ,
տարւոյն վերջին օրը, գիշերուայ ժամը
տասնեմէկին. այդ աղան հաղիւ եօթ
տարեկան կար. անոր բղբտուած էութե-
նէն կը հոսէր տեսակ մը խեղճութիւն եւ
անսպասելի տաքանայ:

Ուրիշ աղաներ, փոքրիկ կամ քիչ
մը մեծ, կնճռոտած բերեքով, իրենց
ծնողներու կողքին, կը սպասէին, կը
սպասէին, զփերջին: Այլեւս յոգնած
էին, լծացած աչքերով կը դիտէին շուր-
ջերնին, առանց տեսնելու: Այդ տղաքը
պարտասած էին առանց յոգնելու եւ կը
հայհոյէին իրենց մտքերուն մէջ:

Այլեւս մարդիկ տարւոյն վերջին
գիշերը կը տօնէին պանդոկներու սրահ-
ներուն մէջ, բախտախաղերու սեղան-
ներու ետին, եւ գիշերային պնդաբար
սրճարաններու խորերը. կը պտտէին
փողոցներու վրայ, կը գինովնային, կը
խնդային խանդավառ եւ ալեկոծ հոգի-
նէրով... որովհետեւ կը սիրէին տեսնել
հիւծիւր եւ վերջը տարւոյն վերջին օր-
ուան...:

— Մամա՛, տուն երթանք այլեւս:

Տղաս սպասէ՛ն կը յօրանջէր ար-
դէն, եւ վիզը ծուռ կը դիտէր ճիւղան-
դի ծառքը, որ սրճարանին մուտքին
առջեւ կանգնած, հակայի մը կերպա-
րանքը ունէր:

Պիտի շերթայիք տուն, պիտի շեր-
թայի՛ր, դուն շուրջերը լքել այդ արեւ-
նը որ կը դողա փոքրիկ ծաղկավաճառ
տղուն մաշած ձեռքին վրայ:

Այդ երեք կիսաթաւամ վարդերը
արիւն կու լային շղթայուած տարա-
բախտներու նման. զլուխին հակած,
եւ իրանին կեած:

Դու՛դ կանչեցիր զայն.

— Կէս ոսկի չ'ըլլա՛ր — անպատկառօ-
րէն ուղեցիր սակարկել իր հետ. կար-
ծեա տուն մը կ'ուզէիր գնել:

— Մամա, գնէ վարդերը. կուրծքիդ
վրայ կը գնես. գեղեցիկ են, — ըսաւ

տղաս, նոյնիսկ չնայելով վարդերուն:

— Տղա՛ս — կ'ըսես իրեն, մտքէդ՝
Հոստեղ լաւ ենք, տե՛ս սա մարդիկ ու-
րոնք կը փախչին զվերջէն կը փնտոնն
տարւոյն հատումը, կը զգան մահը
ժամերու եւ անթաքթներու: Ինչո՞ւ,
հարցուր այդ խումբ մը տղոց որոնք կը
մպախն փրփրած բերաններով: Դո՛ւն,
ամբոյն երիտասարդ, որ զաւաթ մը
բռնած մատներուդ մէջ, կ'ուզես երջա-
նիկ երեւիլ: Իրա՞ւ, ուրա՞ւ ես: Ի՛նչ
փոթորիկ կայ ուղեղիդ մէջ, որ պահ մը
այդպէս, յօնքերդ կիտ, սեւեռած աչ-
քերով զլուխդ դարձուցիր բոլորէն: Հե՛ս
զիտեր որ զմենք ենք որ կ'անցնենք ոչ
թէ ժամանակը:

Արցունք մը կը տեսնեմ սա գեղեցիկ
աղջկան ցողազարդ աչքերուն մէջ: Ի՛նչ
է աղջիկ, զո՞ւն ալ ակունքերդ ցոյց տա-
լով (որոնք յարատեւ վրձիններն ձիւնի
պէս կը շողշողան) կը խնդա՞ս, եւ ձեռ-
քերովդ կը փայփայես ռէպիլի գաւա-
թը, կարծես արոփելը զգայիր ա-
նոր...:

— Ձաւէն, պիտի երթա՞ս այլևս —
կ'ըսես տղուդ հօրը:

Ան ճիշդը կը խմէ եւ կը խաղայ,
կը խնդայ աննպատակ եւ ձեռքերը ու-
սիդ, չլթններ խոնաւ, կը նայի ուրիշ
կիներու:

Միեւակ ես, Անի՛, ամէ՛ն մարդու
նման. եթէ տուն երթաս, ի՛նչ պիտի
խօսիս Ձաւէնին հետ, պիտի պատմե՞ս
իրեն չարութիւններու, ոխերու եւ հար-
ուածներու մասին որոնք ստացար տաբ-
ուան մը ընթացքին, հիանալի մարդոց-
մէ...:

Ինչո՞ւ պիտի երթաս տուն. աղմու-
կը կը լեցուի ականջներուդ մէջ. ամէն
ինչ կը գոռայ, գանդակներն իսկ տուայ-
տանք եւ աղաղակ կը ստեղծեն գանկերու
մէջ. խնդուքներն իսկ ճիշդու եւ թո-
հուփոհի կը վերածուին:

Վարդապոյն հոգիներ հազած են
մոխրագոյն վերարկուներ, իսկ անթիւ
նայուածքներ անասուններու վոհմակ-
ներու պէս անսանձ կը թափառին մի-
ջոցին մէջ...:

Սեղուն կը սիրես այս ամէնը
չէ՞...:

— Երեք քառորդ ոսկի — փոքրիկ
տղան, քովդ կայնած, երեք վարդերը
սեղմած կուրծքին, կը սպասէ որոշու-
միդ:

— Տղա՛ս, ո՞րք ես — կ'ըսես իր ձեռ-
քէն բռնելով եւ մօր մը նման շոյելով
անոր կեղտոտ մազերը:

Որքա՞ն տխրած կ'երեսին քեզի այդ
վարդերը. որքա՞ն կարմիր եւ բարկա-
ցնող է անոնց տխրութիւնը: Քոտմենի
պրկումով, ջիղերդ ցաւ կը պատճառեն
կուրծքիդ մէջ եւ սիրտդ կը յորդի, սա-
կայն չես լար... ո՞ւր կը հոսին այդ ար-
ցունքները, ո՞ւր կ'երթան անոնք մտա-
մուռնի աղօթքներու նման:

Փարթամ երանգներով թեռաւի-
ն վրդովիշ գինիները, ճիններն ու ուխդի-
նները, նայուածքները, բազումները,
սրունքներն ու չրթուածները, ամէ՛նը,
ամէնը, զամբարանի մը նման տրտում
են... Իսկ դու՛ն, Անի՛, դուն կ'ուզես ու-
նենալ այդ մեռնելիք Երեմ վարդերը:

Կը մտածե՞ս երեք այդ ոտարարիկ
տղուն մասին, որ ճարտաստներու ե-
րեք վարդ ծախել կ'ուզէ, Կաղանդի մե-
լամաղձոտ գիշերուան մը մէջ... Գի-
տե՞ս ուր կ'ապրի, ինչպէ՞ս կ'ապրի:
Ի՛նչ է անունը:

Ձե՛ս մտածեր, չի մտածեր, չեն
մտածեր Անի, որովհետեւ գիտես թէ
ամէն մարդ աղքատ է, լքուած է, մի-
նակ է. թերեւս այդ քորշերու մէջ
փաթթուած տղուն դանկը չի բորբոքի
մարդկային քրքիջներէն, չի պատուէր
տիեզերքին պահանջներէն, այլ ջնջուած
երապի պէս կը հանդուստանայ խաղաղու-
թեան խորերը: Այդ տղան երջանիկ էր
ինծի, քեզի եւ միւսներուն համար, ո-
րովհետեւ դո՛ւք երջանիկ չէիք:

Երգչուհի մը կ'երգէր հիմա, չսի-
րեցիր անոր ձայնը, որովհետեւ չատ-
թաւ էր, եւ կ'աւելցնէր մթնոլորտին
ճնշումը: Ամէնքը լուռ էին. տղաս գլու-
խը դրած թեւերու վրան, աչքերը դոյց,
մտիկ կ'ընէր ճիշդն ու ռաբսափը ճա-
րտութիւններու:

Մօմ շեր օմ վա բըվէյօմէ շէ Քիթ-
Քաթ, ալօմ տոմէ - կ'ըսէր շալլօթէն չը-
պարուած կին մը երիտասարդ բարեկա-
մին, որ մտիկ ընել չուզելով կնոջ խոս-
քերը, կեղծ հետաքրքրութեամբ կը դի-
տէր շուրջը:

Եւ այդ ամբողջ թեւասը, իր ծուռ-
կերին բաց կիներով, կոնսկնին ժերկ
ազնիկներով, մեծահարուստներով եւ
պիկներով, վախա երեւցաւ աչքիդ,
փոքրիկ աղաւ մը երջանկութեան քով:
այդ աղան չէր խնդար քեզի նման, սա-
կայն ան չէր ապրեր օրերու հասնումին
արհաւիրքով: Ամէն ոք ընկեր եւ բարե-
կամ էր իրեն: Դա՛ւն, սա՛ յիմար կիներ,
սա՛ երիտասարդ աղան որ ծունկերուդ
նայել կ'ուզէ կիսաբաց կոպերով: Թե-
ոասի խենթ պատանիները, այբօրէններն
ու փնացածները, ամէնը, ամէնը բարե-
կամ էին այդ աղան, որովհետեւ երեք
վարդ պիտի ծախէր անոնց, եւ որովհե-
տեւ անոնց պէս չէր ապրեր...:

Ո՞վ է որքը, յիմար: Դո՛ւն, սա
քովի քայքայուած գէմքով կիներ, ամուս-
նինդ, տղադ իսկ, բոլորը, բոլորը...

- Ո՞րքա, սա աղկան նայէ, ի՛նչ
լաւ կը պարէ:

Աղկիկ մը Ծրանառազ Հարաթի մա-
ղբով, նեղ սափաստ մը փաթթած սը-
րունքներուն, զխստերը կ'օրօրէ, երկու
Լերիտասարդ աղաներ թեւերին ազնկան
ուսերուն հանգչեցուցած, հանդարտ
քայլերով կը յառաջանար անոր ետեւէն:

Նայէ՛, նայէ՛ սա քուրմերուն որոնք
դուխնին ցից, գոռոզ հողիներով, կա-
տաղութենէ եւ ընչաքաղցութենէ փնա-
ցած սիրտերով, գիշերուայ մը իրախ-
ճանքը կը տօնեն... Եւ դիտէ սա աղան,
որ երեք ծաղիկի ջերմութիւնով, կեանք-
ի մը պատրանքը կը դրկէ:

Կը խլիմ ձեռքէն այդ վարդերը:

- Խե՛նթ ես, Անի՛, աղան պիտի
ծախէ այդ վարդերը: Գրամի պէտք ու-
նի:

- Սակայն կրնաս վճարել չէ, տուր
մէկ ոսկիի տեղ տասը, թո՛ղ ուսերը
ծածկէ բուրդէ հագուստով: Բան մը ու-
տէ. ուրախ ըլլայ...: Ի՛նչ զառանցանք

կոյ երակներուդ մէջ: Գիշերներ տակաւ
կը յօշոատին մարդոց շունչերով, որոնք
մարկակոծ, կ'իյնան անպունդներու կող-
քին, եւ կ'անհետանան յաւէտ:

Յոգնած եմ. կը նայիմ կօշիկնե-
րուս, որոնց մէջ ռաքերս ցուտս, կըծ-
կուած, ծանրութիւն կը պատճառեն
մարմնիս: Ինչո՞ւ ամէն բան ուրախ է
եւ նոյն ստեն այնքա՞ն տխուր...: Կը
խածնեմ լեղուս արիւն հանելու շափ
ուժգին:

- Աս այդ վարդերը - կ'ըսէ՛ յան-
կարծ աղան, - ա՛ռ դանոնք, արգէն
թումեցան. ձրի՛ առ զանոնք տիկին,
այլեւս գրամի պէտքը չունիմ: Դէ՛կ օր
է անօթի եմ: Զուռն եկաւ այլեւս ու պի-
տի երթամ...

Եւ ձեռքէս արագօրէն յափշտակե-
լով այդ վարդերը, կը զետեղէ կուրծ-
քիս վրան, եւ այնքան շուտ կը փախչի
ինձմէ, որ երբ կ'ուզեմ ռաքի ելլել, դա-
ւաթին մէջի մնացած ճէննը կը թափի:

- Տղա՛յ, հո՞ս եկուր, ա՛ռ սա դրա-
մը: Հազուստներ դնէ, հարուստ ապրէ
օր մը միայն. եկո՛ւր, մէյ մըն ալ մի-
այն նայիմ անմեղ եւ անապական աչքե-
րուդ մէջ: Դի երթա՛ր, փոքրիկ եւ
չարչարուած էակ:

Անոր ստուերը ամբօթին մէջէն կը
կորսուի, եւ ես աչքերս օտուերին...

Խելադարի մը պէս...
Անին շատ վաղեց անոր ետեւէն.
փնտեց զայն սեղաններու տակ, ուրիշ
սրճարաններուն անկիւնները: Սակայն
փոթորիկի մը ահեղութեամբ տղան ան-
հետացած էր աշնան նման մերկ, ձմրան
պէս կայծակնահար...

Նոյն միջոցին, ժամը սասնեւեր-
կուքը հնչեց...:

Ասրճանակի կծու պայթիւն մը
լուսեցաւ:

- Նոր տարի - կը փսփսային մաւր-
դիկ իրարու:

Կը համբուրէին իրարու ճակտէն,
կը սեղմէին զիրար:

Կապանքի նման քամահերիւ, միջո-
ցը դրկեց էութիւնդ, եւ տիեզերքը նեղ-
ցաւ քեզի համար եւ վերածուեցաւ տե-

սակ մը բանտի: Վերադարձար կորաքա-
մակ. չէիր խնդար:

— Նոր տարի, — ըսիր քուկիննե-
րուդ եւ սուտէն ժպտեցար, ժպտեցար
զաւկիդ, որ յողնուծենէն կիսաբաց աչ-
քերով բան մը կը փսփսաք ականջիդ:

Ձլտեցիր. կը մտածէիր թիւսին
մասին, անոր որ հազիւ քու տղուդ տա-
րիբը ունէր եւ որ խարուսիկ տնուրջի
մը պէս հեռացած էր:

Ո՞ր ճամբաներու վրայ արդեօք ա-
փերը բաց, դրամ կը հայցէր. ո՞ր մե-
ծաւարդութիւն տրուեցէն քաշե-
լով, բան մը կը մրմնջէր. ո՞ր էր հի-
մա երջանիկ տղան, որ մէյ մըն ալ պի-
տի չտեսնէի:

Կուչաս, Անի՛. թաշկինակը կը խեղ-
դէս փերուդ մէջ. նայէ, տղադ թեւե-
րը փաթթած վզիդ կը խօսի, բաներ կը
խնդրէ քեզմէ, անուշիկ եւ հարազատ
տղադ, որ գոնէ պառկելիք տեղ մը ունի,
լաւ ուտելիք ունի, «գոլաբճանք» ունի,
եւ բերանը խոտը, կը խնդայ չիմա...

Անի գիտցաւ որ թիւսը տունի մը
դրան առջեւ պիտի գլխերէր եւ կամ
նոս պանդուկի մը դրան ետեւ (եթէ թոյլ
տային իրեն) հո՞գ չէր միայն թէ չխըն-
դար կեանքին մէջ, միւս մարդոց նման,
որոնք ցոյց տալ կ'ուզեն իրենց չունե-
ցած ուրախութիւնները:

❖

Փամ մը ետք, ճուրախութիւնէն
արեւցած ինքնաշարժ մը, փոքրիկ տը-
ղու մը կը զարնէր: Երկու ոստիկան-
ներ, անոր ճմլուած դիակը դտան կէս
ժամ ետք միայն. տղուն գէմքը անճա-
նայելի դարձած էր. ո՛չ մէկը եկաւ
փնտելու. զայն, ինքնութիւնը անորոշ
հակ մըն էր փոքրիկը: Կարծես թաշի
ինքնաշարժը տղուն մարմինը տարաւ
կառավարութեան յատուկ դամբանա-
տուն, եւ այդպէս վերջացաւ ամէն բան:

Անի երեք չզիտցաւ որ այդ տը-

ղան չտարեցաւ երջանիկ, բայց մեռաւ...
երջանիկ. Նոր ճարուան օրը, գրեթէ
չորցած այդ երեք վարդերը առաւ եւ
դեռեղեց թանկագին յիշատակներու տու-
փին մէջ... եւ զայն գոցեց յաւէտ, այս-
պէս թաղելով տղան, եւ... երեք վար-
դերը:

Ուրախ չեղար, Անի՛, որովհետեւ
երեք չտեսար տղան: Նոր ճարուան օ-
րը զացիր նոյն թեռաքը, փնտելցիր,
հարցուցիր «կառսօն»-ին. գլուխը շարժեց
ո՛չ մէկը չճանչցաւ կամ չուզեց ճանչ-
նալ այդ տղան որովհետեւ երանելիե-
րը, երջանիկները առանց տեսնուելու
կը հեռանան կեանքին պատշաճէն:

Նոր ճարի՛ն, նոր տարիները, բո-
լորը պիտի ճնշէին վրադ պիտի տօշո-
րէին հողիդ, պիտի բարձրացնէին
գոյութիւնդ...

Գոսացած ուղեղով, քաշիլ սկսար
պողոտայէն. քայլերդ յառաջացան զար-
տուղի ճամբով. փոքրիկ շուրջը նո-
յիլ. սակայն վախճա՞ր, վախճա՞ր հան-
դիպումներէ. քայլցի՞ր, քայլցի՞ր եր-
կար, գետին նայելով, նայուածքը տեւ
եւ մրտած ասֆալթին ընկերացուցած:

Եւ յանկարծ:
Սեւ ասֆալթին վրայ փոքրիկ լիճ
մը տեսար...

— Մորթուած աքաղաղի մը արիւնն
է, — ըսիր մտքդ եւ գլուխդ շարժեցիր
տիրօրէն. պահ մը մտածելով այդ ան-
մեղ կենդանիներուն վրայ որոնք կը
մորթուէին մարդոց սարքած ամէն խը-
րախճանքներուն եւ կերութումներուն
համար:

Երբե՛ք չզիտցայ... սակայն այդ ա-
րիւնը, նոյն մասսեւեռումը ստեղծեց
մէջս որքան երեք վարդերուն կարմիրը,
որքան վարդ ծախող տղան, երբք վարդ
մէկ ոսկիի:

Ա. Գ. Զ.

Յունուար 5, 1966

ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

Ա՛խ, ասում են «ծովացի՛ր»... —
Ա՛զգ իմ հեռում ցանուցի՛ր...
Բայց տեսնո՞ւմ է աչքը չար,
Որ խելայեզ, անդադար՝
Գետն է հասում օտար ծով,
Թափառ տնով ու լացով...

Մինչև քոքան համբերել,
Սրտով՝ «Մասիսն սուն բերել»... —
Երբ քաղեղուն է մամբան,
Բերդակալած ու կապան,
Երբ լեզուն է խարանում,
Հոգին՝ մարմնում դարանում...

Կու՛ր չը գնալ օտարի՛ն...
«Տուն չը բերել օտար կի՛ն»... —
Ամէն քայլում օտար լին,
Արդար վաստակ, ամենզ ճի՛շ,
Հասակ նետած քարդիմեր —
Օտարի տան բարբիտեր...

Ծովանում է ծո՛վն օտար,
Կլանելով ծո՛վ հանճար,
Ու քարդում վիշտ մե՛ր սրտին,
Ամէն քայլին ու հերքին... —
Յետոյ ասում, «Ծովացի՛ր»...
Ա՛զգ իմ հեռում ցանուցի՛ր...

Էլ ի՞նչ հոգով «ծովանալ»...
Էլ ի՞նչ սրտով հավանալ,
Երբ հեռու է ծո՛վը մեր,
Երբ մե՛նք «ծովերին» ենք կեր,
Երբ դանակ կայ մեր վզին՝
Մորքում են լուռ ու հեղին...

ԱՐՇԻ

Թեհրան, 1964

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Բ.

ԵՐԲ ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳԻՆ ԿԸ ԲՈՆԿԻ

Դէպքեր յաջորդեցին զէպքերուն, ու մարտական ոգին վարակեց բոլորը:

Տարօնի աշխարհը կ'եռար Սիփանէն մինչեւ Ծովասար, ու Սալնա-ձորէն մինչեւ Աղաճունիք: Գիւղերէն զոմերու ու խրճիթներու մէջ կազմակերպութեան կեանքը կը դարձնուէր, իսկ ցերեկները հնազանդ ժողովուրդ մը իր առօրեան կ'ապրէր: Գիւղացին եղան համբերութեամբ՝ արտե-րը կը հերկէր, աչքը լուծին՝ ուր տեղաւորուած էր իր տասնոցը փրկարար:

Առաքելոց վտնքի գրաւումը ու քսանօրեայ բաց ճակատամարտը թուրք բանակին դէմ, ազատութեան դանդի մը պէս զօղանջեց բոլոր հայ զաւառներուն մէջ, հպարտութիւն ու անձնավստահութիւն ներշնչելով բազմութիւններուն, որոնք զէնքին փարած՝ ազատութիւն կամ մահ կ'եր-դէին:

Թուրքերն ու Գիւրտերը զգացին թէ անպատիժ կողոպուտներու եւ սպանութիւններու շրջանը անցած է, եւ թէ հնձուած կեանքերու փոխա-րէն, իրենց կեանքն ալ ենթակայ է երկաթեայ հարուածին:

Ծովասարի խուճը եւ իր խմբապետ

Լեւոնիքիմ իջան...

Երդը, որ պատմութիւնը կը հիւսէր այս անօրինակ դիմադրութեան, հերոսական ոգին կը տարածէր հայ նոր սերունդին մէջ ու կը մխիթարէր հինքը որ այնքան տառապանքնէր կրած էին անմոռելի:

Արիւնը արթնցած էր բոլորի սրտին մէջ, ու ստրկական կեանքը այ-լեւս տանելի չէր խոնարհ հայուն համար: Դէպքերու ալիքին տակ ժողո-վուրդի կորովը բարձրացած էր: Դաժան կեանքին մէջ անձնուրացութեան ոգին համաժողովրդական դարձաւ:

Ամբողջ ժողովուրդ մը հողբանօրէն Ծեփայի դարձած էր, իւրա-ցնելով գիտակից ու պատուաւոր մահուան ճամբան: Այս իրողութիւնը վճռական դարձակէտ մը կը կազմէր ազատագրական պատմութեան մէջ:

digitised by A.R.A.R.®

Հոն, Սասնոյ բարձունքներուն վրայ, Ծովասարի խումբը այլեւս բանակ մըն էր եւ սերտ կապերով կապուած մօտակոթ ու հեռակոթ շրջաններու կազմակերպութեան հետ:

Ապահով էին ձիւնապատ այս լեռնայնարհին մէջ, մինչեւ զարունը բացուէր: Բայց այդտեղ կեդրոնացած շմացին եւ խմբակներու բաժնուած իջան դաշտ: Ոմանք մեկնեցան ուրիշ շրջաններ ու միայն կորիզ մը պահուեցաւ բարձունքներուն վրայ:

Կորիւնն ու հաճի Եակոբ անուանի մարտական ուժեր էին ու Ֆետոյի Սակայն, Հրայրի ծուլուն կազմակերպութեան ջերմ պաշտպանը կը հանդիսանային: Կ'ողջէին որ շարունակուի կուսակցական կազմակերպութեան եւ Ֆետայական խումբերու համերաշխ գործակցութիւնը: Արդէն Առաքելոց վանքի յաջող դիմադրութիւնը ինքնին ժողովրդական բանակի մը դրօշը դարձած էր եւ ամբողջ ժողովուրդը ռաքի ելած էր, պարբնականին ղէնքով խօսելու բանակայութեան ղէնքով:

— Գէորգ, դուն որ հիմա շատուղ դարձար, ու Անդրանիկը փաշա, կը կարծենք թէ մեր ժողովուրդի դաշտին կազմակերպութեան ուժը ըմբռնեցիք, — կ'ըսէր Կորիւն, հանդարտ ու տրամաբանական դատողութեամբ: — Չանազան շրջաններէ, խոնարհ մարդիկ, իրենց ղէնքերով եկան մեզի միանալու, ու կուսակցան մեր կողքին որպէս Ֆետայի: Անշուշտ, անոնք կազմակերպուած ժողովուրդի մը եւ մարմիններու կամքը կը ներկայացնէին: Ժողովուրդն ալ Հողեպէս Ֆետայի դարձաւ: Այսօր մենք շարժուն մարտիկներ ենք, բայց անշարժ ժողովուրդ մը ունինք, որ ղէնքին փառած՝ ամէն տեղ մեզի հետ է:

— Դուն ալ Հրայրին մէկ կտորն ես, — ըսաւ Սարգստ, — դեռ այն օրերէն այդ կարծիքը կը փայփայէիք եւ հիմա աւելի հիմքեր ունիս այդ տեսակէտը առաջ քշելու: Բնական է, մենք առանց մեր ժողովուրդին, ինչ կ'ընանք ընել, մասնաւոր հիմա, երբ բարեփոխարար մարմիններու անձայր շղթայ մը ստեղծուած է Մէլ Դաշտին մինչեւ Ախլաթ ու Պիթիւնէն մինչեւ Խնուս: Մեր մարտական շարժումներուն յենարանը այդ կազմակերպութիւնն է: Մեզ պահող եւ նեղ օրերուն՝ մեզի օգնութեան հասնողը կողմակերպութիւնն է, իր հաւատարիմ ընկերներով եւ կարգապահութեամբ: Անցեալի մէջ, շատ անգամ, մենք ապահով զգացումով հայ ծածքի մը տակ չէինք կրնար քանալ ու անսթի եղած ժամանակ, մօտիկ հայ գիւղէ մը չոր հաց եւ լուր չէինք կրնար խնդրել: Այսօր, ամէն կողմ հաւատարիմ ընկերներ ունինք, ու տեղէ տեղ կ'ընանք անցնիլ ապահով ու մտահաշտ, որքան չէինք մեր սեփական թաքստոցին մէջ: Չմոռնանք սակայն, թէ վճռական հարուածը միշտ կը սպասուի Ֆետայիներէն, որոնք արդէն կը կազմեն կրակի մէջ նետուած բանակը սրբազան ազատութեան:

Անդրանիկ մտիկ կ'ընէր այս խօսակցութիւնը, ու լուսնայն կը զգար թէ Կորիւնի խօսքերը ուղղուած էին իրեն:

— Յեղափոխութիւնը իր ճամբան դտաւ, — ըսաւ Անդրանիկ, — եթէ հինգ-վեց տարի առաջ բանի մը հոգիով թշնամի մը պիտի տուպալէինք, ու մեր ղէնքի ուժով ողի պիտի ներշնչէինք մեր շրջապատին, այսօր ամէն տեղ հայ մարդու մտահաշտութիւնը իր ղէնքին ու բռունցքին վրայ է: Խալիլէ Պշտրի Պիտաւումը, Առաքելոց վանքի գրաւումը ու զանազան ղէպերը ընդհանուր խանդավառութիւն ստեղծեցին ու ամբացուցին յեղափոխական կադրականութիւնը: Ֆետայիները աղատութեան բռնակը կը կազմեն, այլեւս խումբ ու խմբակ չեն: Կազմակերպութիւնը այդ բանակի աչքն ու ղեկա-

վարն է։ Այս երկու ուժերը միասին պիտի քաշեն՝ երկուքն ալ մարտական նկարագիր ունին։

— Հանգիստ սրտով հիմա կ'իջնեմ Դաշտ, — ըսաւ Կորիւն, — եւ կ'աշխատեմ որ խումբերը իրենց գլխաւոր ուղարկութիւնը կեդրոնացնեն զինման գործին վրայ։ Մենք աւելի ծանր դէպքերու նախօրհասին կը գտնուինք։

— Ուղարկի՛ր եղբի՛ր, Կորիւն, որ կազմակերպութիւնը միշտ մարտական նկարագիր ունենայ, որովհետեւ յեղափոխութիւնը կուի է, իսկ կոտի համար մարտական ուժեր են պէտք, — ըսաւ Անդրանիկ։

Կոտոյի հանին, որ լարուած ուղարկութեամբ մտիկ կ'ընէր այս խորհրդաժողովները, խօսքին մէջ մտաւ։

— Գէորգը վկան է անցած տասնամեակի դէպքերուն։ Այդ ատեն դըպրոցէն կը փախէինք Առաքելոց վանքի բարձունքները, եւ ժամերով կը դառնայինք Դաւթի Քարին շուրջ, որպէսզի Արաբոն ու Գէորգը տեսնենք։ Այդ օրերուն մատնիչները շատ էին, ժողովուրդը փախտական չէր պահէր, կազմակերպութիւն չունէինք, այսօր ծաւալուն կազմակերպութիւն մը իր ցանցերը տարածած է Սասուն, Մուշ, Մշոյ Դաշտ, Ախլաթ ու Սալնաձոր։ Ճամբաներ բացած է զէպի Կովկաս ու Պարսկական սահման։ Սերորը միանակ էր իր խումբով։ Յոյսը գրած էր մինակ իր գէնքին վրայ, ու յանկարծական պաշարումի մի գոհ գնաց։ Մինակ էիք դուն եւ Անդրանիկը Ս. Յովհաննու անտառներուն մէջ, ու կազմակերպական ցանցի պակասէն՝ չկրցաք վտանգը իմանալ եւ օղնութեան հասնիլ Սերորին։ Գուրգէնն ալ այդպէս զոհ գնաց Յրօնքի մէջ։ Հիմա մեր Ֆետայական ուժը պիտի կոթնի Կազմակերպութեան։ Ամէն տեղ ունինք հաւատարիմ ընկերներ, որոնք անհրաժեշտ պարագային Ֆետայիէ մը աւելի մարտական կորով կրնան ցուցաբերել։ Ահա մեր շուրջը նայինք։ Առաքելոց վանքի պաշարումը մեզի բերաւ բազմաթիւ մարտիկներ, որոնք այսօր արդէն Ֆետայական կոչումը ունին։ Ահա մեր մօտ կը գտնուի երիտասարդ Սմբատը, որ մէկ տարի առաջ սուրհանդակ էր ու այսօր, կոխներու մէջ մկրտուած Ֆետայի։ Հրայրի, Վարդան վարդապետի, Սասնոյ իշխաններու, ինչպէս նաեւ Մշոյ Դաշտի փորձառու եւ խելահաս մարդոց քաղաքականութիւնը կ'իրականանայ աստիճանաբար։ Մենք փախտական մարտիկ ենք, այլեւս տուն պիտի չդառնանք, ժողովուրդի տունը մեր տունն է։ Մէկը բոլորի համար, եւ բոլորի պաշտպանութիւնը մէկուն...

— Անշուշտ իմքական կոխներ տեղի պիտի ունենան, — ըսաւ Կորիւն, — նոյնիսկ անկախ մեր կամքէն։ Հարուածին պիտի պատասխանենք հարուածով ու վճռական։ Մեր մտահոգութիւնը պիտի ըլլայ, որ պատահական դէպքերու զոհ չերթան մեր խումբերը։ Ամէն մէկ ընդհարում շահ մը պէտք է բերէ յեղափոխութեան։ Ուսիլէ Պլարի գլուխը եւ Առաքելոց վանքի ծրագրուած կոխը տաւր տարիով աւելցուցին յեղափոխական հաւատքը եւ ամբաշուշին ազատագրական կազմակերպութիւնները։ Քիչ զուհերով մենք արդիւնք ձեռք ձգելու ուղին պիտի բռնենք եւ թանկ պիտի ծախենք մեր մարտիկներուն կեանքը։ Վէճ չկայ այս մասին։ Ու խաղաղ ժամանակ, մեր մարտիկներն ու Ֆետայիները դործիչի, մարդիչի դերը պիտի կատարեն, որուն արդէն լծուած են զանազան շրջաններու մէջ։

— Հիմա, գործի ժամանակ է, ձեռքը դէպքերը պակաս են, — ըսաւ Գէորգ, — եւ այս օրերուն պիտի իջնեմ Դաշտ, Առաքելոց վանքի ստորոտը գտնուող քանի մը դիւղերու մարտական խումբերը կարգի դնելու։ Այդ

չըջանի գիւղերը կրնան մեզի օժանդակել, երբ դէնք ու ռազմամթերք պիտի փոխադրուին Սասուն: Քու աչքն ալ, կորիւն, Սուրբ Կարապետի շրջանէն մի հեռացնիր: Լաւ կ'ըլլայ որ այդ կողմ մեկնիս եւ մարտական խումբերը կարողացան պահեստ Կոտույի հանին Մուշ չի կրնար իջնել, ծուղակը կ'ընտայ եւ գլուխը կը կտրեն: Թող մնայ Անդրանիկի հետ Սասուն, մինչեւ զարունը բացուի, այս շրջանը որեւէ վտանգի ենթակայ չէ:

Ու Ֆետայիները իրենց գտնուած վայրերուն մէջ նսւիրեալ դործիչներ կը դառնային:

Մարտական վարժութիւններու ու ռազմամթերքի պատրաստութեան ժամանակը ձմեռն էր:

•

Գէորգ իր հետ առաւ Կորիւնը, Աւրանի Արամը, Սայտօ Պօղոսը, Վարդանը ու իջաւ Դաշտ: Փոքրամիւ էր այս խումբը, բայց բոլորն ալ յայտնի մարտիկներ էին եւ ծանօթ՝ Դաշտի գաղտնի կազմերուն:

Առաջելոց վանքի մօտակայ գիւղերը այցելելէ հոգ, անոնք անցան Նորչէն, որ Մուշ Դաշտի մեծ գիւղերէն էր, եւ հազիւ տասը քիլոմէթր հեռաւորութիւն ունէր Մուշ քաղաքէն: Գէորգ այդ գիւղերը անցուց գիւղի Կոմիտէի եւ մարտական խումբերուն հետ, աչքէ անցուց անոնց դէնքերը, քանի մը հրահանգներ տուաւ: Ֆետայիները հանդիսացան առանձին տան մը մէջ: Գիւղի մարտական խումբը մինչեւ առաւօտ արթնուն՝ պահակ: Կեցու խումբի պաշտպանութեան համար:

Կորիւն յաջորդ օրը պիտի անցնէր Սուրբ Կարապետի շրջանը:

Գէորգի Նորչէն գտնուելու լուրը հասած էր Մուշ:

Գրգռուած անցուղարձ մը տեղի կ'ունենար կառավարական եւ զինուորական շրջանակներու մէջ: Վաշտ մը զինուորներ եւ ոստիկանական ջոկատ մը ճամբայ ելան դէպի Նորչէն, Գէորգի խումբը ոչնչացնելու համար:

Թրքական ուժերը կը գլխաւորէր Մուշ երեւելիներէն Հիւսէյն աղան, որ անձամբ մասնակցած էր Սեբրիի գլխատման, գործակցելով Խալիլի Պշարին:

— Գէորգի գլուխն ալ պիտի կտրենք, — կ'ըսէր Հիւսէյն աղան, երբ ձիաւորներով կը մեկնէր Մուշէն: — Այս վտանգաւոր գայլը այս միւն ու ձմեռան մեր ձեռքէն պիտի չաղատի:

Ու մէկ ժամ հաջ արդէն Նորչէն գիւղի դիմացն էին, բայց դաշտին մէջ, միւններու վրայ:

Գիւղը իրար անցաւ զօրքի երեսուսէն:

Նորչէնի Կոմիտէն եւ մարտական խումբերը շրջապատեցին Գէորգը եւ ուղեցին գիտնալ թէ այսպէս ցերեկին, միւնապատ դաշտին մէջ, ի՞նչ պիտի ընէին:

Գէորգի վճռական խօսքը եղաւ.

— Կռիւր անխուսափելի է:

Անմիջապէս գիւղական խումբերը դասաւորեց գիւղի այն ծայրամասերուն վրայ, ուրկէ կ'անցնէր ճամբան դէպի Առաքելոց վանք, իսկ ինք տեղաւորուեցաւ գիւղի այն ծայրամասը, որ Մուշի ճամբան կը կտրէր: Երկու մարտիկներ, յիսուն քայլ հեռաւորութեան վրայ, բարձրագիւր տան մը մէջ, թիկունքը պահեցին, որպէսզի գործողութեան հետեւին եւ անհրաժեշտ հարուածը տան, երբ առիթը ներկայանայ:

Թուրք ձիաւորները մօտեցած էին երկու հարիւր քայլի հեռաւորութեան վրայ, երբ Գէորգի խումբը համազարկ բացաւ թշնամիին դէմ: Առաջին թաւալողը եղաւ Հիւսէյն աղան, որ փռուեցաւ ձիւնի վրայ, իր ձիւնէն առջեւ: Նոյն պահուն, սպաննուեցաւ զօրամասի հրամանատար սպան:

Տասնեակ մը զինուորներ եւ ոստիկաններ ձիւնի վրայ թաւալալով կը դառնային:

Զօրքը անզրուխ մնացած՝ կը կրակէր ալ ու ձախ, աննպատակ, քաշուելով ետ, մէկ քիլոմէթր հեռաւորութեան վրայ: Այդ կռիւը քանի մը ժամ եւս շարունակուեցաւ. բայց թշնամին վտանգ մը չէր ներկայացներ:

Գէորգ համախմբեց Ֆետայիները:

— Տղա՛ք, ինձի կը թուի թէ թշնամին այլեւս յանդգնութիւն չունի առաջ գալ: Ինչպէս հետունքը կը տեսնէք, գիտկները կը մնան ձիւնի վրայ: Մենք մեր ճամբան բռնենք դէպի լեռը:

— Պարոն Գէորգ, սպաննուողը Հիւսէյն աղան է: Գիւղին ծայրը դառնուող մարդիկ եւ կիներ ճանցած են առաջին ձիաւորը, որ առաջին զնդակներէն ինկաւ: Խայիլէ Պշարիէն յետոյ Հիւսէյն աղային գլուխն ալ ինկաւ, Սերորի գլուխին փոխարէն, — կ'ըսէին գիւղացիները:

Գէորգ առանց սպասելու որ մօլթը կոխէ, բռնեց Առաքելոց վանքի ճամբան եւ պատուիրեց խումբերուն:

— Ամէն մէկը ձեր տունը քաշուեցէք եւ գէները պահեցէք մեծ խրնամքով: Երբ ձեզ հարցաքննեն, կը յայտնէք թէ երբեք տեղեկ չէիք որ Գէորգը գիւղի մէջ կը դառնէր: Գիւղի մեծամասնութիւնը արդէն անտեղեկ է իմ ներկայութենէն: Գիւղի ծայրը աւերակ տուն մը ցոյց կու տաք եւ կ'ըսէք թէ եկած ու ապաստանած էր այդտեղ, առանց որ դիւղը լուր ունենայ:

Գէորգ Առաքելոց վանքի ուսերէն անցաւ Սասուն:

Գիւղը լռութեան մէջ ինքնիւր վրայ կնկուեցաւ: Թուրք զինուորներն ու ոստիկանները Հիւսէյն աղային եւ սպաննուած զինուորներու գիտկները դրին եզան կառքերու վրայ ու փոխադրեցին Մուշ, ամօթահար ու պարտուած:

Թուրք երեւելիները իրարու ահանջին կը փոփսային:

— Դալիպ էֆէնտին ինկաւ Գուրգէնի փոխարէն Յրօնքի մէջ: Հիւսէյն աղայի գիտկն ալ հիմա իրենց տան դրան առջեւն է, Սերորի գլուխին գիմաց: Ֆետայիներուն հետ յափուիլը կատակ չէ: Մուշ քաղաքի Թուրքերս այս բանը լաւ պէտք է ըմբռնենք: Ամէն գործի պիտի չխառնուինք: Կառավարութիւն կայ, զօրք կայ, ոստիկան ու ոստիկանապետ կայ, թո՛ղ անոնք կոռւին Ֆետայիներու դէմ: Մենք Մուշ քաղաքը պէտք է խաղաղ պահենք:

Հիւսէյն աղայի տապալումը, հենց առաջին զնդակէն, նոր հմայք մը կ'աւելցնէր Գէորգի այնքան հարուստ մարտական անցեալին վրայ: Այդ ընդհարման առաջին տասը վայրկեաններուն, արդէն երկու տասնեակ գիտկներ փռուած էին ձիւնի վրայ: Առաքելոց վանքի կոռիւններէն երկու ամիս ետք, Նորչինի կռիւը յանդգնութեան եւ անձնալստահութեան ոգի կը ներշնչէր մարտական խումբերուն, որոնք պատրաստ էին հարուածելու՝ պատասխանելու:

Դիւցազնական զարկերու մթնոլորտին մէջ, ամբողջ ժողովուրդը մը տողորուած էր հերոսական ոգիով:



Մարտական հարուածները, որ մէկը միւսին կը յաջորդէին, ազատութեան եւ քաղաքական քարոզը կը տարածէին շրջանէ շրջան, գիւղէ գիւղ, մինչեւ վերջին խրճիթը:

Ըմբոստութեան ոգին հրարութի մը պէս արծարծած էր:

Տասնեակ տարիներով ու դարերով բռնութեան տոկացող այս ժողովուրդը ինքզինք պաշտպանելու մտնական կամքը կը դարձնէր, ու ամէն տուն ձգտում ունէր զէնք մը ճարելու, դաշոյն մը խրելու զօտին մէջ: Եթէ այդ զէնքէն զուրկ դիպի աշխատանք մըն էր կամ հովիւ մը, ճոկան մը կը լինէր, սուրի ու զէնքի տեղ զործածելու համար:

Ամէն տեղ հալածանքը կը շարունակուէր Հայութեան դէմ: Բանտարկեալներու թիւը կ'ուսնար ամէն մէկ զէնքէն ետք, ու շարք մը մեծ դիւղերէն ազդեցիկ մարդիկ կ'առաջնորդուէին նկուղ, առանց պատճառի: Տարօրինակը այն էր, որ ժողովուրդի դիմադրական կորովը կ'ուսնար ու բռնատարկեալներն ալ շղթայակապ, մարտական հմայքով կը ներկայանային ժողովուրդի աչքին:

Բանտերու մէջ, շղթայակապ յեղափոխականները բռնապետութիւնը կ'արհամարհէին, ու բանտի շրջապատին մէջ Գիւրտը, Թուրքը, աւաղակն ու ցեղապետը հիացմունքով կը նայէին այս նոր Հայերուն: Ստրկութեան ստուերներէն ազատած՝ բարձրագլուխ ու հերոսական էին բանտարկեալները, ազատութեան ազնիւ նպատակին նուիրուած մարդու կեցուածք ունէին քանք բոլորն ալ, ու անոնց անվերապա անձնագոհութիւնը պատկառանք կը պարտադրէր շրջապատին:

Բանտը դարձած էր հայ յեղափոխութեան կեդրոններէն մէկը, աւելի խօսուն, աւելի հոգեպնդիչ:

Մահը աչք առած բանակ մը կար թրջական զնտաններուն մէջ, ուր գիւղացի խնորհ աշխատանքը հերոսի կերպարանքով կը ներկայանար Թուրքին ու Գիւրտին:

— Կրակ ինկած է իրենց փորը, սարսափ՝ սրտերու մէջ, — կ'ըսէր ժողովուրդը, — ինչ որ տեղի կ'ունենայ, ցոյց կու տայ թէ կառավարութիւնը հրդեհի բռնուած է:

Ու երբ հեռուսր դիւղի մը մէջ զինեալ Գիւրտերը կողոպտուի ու բռնութեան կը սկսէին, անոնցմէ խոհեմ Գիւրտ մը կը խրատէր.

— Այս բաները մի' ընէք, վերջը լաւ չ'ըլլար: Եթէ շատ կարծէ էք, Անտոք եւ Ծովասար դացէք, հոն են Ծիտայիները, անոնց հետ չափուեցէք:

Տեղ-տեղ այս խոհեմ խորհուրդը իր ազդեցութիւնը կ'ունենար ու Գիւրտերը կը հեռանային, առանց մեծ շարիք գործելու:

Մարերու Ասլանին ձայնը ամէն տեղ կը լսուէր, ու Գիւրտերն էին, որ իրենց յորինած երգերուն մէջ կը փառաբանէին Գէորգ Չաւուշը, որուն դեղակը անվրէպ էր:

Ամէնքը զիտէին թէ Անդրանիկը Ծովասար կը գտնուէր ու անոր փաշայի ուխողոսը պատկառանքով կը հնչէր բոլոր բերաններուն մէջ:

Վշտահար ու վիրաւոր հայ ժողովուրդը իր կառավարութիւնը ունէր բարձունքներուն վրայ:

Հոն բարձրացած էր Հրայր, որպէս ազատագրական շարժման պատախանատու մարմինի ամէնէն հեղինակաւոր անձը:

Ազատութեան ձգտող ժողովուրդը մահ-պատերազմի օրհասը կը դիմաւորէր մոլեռանդ հաւատքով:

✽

Ձմեռան այդ օրերուն, մեծ դէպքերը դադարած էին, ու ամէն ոք դարձեալ ընդհանրութեան կը սպասէր՝ ճակատագրական վճռականութեամբ:

Լուրերը, որ կը հասնէին Վանէն ու Ախլաթէն, աւելի կորով կը ներշնչէին ազատագրական շարժման նուիրեալներուն: Խանդավառ այդ նամակներէն յայտնի կ'ըլլար թէ նոր անձնագոյններ պիտի հասնէին Տարօն:

Ֆետայական կռիւները շուտով պիտի վերածուէին ընդհանուր ապստամբութեան:

Պարսկական սահմանին վրայ ու Կովկասեան հայկական շրջաններուն մէջ, եռուզեռը ամբողջ մարտական բանակ մը ոտքի հանած էր, զէնք ու անձնուէրներ հասցնելու համար Սասուն, որ այդ թուականներուն դարձած էր ազատութեան դրօշակիրը եւ իր վրայ դաժան՝ Հայութեան սեւեռուն նայուածքը:

Ղարիպի յուզական գէպքերը Դրօշակի էջերէն Ազատութեան ճամբա-պարհը կ'արիւնոտէին, ու Սիամանթոյի հերոսապատումը կ'առաւելագոյնէր մարտիկները, որոնք շարժող անտառներու պէս կ'անցնէին Հայոց լեռներէն:

1902-ի Փետրուարը ձիւն կը կուտակէր Սասնոյ լեռներուն վրայ ու ձորերուն մէջ, իսկ Ֆետայիները կաղնի մեծ կոճղերը բուխերիկներու մէջ կը վառէին, անցեալի դրուագներ կը պատմէին, կը պարէին եւ իրար կը հրմշտկէին կտաակով, իրենց ուժը սպառելու եւ ժամանակ սպաննելու համար:

Գէորգ Չառուշի երբեմն իր խումբով ձիւներու մէջ կը նետուէր, այցելութիւն մը տալու լեռներու ստորոտը գտնուող գիւղերուն, ուր ընտիր խումբի կազմ ու պատրաստ իրեն կը սպասէին, զինավարժութեան իրենց շնորհքը անոր ցուցադրելու համար:

Փետրուարը իր փոթորիկներով արդէն անցած էր, երբ օր մը Գէորգ Գալէին ըսաւ.

— Գալէ, մեր հինգ տղաները թող պատրաստուին, Ս. Յովհաննու վանքի կողմը անցնինք, այնտեղի գինապահետքը քննելու համար:

— Երթանք, Գէորգ, մեր ոտքերը փայտացան այսպէս հանդարտ նստելով, միայն թէ այս օրերուն, ձիւնի հիւսը շատ է, Աբրոյի եւ Թոմասի պէս ձիւներու տակ չմնանք:

Ապահով ըլլալու համար լեռներու ուտերէն կ'անցնէին, ձմեռան կ'երկարի, բայց հիւսի վտանգէն զերծ կ'ըլլանք: Այս օրերուն Սասնոյ ձորերէն անցնելը խենթութիւն է:

Ու յաջորդ օր, Սարհատ հինգ ընկերներով կը բռնէր Կուրաթիկի բարձունքները, զէպի Ս. Յովհաննու վանքը:

Վանահայր Մկրտիչ վարդապետ խանդավառութեամբ ընդունեց Գէորգ Չառուշի խումբը ու այդ իրիկուն հիւրասիրեց զանոնք Բասնէն եկած գինիով:

Մկրտիչ վարդապետ Հեղինցի էր: Իր եւ Գէորգի տեսակցութիւնը քանի մը տարիներու իրենց կարօտը կը գոհացնէր: Անոնք առանձնութեան մէջ, հին օրերը յիշեցին Հեղինի եւ Բասնէի կեանքէն, որմէ կտրուած էր Գէորգը, տասներեկու տարիներէ ի վեր:

Խօսքի թելերը իրարու կցուելով՝ դարձան իշխան Վարդանի շուրջը, ու Գէորգ իր վարանումը մէկ կողմ դրած՝ հարցուց.

— Հայր սուրբ, ինչո՞ւ համար իշխան Վարդանի աղջիկը կը հալածէք այստեղէն ու Ս. Կարապետէն: Ի՞նչ ոճիւր գործած է այդ աղջիկը, որ ծնածի ու նախատինքի կ'ենթարկուի քու եւ Վարդան հայր սուրբի կողմէ:

Մկրտիչ վարդապետը շփոթանքի մատնուեցաւ:

Սուսամ վանքի աշխատաւոր կիներուն քով կը մնար ու գանակոծուած էր իր հօրեղբօր՝ Մկրտիչ վարդապետին կողմէ:

— Պարտ'ն Գէորգ, այդ կիներ մեր պատիւը դետնի տակ անցուց: Ամուսինը թողած՝ Ս. Կարապետ եկաւ ու հակառակ Վարդան վարդապետի խրատներուն, չուզեց տուն դառնալ: Իշխան Վարդան Սուսամի անունը չ'ուզեց լսել, որ իր կամքը այդպէս ոտքի տակ առած է:

— Բայց, հայր սուրբ, այդքան անգիտութիւն, անպաշտպան կնոջ մը հանդէպ, Թուրքը միայն կրնայ ընել: Հանգիստ թողէ՛ք այդ կիներ, օր մը իշխան Վարդանը կը հաշտուի իր աղջկան հետ:

Մկրտիչ վարդապետը Գէորգի խօսքերուն մէջ խիստ շիշտ մը նկատեց, ու չհամարժակեցաւ առարկել, գիտնալով որ Գէորգ արդէն մանրամասն տեղեկութիւններ ունէր, ինչ որ կատարուած էր Սուսամի հետ:

— Խօսք չհասկցող կնոջ ի՞նչ կրնանք ընել: պիտի գրեմ Վարդան հայր սուրբին, որ դայն պահէ վանքին ծառայող կիներուն մէջ:

Գէորգի համար խօսակցութիւնը վերջացած էր: Մինչ վանահայրը հողեկան ծանր անհանգստութեան կը մատնուէր:

Արշալոյսին Գէորգի խումբը ուղղուեցաւ վանքի գոմերուն կողմը, ուր հաւատարիմ եւ զաղտնի գործին տեղեակ ծառաներ եւ հովիւներ կային:

Ու երբ պահեստի դէնքերը աչքէ կ'անցնէին, Գալէն Գէորգին նայեցաւ հարցական.

— Գիտե՞ս, Գէորգ, Սուսամը այստեղի աշխատաւոր կիներուն մէջ կը գտնուի...

— Գիտեմ, Գալէ՛, բայց մենք աշխարհէ կտրուեցանք, քար գրինք մեր սրտին, ու այս երկաթի կտորները առինք մեր գրկին մէջ: Գժախտ է Սուսամը, բայց մահ-պատերազմի այս օրերուն, ես յոյս չեմ կրնար ներշնչել անոր: Տառապանքը ներքին մահ մըն է, որ դուն միայն կը տեսնես եւ գիտես, իսկ իմ շրջապատէն ոեւէ մէկը չի կոսկածիւր թէ ամէն օր երազներ կը թաղեմ անսիրտ մարդու մը նման:

Գալէն խօսքը շերկարեց: Իր կեանքի երազներուն բոլոր դռները փակուած էին, բայց գիտէր թէ Գէորգի հողիին մէջ ողբերգական երազ մը կը շարունակուէր ու ինք վկան էր այդ ողբերգութեան:

Յաջորդ օր պիտի դառնային Սոսուն:

Յուշարկաւորութենէ մը վերադարձովի տխրութիւնն ունէր Գէորգ: Գալէն հովիւներէն մէկուն պատուիրեց որ տեսնէ Սուսամը եւ ըսէ անոր թէ Գէորգ պատուիրած է Մկրտիչ հայր սուրբին որ հանգիստ ձգեն զինք:

Գալէն աւելցուց.

— Այս խօսքը մարդու չըսես. Սուսամին ալ պատուիրէ որ մարդու բան չըսէ այդ մասին, այլ պէտք երկուքիդ ալ դուրսը կը կտրեմ:

Հովիւը Գալէն բնաւորութիւնը գիտէր: Սարսափով լուրը հասցուց Սուսամին ու անոր զգացուց եղած սպառնալիքը:

— Աստուծոյ վրայ կ'երդնում, — բռաւ Սուսամ, ժպիտ մը արցունքոտ աչքերուն մէջ, — մարդու բան պիտի չըսեմ: Աստուած պահէ մեր կտրիճները, ուրիշ բան այլևս չեմ ուզեր աշխարհէն:

Երկար տարիներու սպասումէն յետոյ, առաջին յոյսի նշոյլն էր որ կը ծաղկէր Սուսամի սրտին մէջ: Այնքան երազներէ ու յուսալքումներէ հոգ, սիրտը լեցում էր ու հիմա կը դարձար, թէ մեծդի լեռները անխորտակելի բերդեր կը դառնային իր հողին, ու ինք կրնար կեանքի բոլոր զոհաբաշտութիւնները դիմապահել:

Ազատութեան արիւնոտ ճանապարհներուն վրայ լուռ սէրերն ալ երազի պէս հողիներուն մէջ կը պլպլային:

Երեք հազարամեակի փոթորիկներն ու փառքերը շարկած, աղքատ ու զինաթափ՝ բայց հպարտ իր անցեալով, Հայը լուսաշողիւղ արշալոյսներուն կը նայէր:

Քանհերոզ դար... Ազատութեան եւ խռովայոյզ յեղափոխութիւններու դար:

Հայ ժողովուրդը ազգ, պետութիւն եւ անկախ Հայրենիք վերակերտելու արիւնայի ճամբաներուն վրայ էր:

Գարունը բացում էր ու ամէն կողմ սպասողական խաղաղութիւն մը կը տիրէր, դէպքեր չէին պայթիւր շրջաններուն մէջ ու դէնքի ձայն չէր լսուեր լեռներէն: Աշխատանքը կ'ետար դաշտին մէջ ու լեռներուն վրայ, արտ ու ափ կը հերկուէր վաղուայ բերքին համար:

Կեանքը կ'ընթանար ջուրի հոսանքին պէս, ու թուրք կառավարութիւնը կարծես թէ ուրախ էր, որ պարտաւորուած չէր վտանգուոր դէպքերու մէջ նետուելու:

Հայ ժողովուրդը դաշտի կախած էր իր դարաւոր աշխատանքին վերայ, կարծես թէ անցեալ տարիներու դէպքերը հին ժամանակներու յիշատակը բլրային, հեքիաթ ու իրականութիւն իրարու հետ շփոթելով:

Սասնոյ լեռնաշխարհը լուռ էր ու հանգաբոս: Այդ լռութիւնը ինքնին Սասունը վերածած էր անկախ լեռնաշխարհի մը, ուր ոստիկան ու զինուոր այլևս ոտք չդրին: Տուրքի դանձումը դադրեցաւ, ու ֆիւրտերը Սասնոյ սահմանները չմտան, իրենց ձեռքը կրակի մէջ չայրելու համար:

Հանդարտութեան մէջ, Սասունցիները լծուած էին իրենց առօրեայ աշխատանքին եւ լեռներուն կը տիրապետէին անվախ:

Սակայն էրդրումէն, Երզնկայէն զօրամասեր ճամբայ կ'ելլէին դէպի Տարօն: Փորձառու դրօժիչներ ուշադրութեամբ կը հետեւէին զօրամասերու այս փոխադրութիւններուն, որոնք թէեւ կու գային հանդարտօրէն տեղաւորուելու դանազան զօրանոցներու մէջ, բայց անոնց տեւական կուտակումը բռնակալութեան դաւադիր մտադրութիւններու յայտարար նշան մըն էր: Ազատամարտիկներու Բարձրաւանդակը թուրք բռնակալութիւնը մղձաւանջի մատնած էր:

Սասնոյ բարձունքներէն, աղատութեան ճիւղն հետ, Հրաջաններու որոտը կը լսուէր:

Մաւալուն ապստամբութեան մը հեռանկարը կար Տարօնի եւ Վասպուրականի հորիզոններուն վրայ:

Հրապարակելու և Վարդգէսի հանդիպումը սերտ դործակցութիւն մը ստեղծած էր իրարու շօնաշարժութեամբ մարմնակերպութիւնը:

Հայ Յեղափոխութիւնը պարագայի ճիշդը կը թափէր ժողովուրդը զինելու: Հաւաքական քայլերուն անխառնակ կը թուէին:

Հարուած այդ միջոցառումն մէջ խորհրդաւոր խաղաղութիւնը կը շարունակուէր:

Թուրքերը զուարթ էին իրենց քայլերուն մէջ, ու Վարդան վարդապետը մտահոգ էր այդ երեւոյթին:

— Այս շունչը փորձանք պիտի բերեն մեր պիտուն, — կ'ըսէր ան Մշոյ Աւաշնորդարան հաւաքուած ժողովականներուն, — Թուրքը երբ հանդիստ նստած է և ժողով կայ գէջքին, ոճիւրի մասին կը մտածէ:

— Մեր ժողովուրդն ալ երէկուան ստրուկը չէ, — ըսաւ ժողովական մը, որ զաղտնի կազմակերպութեան ոգին էր Մուշի մէջ, — Թուրքերը պատկանաւոր կը նային Մովսսարի բարձունքները բռնող Ֆետայի բանակին:

— Բարեբախտաբար գէպքերը դադարած են, — ըսաւ Վարդան վարդապետ, — Հրայրի խոհմութիւնը միայն կրնայ փորձանք ուղարկել:

Նախորդ տարիներու անցքերը Հայերուն շատ վնաս տուած էին, բայց վարկաբեկուած էր կառավարութիւնը յաջա Գերաբեկու և թուրք ազգաբնակչութեան: Հերոսական կռիւները հմայքը աւելցուցած էին Ֆետայիներուն: Անոնց թիւը տասնապատուած էր ու զաղտնի և ընդարձակ կազմակերպութիւն մը ստեղծուած էր ամէն տեղ:

Թուրք պաշտօնեաները, քիչաւ բէկերը, Հայերուն դրացի թուրքերը կը զգային հզօր կազմակերպութեան մը ներկայութիւնը այս խաղաղ ժողովուրդին մէջ, որ իր աշխատանքին վրայ խոնարհած էր: Ամէն տեղ, զիւր թէ քաղաք, այդ զաղտնի ուժին ներկայութիւնը զգալի էր:

Թուրք երեւելիները իրենց տան հայ ծառաներէն կատակով կը հարցնէին.

— Աւլա՛մ, Ախ՛մ, դուք այ Ֆետայի չե՞ք:

— Ալա, ես ի՞նչ Ֆետայի պիտի ըլլամ, տարիներով մեր տան ծառան եմ:

Բայց Ախմ ամէն լուր կը հասցնէր Սասուն, ինչ որ կը լսէր թուրք երեւելիին տան մէջ: Ու օր մը, երբ հայ ազդեկ մը թրքութիւնը ընդունեց բռնի և ամուսնացաւ Բերդի Թաղի թուրք երիտասարդի մը հետ, Ախմն զիշերանց մտաւ անոնց տունը, զաշունհարեց երկուքն ալ ու բարձրացաւ լեռ:

Երեք-չորս օր Ախմն չհրեցաւ: Փնտտութիւն էլան հայ ծառան զըտնելու: Հարցաւորած ըրին ու իմացան, որ Մշոյ մէջ տարապի տարածող այդ հարուածը իրենց խոնարհ ծառայ Ախմին գործն էր:

— Ալլա՛հ, Ալլա՛հ, Ֆետայիները մեր տուններուն մէջն են, — կ'ըսէր երեւելի թուրքը, մօրուրը շոյելով, — ուրեմն Ախմն եթէ ուզէր կրնար մեր վիզը կտրել ու լեռ բարձրանալ:

Պատժական այդ արարքը տարապի մասնեց ո'չ միայն թուրքերու, Գերաբեկու հայը, այլ նաեւ այն թուրք երիտասարդները, որոնք կը կարծէին թէ ամէն բան կրնան ընել անպատիժ:

Խորունկ վախ մը աստիճանաբար բոյն կը դնէր թուրքերու, Գերաբեկու և պետական պաշտօնեաներու հոգիին մէջ: Անյայտ բազուկէ մը հարուած ստանալու վախն էր այդ: Մէկ օրէն միւսը Խալիլէ Պշարի գլու-

խը ինկած էր, Հիւսէյն աղան հաղիւ Նորչինի առջեւ հասած՝ առաջին գլեհ-գահը կը ստանար եւ կ'իյնար անշուշտ ու Գալիպէ Էֆէնտին, որ այնքան յո-խորտանցով Գուրգէնի խումբին գէժ արշաւանքի ելած էր, կը տապալէր Յրօնքի մէջ։

Սերորի եւ Գուրգէնի նահատակութիւնը մահ մը չէր յեղափոխական հրգեհէ թոնուած հայ ժողովուրդին համար։ Անոնք անմահացած էին եւ արժանացած՝ փառաց պսակիմ...

Արիւնոտ գէպքերը ազդարարութիւն մը կը նկատէին իրենց հասցէին մեծ ու պզտիկ բռնակալները։

Ամէնէն հեռուոր գիւղերուն մէջ, քիւրտ ցեղապետը, թուրք ոստի-կանապետը, կամ գինուորական հրամանատարը, երբ բռնութիւն մը կը գործէր, կը զգար մութ նայուածքը գիւղատեւին, կամ զգուշութեամբ այնանդէն անցնող հովիւին։ Ու այդ խորհրդաւոր նայուածքին մէջ զաղտ-նի պահուած զաւոյնի մը փայլփրումը կ'երեւակայէր։

Խորհրդաւոր խաղաղութիւնը կազմակերպութեան պատասխանատու-ները կը մղէր աւելի զգուշաւոր քայլերու, ու անոնք նոյնպէս ամէն անգ, լուրջ պատրաստութիւն տեսնելու ջանքերուն մէջ էին։

— Փաղաքի խումբերը պէ՛տք է զսպէք, Համազասպ, — կ'ըսէր Մշոյ Գեղամ։ — Գիւղերները դատում-գոչումով կ'երգեն, գինավարժութիւններ կ'ընեն, տունէ տուն խումբով կ'այցելեն։ Օր մը փորձանք պիտի բերեն Մուշի գլխուն։

— Դանի անդամ նոյն պատուէրը ես ալ իրենց տուած եմ, — ըսաւ Վերկաթեայ խումբի խմբապետը, — բայց խումբերը հազիւ թէ հիմա է, որ կանոնաւոր գէնք ունին եւ գինովացած են զէնքի վարժութիւն ձեռք ձեռ-յու։ Ընդէ է որ գիւղերապահները տեղի ունեցած այդ բոլոր շարժումները կը հաղորդեն կառավարութեան։ Թուրքերը արգէն չուկայի մէջ կատակով հարցունեն կ'ընեն հայ առեւտրականներուն, թէ՛ ճի՛շդ է որ հայկական բռնակ կը պատրաստէք։

— Գիւղերու մէջ ալ անդուսպ մարտական խումբեր կան, որոնք իրենց քաջութիւնը ցոյց տալու անհամբերութիւնը ունին, — ըսաւ Գեղամ։ — Ա-նոնց ալ պէ՛տք է գրեւ եւ սաստել, այլապէս մեր ծրագրած աշխատանքը կ'ընայ փորձանքի մը հանդիպիլ։

Յախուռն գործունէութիւնը եւ խուհիւ ու զաղտնի աշխատանքները երբեմն իրար կը լրացնէին ու երբեմն ալ իրար կը խաչաձեւէին։ Հրայրի ստեղծած կազմակերպական ցանցը կ'ուճանար օրէ օր ու չըլանէ չըլան։ Պատասխանատու գործիչները կազմակերպութեան զեկը իրենց ձեռքը կը պահէին ամուր կերպով։

Բարձրաւանդակը աղաւթ ու անկախ լեռնաշխարհ մը դարձած էր։

Թուրք բռնակալութեան ձեռքը հոն չէր երկարեր։ Մեծ բանակ մը շարժման մէջ պիտի գնէր, Անտոքին ու Մոմասարին մօտենալու համար։

Հոն համախմբուած Ֆետայիները, Առաքելոյ վանքի հարուածէն ետք, հանդարտ ժամանակաշրջան մը կ'ապրէին։ Ուժերը բաժնած էին զանազան գիւղերու մէջ, որպէսզի համախումբ լիզէն ի մը տպաւորութիւնը չթողուն ժողովուրդին վրայ։ Գաղտնի կազմակերպութիւնը ինուսէն, Ախլաթէն եւ Մշոյ Գալաէն իր աչքը յառած էր Սասնոյ բարձունքներուն, ուր, մարտիկ ժողովուրդը պահ մը ազատ կը շնչէր հայկական երկնքին տակ։

Տարօնի ներքնաշխարհը հրաբխային էր։

(Շար.)

Կ. Ս.

ԱՂԵՐՍ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Տէր

Իմչպէս որ ուզես դուն

Հոս այնպէս վարուէ ինծի հետ

Թէ ուզես

Հարուածէ

Խաբանէ

Ձարկ

Շանքէ

Թէ ուզես

Փռշիացուր

Անէացուր

Վերջին շիջը հիւլէիս

Թէ ուզես

Բաժինս այս երկրի

Ըլլայ քոզ

Լժկ քախիծ

Տառապանք

Տուայտանք

Ցաւ

Երկունք

Վիշտ

Արցունք

Թէ ուզես

Համբարս եւ ըլլայ քոզ

Գիշեր մը երկարող

Անվայսեան

Ուր որ ոչ մէկ շող պայծառ

Լոյս ցանէ

Վարդավի

Ոչ տրտուց

Ոչ մրմունջ

Ոչ բազմք

Միայն քէ

Վերջ տակէ

Ամէն հայ

Որ ծնի

Թող ծնի

Պապերուս հրեղէն ագիով

Այ քաւ է քափառիլ

Պետուին իբր հողագութի

Թէ

Հարկ է

Մեր հայկեան կաւ քաղիով

Տիրելու

Մեր գերուած

Հողերուն

Լիճերուն

Մասիսին – պատրաստ եմք

Պատրաստ եմք

Ըսելու աշխարհին

Մէկ անգամ եւ ընդմիջտ

Խօսքը մեր վճռական –

Զկան ստակ

Օրէնքներ քափածոյ

Կայ ճանւ – իշաւունք...

ՎԱՐԴԱՆ ԶՕՐԵՆՑ

ՎԱՍԻԼԻ ԳՐՈՍՄԱՆ

« ԲԱՐԻՆ ԸՆԴ ՁԵԶ »

*Մեր հախարղ թիւով, Նշմարենքու բաժնին մէջ, ան-
զբաղարձած էինք Վասիլի Գրոսմանի զեպին ընդ ձեզ
գրութեան: Հետագայ էջերուն կու տանք ինքնիք մէջ ամ-
բողջ հատուած մը, որ ոսւս զբաղէալ մեն թափանցու-
մով կը խօսի մեր ժողովուրդի հաղարմեայ նկարագրին
մասին ու հիասքանչ բառերով կ'ընդգծէ կենսայորդ աւ-
կառուցանող անոր ոգին:*

Մարդը երկրի վրայ հազարամեակներէ ի վեր աշխատում է
անխնայ, ստեղծում առարկաներ եւ հոգեւոր արժէքներ: Մարդու
ստեղծած շատ քան սերունդներին հիացնում է իր նրբութեամբ,
պերնաշուքութեամբ, բարդութեամբ, խիզախութեամբ, փայլով,
շուքով, խելքով. պաշտելով:

Բայց մարդու ստեղծածներից ամէկ մի քանիսն են կատար-
եալ, եւ դրանք առանձնապէս շատ չեն, այդ իրօք կատարեալ ստեղ-
ծագործութիւնները նշուած չեն ո՛չ փառանքալութեամբ, ո՛չ փառ-
քամութեամբ, ո՛չ էլ չափից դուրս նրբութեամբ: Կատարեալը յա-
նախ դրսեւորւում է մեծ պաշտի բանաստեղծութիւններում: Թէեւ
նրա բոլոր բանաստեղծութիւնների վրայ կայ համաքի կնիքը,
բայց միայն երկու-երեք բանաստեղծութիւնների մասին կարելի է
ասել՝ դրանք յիշատի կատարեալ են: Այս խօսքերին այլեւս ոչինչ
պէտք է աւելացնել: Կատարեալ կարող է լինել երաժշտութիւնը,
երաժշտութեան մի մասը: Կատարեալ կարող են լինել մաթեմատի-
կական դատողութիւնը, ֆիզիքական փորձը եւ ֆիզիքական տեսու-
թիւնը, իմացաբիւրի պտուտակը, խառատի տաշած դետալը, ապա-
կեցործի ջրեւէ աշխատանքը, բրուտի ստեղծած սպիտակը:

Ինձ թւում է, որ հայկական հին եկեղեցիներն ու մատուռնե-
րը կատարեալ ստեղծագործութիւններ են: Կատարելութիւնը միշտ
պարզ է, միշտ բնական, կատարելութիւնը էութեան ամենախառ-
բնկալումն է եւ նրա ամենալիակատար արտայայտութիւնը, կատա-
րելութիւնը նպատակին հասնելու ամենակարգ ուղին է, ամենա-
պարզ ապացոյցը, ամենավառ արտայայտութիւնը: Կատարելու-
թիւնը միշտ նշուած է դեմոկրատայնութեամբ, կատարելութիւնը
հանրամատչելի է:

Ինձ թւում է, որ հայկական հին եկեղեցիներն ու մատուռնե-
ցականը, որ կատարեալ երաժշտութիւնը մատչելի է ոչ միայն
մարդկանց, այլեւ գայլերին, դելֆիններին, լարտուներին, գառ-
տերին, որ կատարեալ բանաստեղծութիւնը կարող է յուզել նոյն-
իսկ կոռավար, անզգամ կնոջ սիրտը:

Հայկական հին եկեղեցին իր պարզ կերպարով ասում է, որ

digitised by A.R.A.R.®

իր պատերի ներսում ապրում է հովիւների աստուածը, գեղեցկուհիների, գիտնականների, ծեր կանանց, դիւցազունների, ֆարտաշների աստուածը. բոլոր մարդկանց աստուածը:

Գա իսկոյն եւեթ հասկանում ես. հենց որ հեռուից, լեռնային թափանցիկ օդի միջից տեսնում ես լեռան վրայ կանգնած եկեղեցին՝ պարզ, ինչպէս Նիւտոնի միտքը, ջահել, ասես ոչ թէ մէկ ու կէս հազար տարի առաջ. այլ հենց երէկ է այստեղ վեր խոյացել՝ մարդկայնօրէն աստուածակերպ, աստուածայնօրէն մարդկային: Այդ եկեղեցին այնքան բնական է ու մանկականօրէն այնքան պարզ, որ թուում է, թէ երեխան է պատրաստել բազալտէ ֆառակաւսիներէ: Այդ եկեղեցիները կատարեալ են, բայց իմ սրտում այն զգացումն է ստեղծուել, որ այդ կատարեալ եկեղեցիները կառուցած հայերի մէջ ապրում է հեթանոսութեան ոգին:

Ինձ այդպէս է թւում: Ես հաւատացեալներ չեմ տեսել ո՛չ զիւզում, ո՛չ ֆաղափում, բայց ես տեսել եմ ծիսակատարների: Հաւատացեալներին զգում են, այլ ոչ թէ տեսնում եւ լսում: Ես զիւզելում տեսել եմ բազմաթիւ ծեր տղամարդկանց ու կանանց եւ նրանց մէջ հաւատ չեմ զգացել:

Հայաստանում հեթանոսական տաճարների բազմաթիւ աւերակներ կան: Այդ տաճարներից ոչ մէկը չի պահպանուել, չի դիմացել երկու հազարամեակի փորձութեանը: Բայց հեթանոս ոգին տակաւնուել է, հեթանոս ոգին չի աւերուել, դիմացել է հազարամեակների փորձութեանը: Այդ ոգին զգում ես ճիշդ այնպէս, ինչպէս եւ քրիստոնէութեան ոգին: Դա զգում ես ոչ թէ ֆարսքի, ոչ թէ խօսքի, ոչ թէ ազօթքի մէջ: Ես հեթանոս ոգին զգացի այն բանում, թէ ինչպէս են հայերը զինի խմում, միւս ուտում, հաց քիտում, ծէսեր կատարում, եւ նրանց ֆայլածօրում, նրանց երգերում, նրանց ծիծաղի մէջ զգացի հեթանոս ոգին, թէ եւ հայկական եկեղեցիները հիմնալի են, իսկ հեթանոսական տաճարները՝ աւերած:

Էջմիածնի տաճարի խորանի տակ մի փանի տարի առաջ յայտնաբերուել է հեթանոսական մի հիմնաւորք մեհեան: Պեզումների շնորհիւ գտնուել է բազալտի ամրադրական ժայռակտորից ֆանդակած մի հսկայական զոհասեղան: Դա մի մուշլ, տափակ կաթսայ էր, հատուղով բացած կոշիտ ճոռիկներով՝ արեան հոսքի համար: Զոհասեղանի չափերը շատ մեծ են. կարծեմ ժամանակակից ամենագոր ֆարքիչը, տանկն իսկ չի կարող տեղից շարժել: Մտաբերկրեայ նկուղի ֆարէ մշուշի մէջ ամէն ինչ շնչում է հնազարեան խստութեամբ: Ինչպիսի՞ զոհեր են մատուցուել այս մուգ ֆարի վրայ, ո՞ւմ արիւնն է հոսել այս ճոռիկներով: Երիտասարդ, լուսաւորուած ու կրթուած միաբանը, որը մեզ գաղտնի բերել էր այս հեթանոսական մեհեանը, խորամանկօրէն եւ խելացիօրէն ժպտում է: Զարմանալի խորհրդանշիչ է. քրիստոնէական տաճար՝ կանգնած հեթանոսական մեհեանի վրայ: Երբ մենք բարձրացանք վերեւ՝ տաճար, խորանում մի սեւաշ, գէշ կրօնաւոր կնիւմ էր մի մանկան: Զայտ ձեռքում աւետարանը բռնած, կրօնաւորը ցօղմամբ իջեցրել էր մկրտութեան արծաթէ արագանի մէջ, աջ ձեռքով աւերք չուր էր ցօղում նորածնի վրայ: Կրօնաւորն արագ, երգեցիկ

ձայնով կարգում էր Սուրբ Գրքի խօսքերը, մա ռաֆերը յենել էր հեթանոսական սևի զոհանդամին: Հեթանոսական մեհեանի ոօքե-
քը կիտած կամարը դարձել էր քրիստոնէական խորանի հիմքը: Կաթողիկոսների սերունդը, որոնց անիւնները քաղուած են տաճա-
րի մուտքի առջև, մարմարի տակ, իրենց եկեղեցական ծառայու-
թիւններն են կատարել, փառաբանել Քրիստոսին, չհասկանալով.
որ իրենց ռաֆերի տակ մոայլօրէն ընկած է հեթանոսական զոհա-
ֆարը...

Բայց հեթանոսական ոգին չի դադարել, չի մեռել, այլ ապ-
րում է հայկական գիւղերում, ապրում է գիմովցած, հին պատ-
մաքիւններում ու երգերում, ծերերի սկիպտիկ իմաստութեան
մէջ, խանդավառների կատաղի պոռթկումներին, սիրահարների յան-
դըրճութեան մէջ, պառաւ կանանց քարեհագի դատադաքիւննե-
րում, խաղաղի եւ դեղձեմու փառաբանութեան մէջ, կրճատ հաւա-
տարմութեան մէջ այն քանակին, որով ոչխար են մօրթում, եւ ժա-
ղովրդական իմաստութեան մէջ, որն իր հազարամեայ փորձը կու-
տակել է ոչ թէ Սուրբ Գրքով, այլ ծանր կեանքում, ուրախ գա-
ւաթի, կնք գրկի մէջ:

Հեթանոսութեան ոգին դրսևորում է ոչ միայն խաղաղի
այգիներում եւ արօտավայրերում: Նա ներկայ է նաեւ գիւղական
խրճիթներում, որտեղ երբեք չես տեսնի սրբապատկերներ, որտեղ
չկայ հեգուքիւն, որտեղ ծերունիները խմում են խաղաղի քունդ
օղի եւ քանակի շագանակագոյն ոսկի: Հեթանոսութեան ոգին
հասնում է Աստուծոյ տան դռներին, որտեղ սօն օրերին գաւառակներ
են բերում, ափշօր ու հաւ են բերում, այդ խեղճներին մորթում եւ
կեղեցու դրան առջեւ ի փառս քրիստոնեայ Աստուծո: Գրեթէ բա-
լսք՝ եւ գարծող, եւ արգելանցի վերածուած եկեղեցիների քա-
կում, հաղը ռազմուած է զոհուած կենդանիների արիւնով, այնտեղ
փռուած են հաւի գլուխներ, փետուր ու փետրամագ: Մատաղի հա-
մար բերուած կենդանիներին հենց տեղն ու տեղը, եկեղեցու մօտ,
եփում են կրակի վրայ եւ տեղն ու տեղն էլ մատաղի մսով հիւրա-
սիրում անցորդներին:

Հեթանոսական ոգին ապրում է մագաղաթի վրայ գրուած
եինաւորք, հազարամեայ գրքերում, որոնք մեկնաբանում են հե-
լիոցեմորիզմը, երկրի կլորութիւնը, սիրոյ հմայքը: Այդ գրքերը
գրուած են այն ժողովրդի լեզուով, որ երկրի վրայ ապրել է մի
քանի հազարամեակ, քրիստոնէութիւն ընդունել ռուսներից 600
տարի առաջ, բայց պահպանել է Քրիստոսի ծննդից շատ ու շատ
տարիներ առաջ գոյութիւն ունեցող հեթանոս ժողովուրդների ի-
մաստութեան, վեհութեան, քարութեան յուշը: Այդ յուշը հայե-
րին ազատել է կրօնական անհանդուրժողութիւնից, փամատկզմի
դաժմաութիւնից:

Իսկական բարութիւնը օտար է ձեռին եւ ձեւապաշտութեա-
նը, անտարբեր է ծէսով, սրբի պատկերով առարկայանալուն եւ իր
հաստատումը չի որոնում դաւանանքի մէջ. իսկական բարութիւնն
այնտեղ է, որտեղ կայ մարդկային բարի սիրտ:

Վ. Գ.

ԵՒ... ՓՈՒՌԸ ԺՊՏԵՅԱԻ

Միջնակարգը յաջողութեամբ կ'ուսարտէր Սերոբ, որուն առջեւ՝ սակայն՝ յաւիտենապէս կը փակուէր լոյսի ճանապարհը, երկու հսկայական տրոփանքներով։ Սերոբին հօր խորվիրապ ազիտութիւնը եւ պոռոտ, կործանիչ ազահուութիւնը։ Եւ այս անակնկալ, յանկարծական փոփոխութիւնը, իր կեանքին մէջ, ահաբեկիչ ըլլալու։ Հափ ծանր եկաւ Սերոբին։ Լախտի զօրաւորագոյն հարուած մը կարծեալ ըլլալու։ Եւ մեղա՛ մնաց։ Ձեռքէն ոչինչ եկաւ։ Անրեկանելի այդ վճիռը, վառնդի, արձակուած էր զգրապոյն ատենանէ մը։

Տասնըեօթը նոր թիւակոխող Սերոբը աշկերտ դարձաւ իր հօր փութին։ Ուժեղ եւ բնաւ չընկճուող կամք մը մնաց Սերոբ աշուհանդերձ, որուն հոգիին եւ մաքին մէջ անջինջ դրոշմուած էր իր ուսուցիչին սա խօսքը։ Վա՛նք տառապանք եւ դառնութիւն լարուած եւ անզուլ աշխատանքին մէջ կը լուծուին, կը փարատին։

❖

Սերոբին հալըը արտասովոր լուսկեայ մը։ Նաեւ՝ չոր։ Ետտ չոր մը։ Տարինըրով նոյն երաշտը։ Ձափի զգացում։ Յաւելաւ բացակայ։ Բարկացած կ'ուղէիք տեղեկ գինք, հեշտ էր, չափազանց հեշտ։ Գաւաթ մը ջուր խմելու չափ կամ հասուն պանան մը կեղուելու պէտք բան մը։ Վա՛ հացին երեսը լաւ չէ կարմրած ըսելը նախատինք մը կը համարէր ինք։ Սահակին (Սերոբին հօր անունը) բարկանալուն, ինքնիմէ ելլելուն պատճառը կամ պատճառները ոչ ոքի ծանօթ էին։ Բնաւ չէին բռնուեր։ Ոչ կեղբոնաճիւղ մըն

էր Սահակ եւ ոչ ալ կեղբոնախոյս մը։ Բացառիկներու մէջ բացառիկը։ Վերապահ։

– Ձկնուկիքին մէկը, «Սէքէթ» մարդ, – խոր ընդզգումով յաճախ կ'ըսէր թաղի խանութպան Մարտոն, – երբ ամէն անգամ Սահակին մասին խօսք ըլլար, խօսք բացուէր։

Բոլոր յաճախորդները, առանց նոյնիսկ «յարգելի» բացառութեան մը, իրենց բաժին լեղին առած էին։

Իսկ Սերոբ՝ բոլորէն աւելի։

– Դուն գործնու խառնուելու իրաւունք չունիս։ Դուն վճիւր ես որ։ Փութիս մէջ դործաւոր ես, չէ՞։

Անխօս կը մնար Սերոբ։ Բերանը շաա քիչ անգամ կը բանար։

Սահակ, իր «սիրալիք» արարքներով, թաղեցի կիներու բերնին մէջ անսպասելի էր դարձած։ Անոր հասցէին՝ ոչ մէկ դրական բառ կ'ուղղուէր։ Միշտ՝ անիծակուտ խօսքեր։

– Քա՛, ինչ անզգամ մարդ է։ Քա՛, երեսին խիպ չէ մնացեր։ Մազ-մօրուք ճերմկացած մարդ։ Այսքա՛ն անզգամութիւն։ Անամօթ մարդ։ Ձեռք ուղեր լըսել իր անունը։ Անունը թող դուրսը ուտէ։ Արեւ չտեսնէ։ Գետնին տակը անցնի։

❖

Ի վերջոյ, թաղեցիք՝ առանց թուշթի եւ մատիտի՝ հաշուութեան գաշնադիր էին կնքած «սէքէթ» փոսպանին հետ։ Տեսակ մը համակերպում։ Ուրիշ ճամբայ ալ չկար։ Թագը շուկայէն բաւական հեռու էր։ Անոր լեղի, յոյժ լեղի ելոյթներուն անանջ կախող չկար

այլեւս: Որովհետեւ անոնք, այդ լեզի եւ լոյսները, ա'լ առաջուան պէս չէին ազդեր: Բնաւ: Բոլորին ականջները, որոնք Սահակին հոգի կճող խօսքերով յզգացած էին, իրենց զգայնոտութիւնը վրայ տուած էին: Բայրօովին:

— Պարապ թիթեղի պէս թող ձայն հանէ, — կ'ըսէին թաղի մարդիկը —, մենք Սերորին զխաթեր՝ համար է որ փութորոտք կը կոխենք: «Նուրպան» թող ըլլայ այդ մեղր ու շաքար տղուն:

Փութին անշնչելի մթնոլորտին մէջ՝ կարծես՝ Սերոր համարացած էր: Հօրը բառով զգործաւորն Սերորը ձայն-մունչէր հաներ: Լեզուն կտրած էր:

Արդարեւ, որ կ'անցնէր, որ Սերորը բռնէ մը իսկ ուրախ չէիր կրնար տեսնել: Բռնէ մը իսկ չըթունք չըթունքի վրայէն վերցուցած շունէր:

Այսուհանդերձ, քիչ կը պառակտէր, որ Սերոր, օրուան մէջ, հեղ մը՝ քիչիկ մը համարձակութեամբ մտտեանէր հօրը անմարտելի եւ խիստ զատապարտելի ընթացքը:

— Յանցաւոր ես, հայրիկ: Քուկը է յանցանքը, հայրիկ:

Այս խօսքերն ալ զուսպ, նոյնիսկ անոնց շնչոյ:

Սակայն, հոյ արտադրող Սահակը իր փափկանկատ տղայէն իրեն եկած այդ կարճիկ եւ արդարացի գիտողութիւնն անպամ չէր ընդուներ: Ձէր կլլեր: Եւ կ'ըլլէր՝ մեծ-մեծ պտխարակելու իր միակ դաւակը, իր ստրկացնող ազահու-թեան նոխաղ դարձուցած Սերորը:

— Դուն դրո՞ծիս մի՛ խառնուի՛ր հայր վանք: Իշտ' զլուխ: Հիմա կ'ըլլի՛մ՝ ճեղ ոտքիս տակը կ'առնեմ:

Սերոր կը լռէր: Սերոր զիտէր որ, այս պարագային եւ նման բոլոր պարագաներու, իրապէս ոսկի է լռելը: Շատ հասարակ սովորութեան մը պէս բան մը եղած էր լռութիւնը, չիտելը, Սերորին մօտ: Յարգանքի սահմաններէն բազմաթիւ փարսախներով հեռու էր: Եւ այդ քար լռութիւնը Սերորին հոգին կը կըրծէր, կ'ուտէր: Ինչ որ յաճախ ըսել կուտար իրեն՝ դառնալին եղանակով մը.

— Կեանք է առիկա: Ինչը անիծեմ: Գրողը տանի: Ամէն օր խայտառակութիւն:

Սերոր՝ ընկճուած՝ անտրամադիր էր միշտ: Սակայն, զործէն ետ կեցողն ալ չէր: Բան մը, որ իրեն մոռցնել կուտար առօրեայի մշտապէս տաղաւեր: Որովհետեւ, աշխատանքը նուիրական, անխոխաբիւնելի այն բաւասանն է, որով մարդս կը ձերբազատուի գորշ-գորշ մտածումներէ եւ հոգեկան դառն-դառն վիճակներէ՝ խժալուր միջավայրէն զայն ան-ջատելով, վեր պահելով:

Սերոր կեանքին իմաստը աշխատանքին մէջ գտած էր:

Անձայն ու լուիկ կ'աշխատէր: Վասնզի, Սերոր զիտէր թէ իր չոր-ցամաք հօրը հետ ոչ ոք կրնայ ապրիլ, ոչ ոք կրնայ աշխատիլ՝ մանաւանդ: Գործաւորը տան ծառայ չէ, — կը արամաքանէր Սերոր —, որուն՝ քիչէն շատէն՝ կըրնան ուղղել մէկ-երկու դժուարամարտ բաներ: Արժանապատուութիւնը իր խնդրանքն պահանջը ունի:

Բայց, փոսպանութեան մէջ, տարիներով կեանք մաշկեցուցած Սահակին համար, կարծես րնաւ վարկաբեկիլ չէր թուեր, երբ գործաւոր մը իր քով չկարենար շարաթը դուրս հանել: Ինք գոհ էր անկէ: Շատ դոհ: Ինչո՞ւ գոհ չըլլար: Ձէ՞ որ այսպէս աւելի լաւ է, — ներքին դոհունակութեամբ կը հաստատէր Սահակ —, գործս երեսի վրայ չի մնար: Սերորը ինչո՞ւ է: Ան թող աշխատի: ճշտարար պէս: Ես ինչպէս որ մեծցայ, ան ալ թող այդպէս մեծնայ:

✽

Նահանջի դիմող աշունը չքանալու վրայ էր արդէն: Երկինքը՝ սեւաթուր ու վար իջած ամպերով լեւդ-լեցուն, փողոցին մէջ, խառնող եւ արագաբաւ հոյ մը կար, որ մերթ փոռէն ներս կը մտնէր եւ օճախին կրակները իրարու կ'անցընէր: Եւ յետունէն վեր Սահակը կը չղայնանար, ինքզինք կ'ուտէր, այդ պահուն, Յաճախորդները, մօտալուտ, ան-

միջակա մեղատարափի մը վախէն բռնուած՝ կ'աճապարէին, զգալապէս: Եւ աակալան, յաճախորդները զոհացնել պէտք էր:

Այդ օրը, Սերոբ՝ կշիռքին ետին տնցած՝ բողբ մը կանգ շուռաւ: Հանգիստ շուռեցաւ: Փռուէն նոր ելած տաք հացերը կը փռէր, կամ մաս մը կշիռքի կը դարնէր: Հացերը շուռով կը սպտռէին: Ձարմանալի բան. Սերոբի զէմքին վրայ ժպտ մը կար: Թեթեւ ժպտ մը: Հաղիւ ինքզինք զգացնող: Յաճախորդներն ալ քիչով մը օւրախ կ'երեւէին:

— Երանի՜ր ամէն օր այսպէս ըլլար, — կ'ըսէր Սերոբ իւրովի: — Միթէ աշխարհ փոփոխ պիտի դար:

Արդեօք փռապան Սահակը փոխուած էր: Մինչեւ վերջ աշխարհ պիտի մնար: Զէր պոռթկացեր տակուին: Գերազանց ճիշդով մը հաց արտադրելու կը ճգնէր:

Այդ ամբողջ ցերեկին կանգ շուռաւ զրեթէ: Անդու շարժումի մէջ էր: Իր պատգամատած խմորի դուռները կը բռնար անդադար, արագ-արագ անթրոց-նետու վրայ կը շարէր եւ հտը շտապով փռուէին կու տար: Այսուհանգերմ, չէր մոռնար, նաեւ, երբեմն շէշ նայուածք մը նետելու կշիռքին կողմը, որ շրջալի թէ հացով լի նմարը քիչիկ մը կ'էր: Սերոբին «անճարակութեան» զոհ երթայ: Քրտինքը աղբիւրի պէս կը հոսէր Սահակի մարմնին բոլոր կողմերէն: Ամբողջ հապուտները ջուր էին կտրած: Կարծես լուսացարար կիւնը զանոնք լուսացքի տաշտէն նոր հանած ըլլար: Վայրկեանը մէյ մը, ճակատը եւ երեսը ալ կամ ձախ թեւովը կը սրբէր: Զորցած ցախերու զէրները իրարու ետեւէ կը հառնէին տապալ:

Երկաթ ըլլար, հաւատացէ՛ք, այդ դժոխք կրակներուն առջեւ: Հալէր էր մինչեւ հիմա: Բայց, Սահակը՝ իր ջրահոսիկ վիճակին անտարբեր՝ հաց կ'արտադրէր: Իր դոյնութեան միակ իմաստը:

Եւ, այս շարաշար աշխատանքը՝ մինչեւ ուշ երեկոյ.— խմոր բանալ՝ փռուր նետել:

Ծրտաշունչ հովը, տակաւին, փոքրցներէն կը սուլէր, անարգել կ'երթար: Փռուր յաճախորդ չկար այնքա: Սերոբն ալ, պոչիկ մը առաջ, ձգած՝ դացած էր: Սահակն է որ դժուարաւ վար կ'անէ փռուին աղմկալարոյց զտարապաշն եւ բանալիի կը դարնէ զոյդ կղզանքները, առանց երբեք դրան վրայ սովորութիւն դարձած խաշանիչը ընել մոռնալու:

Փողոցը անմարդ էր: Սահակ տան ճամբան կը բռնէր, զլիսիկոր եւ դանդաղութեամբ: Տունը, այդ պահուն, շատ հեռու թռեցաւ Սահակին: Պիտի հասնէ՞ր:

Այդ զիշէր, իր ամէնօրեայ դաւաթօղին շառաւ: Սահակին շատ ծանր կողատուպէ բռնուած ըլլալը կրկնապէս ըստուգուեցաւ: Եարաթէ մը պակաս շինչեց:

Երեսունիկ զոհերը նոր անցած Սերոբը, որ ալ հիմա փռուին տէրն ու տիրակալն է, մանրակրկիտ քննութենէ մը կ'անցնէ զայն եւ անհրաժեշտ կարգ մը սրբազրութիւններ կ'ընէ: Միախելող ծխնելիյզը մաքրել կու տայ, մոխիւն ու ծուխն սեցած եւ տարիներու կեանք ունեցող սարդոստայնները, որոնք սեւ, անթափանց վարապոյրի մը պէս ողջ ձեւ դուր եւ բոլոր պատերը կը ծածկէին, վար կ'անուէին: Անոնք, մինչեւ քիչ ժամանակ առաջ ալ, մաս-մաս թեթեւ հովէ մը երբեմն վար կ'իյնային՝ մրտնդով հացերուն երեսը եւ կամ յաճախորդներուն դոյնն ու զէմքը: Բան մը, որ շատ յաճախ պատճառ կը դառնար յաճախորդներու արգար տրտունջներուն եւ Սահակի անհարկի պայթուցիկ բռնկումներուն:

Եւ մութ պատերը՝ կրաշուրի երկու-երեք երեսներով՝ ճերմակ դոյն մը առին:

Ժառանգ-փուռը, Սերոբին փուռը, իր նոր տիրոջ պէս, յաճախորդներուն միշտ ժպտեցաւ, այնուհետեւ:

ՊԵՏՐՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

1965, Գաւթիկ

ԿԻՍՎԱՏԱՐ ԳԵՂՈՆ ՅԱՂԱԳՍ (ԱՊՐԱԳԱՅ)

«ՄԴԱՔԱՐ» ԳԻՆԵՏԱՆ

– «Ճաշարանն իսայեա՛մ, նմանը չկա՛յ...»
 Ինչպէս գովեցին: Գացի: Ներս մտայ.
 – «Հանեցե՛ք, ըսի, բերել ինձ երշիկ»:
 Բերին հաս մը ճիշդ, արեւըս վկայ,
 ձկնոքիս չափով: Այդ ի՞նչ էր. հաշի՞շ...
 – «Հա՛ւ» ըսի: Բերին: Երբ կերայ կաշին,
 Պնակիս՝ մնաց կմախքը ճաշին.
 Իսկ ինձը՝ ճաշը կոկորդս մնաց,
 Զի հիմնովին այլ դուրս եկաւ հաշին,
 Որ գէր էր, իւզոտ ու պարտապանաց:

– «Վա՛յ, ես քո պապուն, ո՛վ խայեամ Օմար...»
 Զէ՛: Զըսի: Ինչո՞վ մեղաւոր ես դուն,
 Իմ դարեր անաջ ասրած գրչախաւր,
 Դա՛ւն խորասանցի երգիչ իմաստուն:
 Բայց այս ի՞նչ արշաւ ու գայթակղութիւն...
 Խործես կը բռնակի՛ն... Իսս՝ գարեջրատուն...
 Այլուր՝ ծաղարան նովա. ի ժընե՛ւ՝
 Յուցանակ մը մեծ՝ Լամարքին պանդակ,
 «Պանդակ»ը, խնդրեմ, անըւած քէն
 Արեւմտահայ իմաստովը լուկ...

Ճեմովայր, պուրակ, համալըսարան,
 Յուշապիւն, բըլուր, քանգարան, դպրոց,
 Պաղատայ, փողոց՝ դեռ կը հասկընամ.
 Բայց ինչպէ՛ս ձօնել քերթողի մանուան
 Վայրեր, ուր մարդիկ կ'ուտեն, կ'արբենան,
 Կը ննջեն ալ՝ ջուկ կամ միմիանց ի ծոց:
 – Գոյնգոյն լոյսե՛ր, տանե՛ր ոսկեգոծ
 «Ճաշարանն իսայեա՛մ...» հաւատացե՛ք, որ
 Դա՛ւն կը բանայի... «Արքային Հայոց»,
 Եթէ Պարսից Շահն ըլլայի մէկ օր:

Զ Օ Ն

Քերթող մեծանուն ու մեծաբանք,
 Պիտի գայթակղի՞ եթէ մէկն, յանկարծ,
 Դարեր հա՛մ, տեսնէ անունս՝ ... Օղափար,
 Այն ու ճախին մէյ-մէկ փուն տակառ,
 Գինեհաւ մը մութ ճակատին փռուած...:

Գա՛հրէ, 1965

ՕԴԱՔԱՐ

digitised by A.R.A.R.®



ՍՓԻԻՌԻԿԱԼԱՅ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՎԷՊԸ

ԵՒ

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԸ ՈՐՈՆՈՒՄԸ

(Զ. ՈՐԲՈՒՆԻԻ «ԵՒ ԵՂԵՒ ՄԱՐԻ» ՎԷՊԻՆ ԱՌԻԹՈՎ)

Սփիւռքահայ (*) Հոգեբանական վեպի ժանրի շէ գրուած համադրական,

ամբողջականի ձգտող գործ մը, որ ընդ-
գրկէր վերջին քառասնամեակի մեր

*) «Սփիւռքահայ»ը նախ ժամանակագրական սահմանադրում է, բնորոշող մեր վեպի վերջին շորս տասնամյակի գրականութիւնը. մօտաւարապէ՛ս, անշուշտ: Որովհետեւ եթէ 1922-էն սկսած «Հայրենիք» ամսագրին մէջ կ'ընկնէր վեպական տեղին պատկանող էջեր (պատմաւածք, վիպակ, նոյնիսկ վեպ՝ յայտարարեալ թիւերով)՝ սփիւռքահայ վեպի իսկական ծնունդը բերելու կարելի ըլլալ տեղաւորել 1929-ի շուրջ: Արդարեւ այդ տարին է որ լոյս կը տեսնէ Շահմաթի «Նահանջը առանց երգիքի, նաեւ երկրորդ գիծէ ուրիշ գործ մը՝ Զ. Որբունիի «Փարձ»ը – երկուսն ալ «Փարիզի Տօց» երիտասարդ սերունդին երախտայրիքն:

Միւս կողմէ, «սփիւռքահայ» քննարշումը, ժամանակագրականէն անդին, կամ ժամանակագրականին իսկ առնչարար, կը թելադրէ անշուշտ մասնաշաղկապ հոգեխառնութիւն մը – տարրական հաստատում, որում վրայ չ'արժէր ծանօտանալ, բայց որ կարեւոր ենտեւամեմբեր կ'ենթադրէ. այսպէս, «սփիւռքահայ» քննարշումէն դուրս կը մնամ, զոմէ այս մեզ առումին մէջ, աչ միայն «Մնացորդաց» մը, «Նաւը կ'ըսան վրայ» մը

(նախ-ապրիլեան գրականութիւնը շարունակող գործեր), այլ նաեւ «Սփիւռքի ճիւղեր» մը, «Անմեղութիւն» մը, «Յիշումներ» մը – գործեր, վիպակի տեղին պատկանող՝ բառին լայն տարածքով, որոնք, բնականօրէն անբաժնի պատահութիւն, Սփիւռքի ներկայէն չեն առած այսուհանդերձ իրենց էստաբլիշմէն, չեն պատասխաներ սփիւռքեան կենսապայմանի (Քան-սիւն) դրած հարցերուն, տագնապին:

Տարրական այս ընդգծումներէն ետք, մեր գէտ կը մնան հայրիւրի մօտեցող թիւ մը անուններ, որոնք վիպակ են փորձած սփիւռքի վեպի բառաշարականին այս կամ այն պահուն, զոմազան ծելերու տակ, երատարակուած իբր առաւ-ձին հասար կամ պարբերականի մը էջերուն մէջ: Պատահականին, խոտանին քսածինը՝ առատ, անշուշտ, այս թիւին մէջ, որում կարեւոր մեծա-մասնութիւնը արդէն միայն պատմաւածէնէն կու գայ: Մասնաւորելով վեպին՝ հասնեալ մը միայն այդ անուններէն կ'անգատուին բանակի այս տի-րապետութենէն, եւ աւելի կամ նուազ ուշադրաւ իրագործումներով՝ կը կազմեն միւր լեզուի գե-րականութեան պատմութեան, որ պիտի գրուի վաղը:

ամբողջ վիպական վտատակը. նախ, քանակին տիրապետութեանը մէջ, ճշգէշ տնոր տեղծագործական այլեւայլ ազդեցութիւնները (հոգեբանական, ընկերային, քեֆիֆ), կրած ազդեցութիւնները, դժբախտոր ձգտումները: Ըսէր իր խօսքը, վերջապէս, անոր որակի մասին, անոր ճակատագրի մասին:

Այս գրութիւնը կազմող քանի մը խորհրդածութիւնները, հետեւ՝ ամբողջականի ձգտող նման մտահոգութիւններէ, կ'առաջագրեն միայն ընդդէմ Սփիւռքի վէպին երեւոյթներէն մէկը, եւ Թուրքիայի գումարէ մը համապատասխան առարկայական եզրակացութիւն մը հանել: Խնդրոյ առարկայ կրեւոյթը վէպին էութիւնն իսկ կը հետաքրքրէ, եւ կրնայ բանաձեւուիլ իբր վէպին ներկայակամութեամբ աստիճանը: Թէ ո՛ր շափով Սփիւռքի վէպը կը հետեւի տեսական այս կամ այն հասկացողութիւններուն. թէ՛ ընթացիկ, ընկալեալ հասկացողութիւնները ո՛ր շափով արդիւնաւորած են վիպական սեռը մեր մէջ, անցնող տասնամեակներու ընթացքին. եւ թէ՛ ո՛ր շափով տակաւին տեսիլ են տեսնել կրեւոյ՝ գալիք հաւանական երկերու վիպական կառուցուածքը տեսական իրենց կմախքին վրայ, յարմարելու մեր հաւաքական հոգեբանութեան նորայայտ ձեւերուն: Ահա, իր պարզազոյն բանաձեւումին մէջ, հարցը՝ որուն մասին այս տողերը պիտի փորձեն անսակէտ մը արտայայտել:

Ձանց առնելով, ուրեմն, ամբողջական սեւեռումը 1929-ի շուրջ ծնունդ առնող այս շարժումին, կը մնայ որ տարագրէն ճշգրէն անոր ծնունդի ընկերային-հոգեբանական պայմանները. նաեւ, կարելի չափով՝ կրած ազդեցութիւնները, գրական հասկացողութեան տեսակէտէ, եւ տնոց համայնի արտայայտութիւնը հանդիսացող վիպումի ձեւը: Հետաքրքրական պիտի ըլլար, արդարեւ, հարց տալ թէ Շահնուրի մը, Հ. Զարաֆեանի մը, Սարաֆեանի մը, Ծուր շահնուի մը, Փոլատեանի մը վէպերը,

խօսքը մասնաւորելով Փրահսահայ վէպին, ինչպիսի՜ հոգեբանական-ընկերային հակազդեցութիւններու եւ դիպարուեցողական հոսանքներու արտադրութիւնը կը հանդիսանան, շեշտուած ներքին տարբերութիւններէ անդին:

Ինչ կը վերաբերի սփիւռքի վէպին ծնունդի հոգեբանական-ընկերային պայմաններուն, համեմատաբար հետաքրքրական եւ արդիւնաւոր աշխատանքի մը նիւթը կրնան կազմել անոնք, նոյն իսկ լայն աստիճանաչափի վրայ. որովհետեւ սփիւռքի հոգեբանական վէպը, իր աղետագոյն նմաններուն իսկ մէջէն, այդ պայմաններու սեւեռումէն առած է իր նիւթին, ներքին նշանակութեան քառարները: Այսպէս է որ Շահնուրի մը, Սարաֆեանի մը, Զարաֆեանի մը գործը, ինչպէս եւ այդ վէպին տիպական միջինը ամբողջ՝ զիրենց ծնող դերագոյն տալանալը միայն բերած են վիպումի. նաեւ, սեւեռելու համար այդ պայմանները, բաւ պիտի ըլլար խօսեցնել Շահնուրի Փիւն-Պետրոսը կամ Զարաֆեանի նոյնանունը հերոսը. կամ որեւէ մէկը Փոլատեանի ուրուսյին կերպարներէն: Հարկ կ'ա՛յ կրկնելու թեմաները՝ վիպականացուած այդ հաւաքական տաղանային. մեռած, ամբողջութեամբ ներանձնացած, յուշ դարձած անցեալ մը, որ ամէն վայրկեան կը ժխտուի, ամէն վայրկեան վերյառնելու համար սակայն, նոր կենսաձեւի մը մէջէն. բնդհարում՝ ներքինի եւ արտաքին, անցեալի եւ ներկայի, առհասարակ եւ օտարամուտի միջեւ - ահա պարզազոյն բանաձեւումը մեր վէպի սեւեռած տալանային:

Կարելի է անշուշտ երանդաւորել տալ նահանջողներուն նահանջը, որբացողներուն որբացումը, պայքարողներուն պայքարը. փերը յիշուած քանի մը անունէն անդին, մինչեւ Սեմայի մը, Ասլանեանի մը (Լուս) եւ ուրիշներու կէս մոռցուած անունները՝ Փարիզէն, մինչեւ Միլին Արեւելքի (Պոլիս, Հալէպ, Պէշ-լուր, Գահիրէ, Էն.) դրողներէն եկած՝ վիպումները, յաճախ սահմանափակ՝ իբր շուրջ եւ ծաւալ՝ կը խօսին

մեղի նախ տալնապին տարբերակներէն. մէկը՝ յախուռն ուրացումով կը խեղդէ նահանջող մարդու իր ճիշդ, շխտտ֊վտնուած կարօտը. միւսը՝ կ'առարկաՊակնացնէ իր ներքին հակասութիւնը, հուզական իր որբութիւնը, եւ կեանքի նոր իմացում մը կը փորձէ հանել անկէ. հերբող մը, նուազ իմացապաշտ, նուազ վերլուծական՝ դրացականով թաթառուն մթնոլորտի մը մէջ կը վերապրի մօտաւոր անցեալ մը. հետաքրքրական պիտի ըլլար անշուշտ քննութիւնը այս բոլոր կեցուածքներուն՝ հանդէպ մեր կեանքի ու կենսապայմանի սկզբնական հակասութեան, մեծ ոճիրէն ծնած. անոնց տարբերութիւնները՝ Միջին Արեւելքէն մինչեւ Փարիզ եւ Ամերիկա. նաեւ պեղումը՝ անոնց անդիտակից պատճառականութեան ենթահողին: Այս բոլորը՝ անշուշտ անդին վէպի սահմաններէն: Այդ սահմաններուն մէջ, սակայն, ունինք ընկիւն հիմնական հաստատում մը. գրպա սեւեռում, որպէս քովանցալուծիւմ եւ իմաստ՝ այս վէպը հազարք է իր ժամանակին. գիտէ իր ժամանակը եւ կ'ապրի ամոր տագնապները:

Սակայն, արձանագրելէ ետք վերի հաստատումը ի նպատակ մեր վէպին, հարկ է մօտենալ ուրիշ հարցի մը. սկիզբը առաջագրերէն էինք քննութեան առարկայ դարձնել գրական այն ընդհանուր հասկացողութիւնը որու վրայ հիմնուած է սփիւռքի վէպը, վերական սեռի իր ըմբռնումն իսկ, անկախաբար իր նիւթէն ու բովանդակային իմաստէն. եւ այդ անշուշտութեամբ դնել հարցը՝ մեր վէպի ենթակայականութեան աստիճանին, նկատի ունենալով որ այդ ենթակայականութիւնը (սխալմէքսիվիթէ) ժամանակակից համաշխարհային վէպին կարեւորագոյն ուղղութիւններէն մէկուն տառնցքն իսկ է:

Վէպի ձեւական ըմբռնումի մասին այս հարցը՝ որովհետեւ սփիւռքի վէպը, վերական սեռի իր հասկացողութեան եւ ձեւական փնտառութեանը կալուածին մէջ, մեզ կը դնէ հիմնովին

ամբնական երեւոյթի մը առջեւ. որովհետեւ այդ վէպը, հրատապօրէն այժմէական իր բովանդակութեան, իր նշանակութեան մէջ, չի քայքայ սակայն, վէպի ըմբռնումի ու ձեւական նուաճումի տեսակետէ, իրեն ժամանակակից ա իր քիմիայ տակ ապրող՝ պէտք պիտի ըլլար ըսել՝ գրական առօրեայի կշռութիւն: Վերը ենթադրեր էինք, հոգեբանական-ընկերային պայմաններու ազդեցութեան կողքին, զուտ գրական ադապտացիոն ամբողջ դաշտ մը, որ նպատակաւ ըլլար մեր վէպի ստեղծումին. եւ հոս է որ կ'ընենք հիմնական երկրորդ հաստատում մը. մեր վէպը չի պատուարտուիր իրեն ժամանակակից համաշխարհային վէպի եւ ոչ մէկ հոսանքին վրայ. անկեղծութիւն ու փափաքելի պիտի ըլլար, աւելորդ է ճշդել, որ ան վերածուէր ամբողջ կրկնումի մը, արձագանքի մը. քայքայ միւս կողմէ առնուազն անաջատրիքի՝ է, որ, փարիզէն մինչեւ Պոլսո ու մինչեւ Պէրսոն, չորս տասնեակ տարի ապրած ըլլանք եւ ապրեցուցած ըլլանք մեր վէպը, անմիջական գրացնութեանը մէջ գրական համաշխարհային դաշտան հոսանքներու, առանց թաթախուելու ամէն օր նորոգուող անոնց ջուրերուն մէջ, առանց թափանցուելու անոնցմէ. տարօրինակ աջլուրութիւն: Եւ սերունդին անդրանիկ տնուններն են միայն, Շահնուր մը, Սաբաֆեան մը, Զարդարեան մը, որոնք առաւել կամ նուազ չափով կը փրկեն իրենց դործը նման մեղադրանքէ. առաջինը՝ ոճին շարունակել ջարակով, միւսները՝ իմացապաշտ որոշ հակումներով, որոնումով: Բայց այս վերապահումները չեն ազատեր ամբողջ սեռը, անկասկած: Ոչ միայն ժամանակի յառաջապահ վէպէն հետք է ան (Փրոսթեան կամ ձոյսահան ենթակայականութիւն, կամ զբոնադանցական վէպ՝ Քաֆեայի, Մարթի, աւելի ուշ՝ Քամիւի մը, Մարթի մը վէպերուն իմաստով, առանց հասնելու նոր-վէպին), ոչ միայն կը յաժենայ անդին, օրինակ, Փրանսական վէպի միջին եւ զգահպանողական՝ դիմերէն

(Ժփռ, Մարթէն տիւ Կար, Ռոմէն...), այլ կը մատնէ գրական-տեսական ամուր սկզբունքներու նեղացուցիչ բացակայութիւն մը: Կը բաւէ նշել, որ գրեթէ ուշինչ բառած կամ գրուած է Շահնուրի մը, Շուշանեանի մը, եւ գրեթէ առանց բացատրութեան ունէ վիպագրի ... Ընթերցումներուն մասին, վիպական սեռին. ոչինչ, կամ գրեթէ ոչինչ՝ տեսական իրենց բովանդակներու մասին. ախտանիշը, եթէ չի խօսիր գրադէտներու իսկ անունէն, ցոյց կու տայ ընդհանուր մտայնութիւն մը, որ աւելի կամ նուազ հասարակաց է վիպագրի ու ընթերցողի, եւ որ հետոյ է քննական ըլլալէ: Նոյնքան հազուադէպ է, որ վիպագիրները իրենց արտայայտութիւն տեսական հարցերու կամ իրենց գործի՝ իսկ մասին: Ահա ինչու՝ դժուարութեան կը մատնուինք, երբ, բնորոշ սահմանում մը տալ յաջողելէ ետք սփիւռքի վէպի հոգեբանութեան, ներքին նշանակութեան մասին, կը փորձենք նոյն այդ վէպին մօտենալ իր գրական սեռ, տեսականօրէն սահմանել: Աւելի դժուրին է խօսիլ, այդ տեսանկիւնէն, անոր բացասական դիմերու մասին:

Իսկ ի՞նչ են վիպումի այս աւելի կամ նուազ տարած հասկացողութեան դրական յատկանիշները: Տրուելիք բնորոշումը, կարենալ բովանդակելու համար մեր վէպին բոլոր վայրերն ու պահերը, պէտք է ըլլայ կարելի չափով լայն, առաձգական. առոր համար թեւեւ՝ առարկայական կամ արտաքին իրաւաւորութիւնն որակումը յարմարաւորին է՝ այդ վէպին ձեւական կազմակերպութիւնը յատկանշելու համար, որքան ալ բռնադրօսիկ թուի ան: Եթէ վայրեան մը մոտենալ փոքրաթիւ այն յաջողութեան համար, որոնք թերեւս վերջնականապէս ուղարկուած են իրենց վերինը, ու նկատի ունենանք միջին որակը սփիւռքի վէպին՝ դժուար չ'ըլլար հաստատել, որ սփիւռքահայ վէպը, միշտ իր միջին որակով, է տիպարը անժամանակ ու անհայրենիք սեռի մը, խառնուրդ՝ ինքնուրու տարի առաջ իր

ոսկիդարը ըրած իրապաշտ վէպին՝ մէկ կողմէ, եւ հոգեբանական աւելի նոր ախորժակներու - սահմանափակ -, միւս կողմէ. առաւել՝ փշուր մը սեռապաշտութիւն, յաճախ աժան, կամ իմացապաշտ վէպէն եկող քանի մը թոթովանք: Վերաբերողական իրապաշտութիւն մը, ուրեմն. իրերու արտաքին երեսէն ըզնուած, ընթացիկ ճշմարտութիւններ. իրար կանչող բառեր, խոսքեր, վերջումնական շարժումներ: Զուտ հարտաքին՝ գործողութիւն մը - մանրամասնութիւն մանրամասնութիւնն ուսուստող ընթացք (Շահնուր), անխուսափելի, ինքզինք կրկնող պատմութիւն, առանց հնարաներու հոգեբանական մասնակցութեան (Շուշանեան, Սեւան), ռատիկականի մօտեցող սրտիմաստով, նաեւ փաթեթիմաստով ծանր դէպքերու հոսանք (Փոյտտեան), եւն: Հարկ է թերեւս անգամ մըն ալ ճշդել հոս, որ այս բնորոշումները առաջին հերթին խնդրոյ առարկայ չեն դարձնել վերոյիշեալ անուններուն որակը. տուեալ մակարդակի մը վրայ անոնք յաճախ կը պահեն կարեւոր արժանիքներ - հետաքրքրականութիւն, գործողութեան կանոնաւոր դարգացում, տիպարներու պոնէ ուրուագծային սեւեռում - որոնք հակառակ թաւ չեն ստեղծելու առաջին կարգի վէպը, որ, զանազան ձեւերու տակ, միշտ ալ եղած է ինքզինք փնտրող վէպ մը: Եւ եթէ Սարաֆեանի մը, Շահնուրի մը, Զարգարեանի մը վէպը իր այս կամ այն օրհնել վայրեանին կրցած է ըլլալ այդ փնտրողութիւն վէպը, ապա կարելի չէ նոյնը ըսել մեր վէպի մասին ընդհանրապէս: Տիպարներու եւ հոգեբանական վիճակներու սեւեռումը նոյնքան յատկանշական է այդ ուղղութեամբ: Յաճախ մէկ-երկուքէ աւելի թիւով գլխաւոր տիպարներ, ընդհանրապէս երբորդ դէմքով վերբերուած. նոյնիսկ առաջին դէմքի կերպարը, եթէ գոյութիւն ունի, աւելի թափանցիկ չի դառնար մեղի քան միւսները, որովհետեւ դարձեալ իր շարժումները, բառերը, մէկ խօսքով հակադրեցութիւնները կը տեսնենք միայն. կամ գրեթէ. որով-

Հետևել ինչ ալ, դուրսէն դիտուած միւս
հերաններուն պէս, միամակարդակ հե-
րոս է, չունի ներքին խորութիւն. նախ-
նակաւ, ընթացիկ են իր ինքնավերլու-
ծումները, պտասական եւ միակողմա-
նի: Շաւիած իր տուհաւական բարդոյթ-
կարօտը, կամ չիլ ու ինքնաբաւ զգա-
ցապաշտ, երբեմն նաեւ սեռապաշտ միա-
մշակութիւնը, աւ կը մնայ առօրեայի մա-
կարդակին վրայ, միակ կացութեան մը
մէջ բռնուած, միակ ապրումի մը լոյս-
սին տակ սեւեռուած: Տարբեր բառով,
թերեւս իրաւունք ունենանք հաստատե-
լու, որ այս միջինը վիպական արտա-
դրութեան՝ զօրեկ է առաջին հերթին
հոգեբանական վաւերական խորութե-
նէ. որ սփիւռքի հայ վիպագիրին հա-
մար, միշտ յարգելով մէկ-երկու տնու-
նի բացառութիւն, գոյութիւն չէ ունե-
ցած, օրինակ, գիւտը վէպի ենթակա-
յական տիւնմանիւն: Այսինքն Մարտի
Փրակս մը իմ ճիշդութեամբ: Գրեթէ:
Ասիկա՝ օրինակ մը տալու համար մի-
այն: Եւ ճշդելու՝ որ մեր վէպը չափ քիչ
բան կրցած է իւրացնել մեր գարու վի-
պութի մէկ կարեւոր հոսանքին՝ ենթա-
կայական հոգեբանութեան նուաճում-
ներէն: Կը մնայ, միւս կողմէ, մտածել՝
թէ մեր կեանքի ողբերգական փլուզու-
մէն եւ նոր կեանքի մը հազնեպ ստեղ-
ծումէն ո՞ր չափով անկախ է մեր վէպին
այս նկարագիրը: վիպութի ամէն փորձ՝
փորձն է ալ անդոյ աշխարհ մը վերջա-
պիւծելու, կամ ներկայ աշխարհ մը
միտելու: Թերեւս երկուքը միասին:
Մեր օգրեթեթեան համատարած, հա-
ւաքական հանգամանքը չէ՞ արդիւյթ
արդեօք վիպութիւն ներանձնացումը,
սուղումը՝ անհատի ենթակայական աշ-
խարհէն ներս. այդ հանգամանքը չէ՞,
պարզեօք, որ իր պատկերով անանձնա-
կան է գարծուցած նաեւ այդ կեանքը
վիպութի բերող սեռը:

Վերելի հաստատումները մասնաւոր
իմաստ կը ստանան, երբ աչքէ կ'անցը-
նենք Սփիւռքի քառասունամեայ վէպին
ժամանակագրական աւիտակը. 1929-ը՝

Շահնուրի երիտասարդ ու աղմկալի
ճեղհանքն է, որ կը ճշդէ այդ վէպին
գիմագիծը: 1930-40 տասնամեակը հա-
րուստ է դիւաւորաբար պարբերական
ժամուրի արտադրութիւններով, իբր քա-
նակ: 1945-55 տասնամեակին, վէպի
ժանրութեան կեդրոնը նոյնքան Միջին
Արեւելքն է որքան Պրանսան (Փարիզա-
հայ Սարաֆեանի վէպը, ներառյալ վեր-
լուծումի հետաքրքրական ճիւղ, ենթա-
կայական գունաւորումով, Հալէպի ճեղ-
հիւրի՝ էջերէն է որ լոյս կը տեսնէ):
Երջանք կը փակուի կարծէք՝ ճիւղացող
Մարդիկնի ծանր բայց անհաւատար ինք-
նասեւեռումով (1954): Տասնամեակը
անցած է անկէ ի վեր, գրեթէ լուս, ա-
մուլ տարիներ, եթէ նկատի չունենանք
քանի մը սահմանափակ յաւանութեամբ
վիպակներ, Պոլիսէն կամ Պէյրութէն ե-
կող: Կարելի՞ է ըսել, որ մեր վէպը
սպառած է. կարելի՞ է եղբակցնել, թէ
Սփիւռքը, որ մինչեւ 1960 յայտ կը ներ-
շնչէր իր վէպը ստեղծելու, պիտի չկա-
րենայ այլեւս ամուր առանդութիւն մը
ստեղծել այդ վիպական տնին: Ինչ որ
բացայայտ է՝ անդրանիկ սերունդը պատ-
նէլի վրայ չէ ալ, հակառակ որ պէտք
էր գտնուէր այսօր իր ուսերու ծաղկու-
մին մէջ: Հ. Ջարդարեան, երկու վէպէ
ետք, վիպականէն դուրս կալուածներու
մէջ կը ներկայանայ մեղի (աժամանակ
եւ ինքնուրոյդ իւր), Շահնուր շատոնց
լուցցուցած է վիպագիրը իր մէջ, ի վեր-
ջոյ լուրջ համար հայ դրականութեան,
իր հիւանդանոցին խորը: Շուշանեան՝
կանխահասօրէն զուհի հիւանդանոցին. ուրիշ
մը նոյն սերունդէն, Ջ. Որբունի, Վա-
րաժանեան խոստացուած շարքէն
միայն ՎՓորձը հրատարակելէ ետք,
պատմութիւն եւ յուշագրութեան ան-
ցած, կը լռէ երկար տարին: Սարաֆեան,
խմացապաշտ քերթողութիւնէն եկող պար-
ծառ անուն մը, վերլուծական պատմը-
ւածքներէ ետք կու տայ վէպ մը, յետոյ
գարձեալ հեռանալու համար վիպականէն:
Նմանօրինակ պարագաներ Միջին Արե-
ւելքի վէպն ալ կը հաշուէ: Ընդհանուր
առումով, եւ դարձեալ մէկ-երկու անոս-

նի բացառութեամբ, երիտասարդական գործեր են ասոնք (սեռականը, «Փորձ»-ը, Շուշանեանի ամբողջ վաստակը), կամ ալ միայն գործեր՝ վիպական սեռէն, առեալ Հեղինակի մը համար, որ վիպագիր չէ ըստ էութեան, եւ զայն կը մշակէ զի մէջ ալլոց՝ Գործեր՝ որոնց չեն յաջորդեր նորագումը, իտրացումը, հասունացումը։ Եւ չէք կրնար գտնել անուն մը, որ երկուքէ աւելի թիւով յաջորդական վէպերու մէջ աւանդութիւն մը, վիպական սեռի հասկացողութիւն մը եւ վիպագիրի շարունակական, ինքզինք զարգացնող դիմագիծ մը փոխանցած ըլլայ Սփիւռքի վէպին։ Վերջին այս տուեալները, վիճակագրական առարկայականանութեամբ մը, կու գան անգամ մը եւս հաստատելու, որ մեր վէպի աւանդական, ընթացիկ ըմբռնումը, զի մը վերը բանաձեւուած, ապրած է ա'լ իր ժամանակը, եւ շատ բան կորսնցուցած իր այժմէութենէն, կենսառականութենէն։ Եւ բան չի փոխուիր այս ճշմարտութենէն, եթէ նոյն այդ ըմբռնումը վաղը ծնի նոր երկ մը, նոր երկեր, իրենց ժամանակէն վկայող, ատող իսկ յանկան, բայց զբաւած աւանդական քննիչով։ Վկայութեան ամբողջ շահեկանութիւնը դժուար թէ փրկէ վաղուան այդ վէպը՝ սեռի պատմութեան ու ընաշրջումի տեսանկիւնին մէջ նկատուելէ մեռեալ կէտ, կորսուած պահ։

✽

- Այս խորհրդածութիւնները սփիւռքահայ վէպի ճակատագրին շուրջ՝ նոր լոյսի մը տակ կ'երեւին մեզի, երբ սեւեռումի կ'առնենք 1964 տարեթիւով Փարիզին մեզի հառած փոքր ծաւալով (18×14, 188 էջ) վէպ մը՝ «Եւ Սղեւ Մարդ», Զ. Որբունիի անունը կրող։

Ծանօթ անուն է Զարեհ Որբունին, Սփիւռքի վէպի Քրիստոսահայ թեւին մէջ։ Նախ իր «Փորձով» (1929), ապա, եւ մանաւանդ, իր պատմական քննիրու երկու հոտորներով։ Եւ եթէ, հակառակ այս իրողութեան, հոս զանց կ'առնենք իր վաստակը՝ ատոր պատճառը կրկնակ է։

առաջին՝ «Եւ Սղեւ Մարդ»ը, որոշ տեսանկիւններէ դիտած՝ չէլտօրէն կը տարբերի Որբունիի վաստակէն։ Երկրորդ՝ այդ վաստակը մասնաւոր շահեկանութիւն չի ներկայացներ՝ Սփիւռքի վէպին ընդհանուր ընթացքի հեռանկարին մէջ, եւ անոր զանցառումը կը զառնայ անհրաժեշտ։ Այս պարագային, ուրեմն, Որբունիի նոր վէպը հետաքրքրական է այն շափով, որ կը հակադրուի ան մեր վիպական սեռի աւանդութիւններուն եւ մասնաւորաբար վիպումի քեֆին։

Կարենալ հասկնալու համար պատմումի այս մասնայատուկ որակը, քանի մը գիծ՝ զործողութիւններու ընթացքէն։

Թոժաս Ծրանսայի միջերկրականեան քաղաքներէն մէկուն մէջ (հաւանաբար Մարսէյ) ապրող մարդ մըն է. հայ եւրիտասարդ մը, երեսունի եւ քառասունի միջեւ՝ պատմութեան թուականին։ Մանկութեան՝ ընտանիքին հետ զաղթած է Ծրանսա, ճանչնալէ ետք Սղեւը, որուն մասին սակայն կը հանդիպինք միայն ակնարկութիւններու։ Հայրը մեռած է շատ կանուխ. մայրը տիպար որբեւայրի կին է, այսինքն շատ տառապած հայ մայր։ Քոյրն ու հղբայրը Հեռու են, մէկը՝ Ամերիկա, միւսը՝ ներգաղթած Հայրենիք։ Երկար ժամանակ, մայրը աշխատած է ապրուստի համար, նոյնիսկ իր անդրանիկ գաւկին՝ Թոժասի մեծնալէն ետք, որովհետեւ Թոժաս չ'աշխատիր։ չի կրնար աշխատել, կը գրէ։ Ինքնագիրկումի արարք չէ գրելը իրեն համար։ Այլ կամազուրկ մարդու մենագրութիւն, մեծամոլային պահանջ մը բաւարարող։ Կը յարունակէ ապրիլ նոյն կիանքը, նաեւ երբ մայրը որոշ նպատակով իրենց քով կը հրաւիրէ Հին Ծանօթ ու հայրենակից ընտանիք մը՝ տիկին Աստղիկը եւ անոր աղջիկը՝ Սրբուհին։ Մօրը մահահետք Սրբուհին է որ կը վարէ արդէն բաւական ընդարձակուած աշխատանքը, Թոժասի անուանական աջակցութեամբ։ Այս բոլորը, պէտք է անմիջապէս ճշդել, վէպին խորքը, անցեալը միայն կը կազմեն։ Իսկ վէպին ներկան ըստ-

նի պատմութիւնն: Կը սկսի թոճաթի մե- նախօտութեամբ — ամբողջութեամբ մե- նախօտութեան ձեւը ունի արդէն — իւր մօրը գէրեզմանին առջեւ: Քիչ առաջ տրուած անցեալը արդէն այս ներկային մէջէն է որ կ'երեւի մեզի, վերապատ- մուած, այլօրոյսով: Թոճաթն է որ, մէջընդմէջ ոգեկոչելով մէկանգ այդ անցեալը, մեռած իր մօրը կը տեղեկա- գրէ իր կեանքի նորագոյն անցուղա- ձերը: Ասոնց կեդրոնական նիւթը՝ իր յարաբերութիւնները Սրբուհիին հետ: Թոճաթ գիտէ, որ Սրբուհին իրեն կը սպասէ: Բայց ամբողջ գիրքի երկայն- քին, իրենց միջեւ քոյր-եղբայր կենակ- ցութիւն մը կը քաջընդունի թոճաթ չի կրնար առնել զիրենք ժխտող քայլը —, եւ նոյն ձախողութիւնն է որ յամառօրէն ինքզինք կը կրկնէ պատմութիւն սկիզբէն մինչեւ վերջ:

Սկսելու համար արդէն՝ հաւանա- բար սխալ ըլլալը գործածել զայնով: Ուրիշ հետեւ ձեւ Սղեւ Մարգարէ պատմու- թիւն չունի. յունի գէպքերու եւ հոգե- վիճակներու սովորական զարգացում, գործողութեան դասական կանոնաւո- րութեամբ հարկումը. մինչեւ վերջին է- ջը՝ կարելի է նոյնիսկ ըսել, որ եղածը հակա-գործողութիւն մըն է — դէպքերը ներքին միճակներուն վրայ կ'ունենան ճիշդ հակառակը սպասուած հակադե- ցութիւններուն —: Վէպին խական պատ- մութիւնը վերջին տողերուն միայն տե- գի կ'ունենայ, եւ կրնայ ամփոփուիլ վե- պի անունին երեք բառերուն մէջ. ձեւ եղեւ Մարգարէ:

Պատմութիւն՝ ուրեմն, եթէ կարելի է այդպէս կոչել տեւական տեղաշարժի, ե- րեւութապէս նոր՝ բայց խորքին մէջ կրկնուող պայմաններու, վիճակներու շարժում մը: Ժիզի կարիքը կը զգայ մարդ, երբ կը փորձէ վերստեղծել պատ- մութիւն ընթացքը: Այդ կարիքը, միւս կողմէ, կարծէք չի զգացուիր այնքան ալ. հաւանաբար կարելի ըլլալը, քանի մը հատուածի բացառութեամբ, էջ առ էջ կտրուել վերլուծում-պատմութիւն եւ

կարդալ հատուած առ հատուած, դրեթէ ոչինչ կորոնցնելով ընազրի շահեկանու- թիւնէն: Հատուածներու խոտութեան եւ ինքնուրաւութեան անխտելի տրժանի- քի կողքին, կառոյցի այս մասնայատ- կութիւնը Որբուհիի գործը շեշտօրէն կը տարբերէ մեր վէպին տիպական նմուշ- ներէն. գայն կը հակադրէ՝ անոնց: Բազ- ղատութիւնը, հակադրութիւնը, տեղամ մը եւս՝ արժէքի հարց չեն յուզեր ըստ էու- թեան. Շահնուրի վէպին թեքնիքը ինքն իր մէջ նոյնքան ընդունելի է, որքան Որբուհիինը. հարցը կը գրուի ուրիշ հե- ոանկարի մէջ — առարկայական եւ զար- տաքինչ պատմութիւն վրայ հիմնուած վե- պը որչափով կը պահէ իր կենսունա- կութիւնը իրեն վէպի ըմբռնում. կամ որչափով կը պատշաճի ան այլեւս ըս- փուրքի հայ մարդու կենսապայմանին: Որբուհիի վէպին մէջ, պատմութիւն

այս զարտուղի նկարագիրը կարեւոր չափով մը կապուած է հոգեբանական վերլուծութիւն տիրութիւն, որ բացայայտ- րէն կը կազմէ գլխաւոր առանցքը գոր- ծին: Նախ՝ վէպը մէկ գլխաւոր հերոս ունի միայն. առաջին դէմքով պատմու- ղը: Միւս բոլոր դէմքերը, սկսելով մե- ռած բայց միւս ներկայ մօրմէն, Սըր- բուհին, բարեկամը, Մարի-Թողէթը՝ գոյութիւն ունին այն չափով միայն, որ գոյութիւն ունին թոճաթին՝ գլխաւոր հերոսին համար, զուրկ՝ առարկայական կեանքէ: Մայրը իր կրկնեցումներէն է ար- դէն, իր մէկ ուրիշ դէմքը. Մարի-Թողէ- թը, մեռած գրաւիլ Փրանսուհին, զմա- կարոյժ՝ վիպական տիպար մըն է, որ գլխաւոր հերոսի ենթակայականութենէն կը ստանայ իր պատրանք-գոյութիւնը, անբնական այլ զրականօրէն շատ հետա- քըքրական կենակցութեան մը մէջ: Սրբուհին, նաեւ բարեկամը՝ համեմա- տաբար անկախ են, բայց, երկուքն ալ, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհը վէպին՝ պատմող հերոսի ներաշխարհի պատու- հաններէն է որ կը տեսնենք, անոր մութ ու թանձր գոյնը միւս յարցերէն: Գործին այս շեշտօրէն ենթակայա- կան բնոյթը՝ որովհետեւ անոր միակ

գլխավոր հերոսը՝ Թոմաս՝ հապկա իր ներաշխարհին վրայ հակած գիտակցութիւն մըն է. այս ներհայեցական նկարագիրն է որ, բնական յարաբերութեան մը բերումով, կը փոխանցուի վէպին և Արտաքին աշխարհէն ցրուցած իւրաքանչիւր բառ, իւրաքանչիւր շարժում, մասնախմբական տարր՝ իր արդարացումը, գոյութեան իմաստը գլխավոր հերոսի ներաշխարհին մէջ է որ կը գտնուի։ Եւ միայն ներհայեցական չէ՝ այդ ներաշխարհին կեանքի ոճը. ախտաբանական է նաեւ։ Արդէն ախտաբանականին կը տանի ամէն խորացում, փշրելով բընականներն աւ հիւանդագինի սահմանը։ Եւ Որբունիի հերոսին ինքնավերլուծութի մարմանը բարդոյթներու ամբողջ աշխարհ մը կը ծածկէ, ուր ֆրէյդստեան հոգեվերլուծութիւնը, առաջին անգամ բըրլով արքան ամբողջական ձեւով, հասցնելէ կը խօսի մեզի. եւ բաւական հաբազատ է իր շնորհ, պէտք է ըսել։ Գոնէ իրը հոգեվերլուծական (փսիխանալիթի) պարագայի մը ուսումնասիրութիւնը, Վեւ. Եղեւ. Մարգըր կարելի է նըկատել վերջնական գիծեր սեւեռող գործ։

Այսքան՝ վէպի առանցքը կազմող հոգեբանական խորքի մասին։ Աւելի լայն նախադէպի մը համար, սակայն, թերեւս հարկ ըլլայ աւելցնել քանի մը արագ գիծ՝ հիւանդագին այս կերպարի աշխարհիմացութենէն։ Անոր կեդրոնը կը դրաւէ բնագոյնական էական անձկութիւն մը, ապրելու դժուարութիւն մը, որ կը բխի Արարքին մատչելու, եւ Արարքին մէջ ինքզինք ծնելու անկարողութենէն. այս կացութեան մէկ դրսեւորումն է պարզապէս՝ հերոսին եւ Սըրբունիի փոխարարութիւններու երեւոյթը։ Հիւանդագին ու մերկ գիտակցութեան մը համար դժուար է ստեղծել, ապրել իր Պատմութիւնը։

Հիմնական այս կացութիւնը կը դըրսեւորուի նաեւ ուրիշ երեւոյթներու ընդմէջէն. մահուան յաճախանքը անոնցմէ մէկն է։ Վէպին խորագիրը արդէն կ'ընդգծէ, առաջին վայրկեանէն, որ չծնած մարդու մը հետ գործ ունիք։ Մահը եւ

ծնունդը արդէն իրարմով բացատրուող, դիրար կանչող երեւոյթներ են, ինչպէս հերոսը բացայայտօրէն կ'ըսէ, զուտ իմաստասիրական հազուադէպ իր բանաձեւումներէն մէկուն ընթացքին. մեռած մայր մը պերճախօս խորհրդանշէ իր պէն կեանք-Մահ սկզբնական լծորդութեան։ Նոյնքան յատկանշական՝ սիրոյ եւ մահուան զուգորդումը, որ երեւան կու գայ մեռած Մարի-Ժողէթի մը հանդէպ անուցած իր դաշտամենքուն, հիւանդագին սէրին մէջէն։

Վերը տեսնուեցաւ արդէն, այս աշխարհիմացութեան անգիտակից ենթահասոյցն ալ սեւեռումի տեսուած է Որբունիի կողմէ, գիտակցուած, ուզուած սեւեռումով մը։ Մտորակայութեան, յանցագործութեան բարդոյթ մը կը պատկեր այս բոլորին տակ. ինքնա-ոչընչացման ախտի մը, մագնիշի մը երբեմն շատ յաջող, երբեմն անելի կամ նուազ պայմանագրական — բայց միշտ ալ հետաքրքրական — պատկերաւորում մը կը գտնենք Թոմասի ախպարին մէջ։ Վէպը իր հերոսին անցեալը կը պրպտէ, մանկութեան առաջին տարիները միշտ չեւ, հոգեվերլուծողի վայել ախտաճանաչումներ կ'ընէ, երբեմն սրտառուչ հաւատարմութեամբ... գիտական տեսութիւններու հանդէպ։ Մական հիմնականը, անգամ մըն ալ, նորարարութեան ճիգն է, որու նպատակն ըզմ կը նսեմանայ ամէն վերապահում։

Փակելով Որբունիի վէպի հոգեբանական առանցքին շուրջ քանի մը այս նշումները, եւ ընդգծելով գործին արժանիքներն ու թարմութիւնը՝ միշտ հոգեբանական մակարդակին վրայ, թերեւս մէկ բան կը մնայ, արամաբանական եղբայրացութեան մը յանգեւոյն համար. անգամ մը եւս հաստատել, որ մեր վէպը, ունենալով հանդիման սեւեռելի ուժերստեւոյն նիւթը մեր կեանքին մէջ — ամէն կեանքի տրուած է արդէն այդ մեծաշնորհը... — կը տառապի վիպական ըմբռնումի տարտամութենէն մը. նաեւ ընդունիլ, որ Վեւ. Եղեւ. Մարգըր, անկարար իր այլ հանգամանքներէն, կը

վկայէ Գուրգեն մեր վէպին զալիք հո-
րութիւններու ի նպաստ. որ կրնանք ու-
նենալ, պէ՛տք է ունենանք, օրինակ, են-
թակայական հոգեբանութեան մը վէպը,
որոնումի վէպը, որուն մէջ սեւեռումի
ատուեց Նիւթը եւ վիպական սեռի, ձե-
ւի ըմբռնումը միանան, կազմեն օրկա-
նական ամբողջութիւն, տւելի վաւերա-
կան ու խոր ստեղծումի մը ի խնդիր:
Ընդունի՛լ՝ որ հայ վիպագիրը հակի, ա-
ւելի ուշադիր քան մինչեւ հիմա, փրի-
րուն քայց թանկագին այն միւս աշխար-
հին միայ, որ ներքին միջոցն է, ներքին
ժամանակը. ներքին պատմութիւնը: Ա-
ռանց հոգեվերլուծական կամ Նոր-վէպ-
եան «առարկայապաշտ» ենթակայակա-
նութեան մը յամախանքովը անպայման
ապրելու, առնուազն ենթակայական
գոնաւորումով՝ առայ, ներանձնականի
հարադրութեամբ աւելի վաւերական դար-
ձնելով զայն, տեսիլներու իր վիպական
աշխարհը՝ եւ չմոռնալ՝ որ այս առաջա-
գրանքները — խօսքը՝ անհատականէն ան-
դին ամբողջ հաւաքական մատչելիութեան
մը մասին է — իրազրծելի են միայն զրա-
կանութեան ամբողջին պարիտպներու:
Վերացումով եւ ազատական «տնտեսու-
թեան» մը կիրարկումով: Հարց է, թէ
ինչ չափով պատրաստ ենք նման գիրքը-
րդունքի մը. ինչ չափով տրամադիր,
առնուազն...

Որովհետեւ անխուսափելի հարցում-
ներ կան. հապա՛ հայեցիութիւնը մեր
վէպին. հապա՛ անոր «իրապաշտ»,
«արտի խօսող», միամակարդակ պար-
զութիւնը, ապրումին ու երեւոյթին
մակերեսէն սահող, վերլուծականը, ըզ-
դայականը, ներանձնականը իրենց պար-
զագոյն արտայայտութեան վերածող
գիւրութիւնը — պիտի ըսուի: Արեւմե-
տունայ շքեղ արձակէն եւ վիպումի ա-
ւանդութենէն պիտի խօսուի, յիշուին
անուններ՝ եթէ ոչ «Արեւելք»ի սերուն-
դէն, առնուազն յիս-եղևոսեան աւան-
դապաշտ վէպէն, պատմութեան, որոնք
գիւր մինչեւ այսօր կը յամառին իրենց
հազիւ ուրուացող հերոսներու քերանէն
տեսութիւններ քանաճեւել՝ անշուշտ մեր

կեանքին, մեր Կենսապայմանի մասին,
տոսկա նկատելով լաւագոյն ձեւը՝ հայ
վէպ մը ստեղծելու: Յետ-եղեռնի կեր-
պարներու շքարահին ամէնէն շար-
ուած դէմքերը (Շահնուրի Պետրոսը
կամ Սուրենը, նաեւ ամէնէն աւելի նե-
րանձնականները (Զարդարեանի Հրան-
դը)՝ զերծ չեն մնար, որոշ տեղեր զո-
նէ, վիպական կերպարի իրենց միսին,
իրենց արիւնին խորթ բառեր արտաբե-
րելու մեղքէն: Մոռնանք ա՛լ զինքնա-
դանները, ճառերով կեռագրուած, «ազ-
գային» կամ ընտանեկան կեանքէ յո-
ղահեղձ, նաեւ գնում տեսարանները՝
վիպականին անյարիր հում գիծերով
տրուած, կամ ամենաօթեալներէն մէ-
կուն յաւակնութիւնը՝ տալու մեզի
«Պատկերազարդ Պատմութիւն Հայոց»:
Այս բոլորը՝ ընելու համար ուրիշ հիմ-
նական հաստատում մը — անխափշտ
չէ Գուրգէն զայն անբանական անհատի՛ն՝
տալու համար հայոց Պատմութիւնը,
հոգ չէ թէ պատկերազարդ շըլլայ ան,
ինչպէս պիտի ուղէր Շահնուր: Անհրա-
ժեշտ չէ, սխալ է նաեւ հաւանարար՝
զոհել ենթակայական տեսիլներու տաք,
սեփական արիւնով բարախուն հարուստ
միջուկը, դուրս դալ առարկայական
անընդհատ մը մէջ, առարկայապաշտ
պատմիչի ա՛լ մշաւած պատմութեան եւ
յաւակնութիւնը տոնելով վրան: Հայոց
պատմութիւնը ուրիշ՝ պիտի դայ մեզի,
եթէ ոչ հայ ներանձնական մարդուն խո-
րունկ հեռուորութիւններէն:

Ահա ինչո՛ւ՝ «Եւ Եղեւ Մարդ»ը,
միշտ անկախարար իր այլ ճանգամա-
նեղէն եւ ընդհանուր արժեւորման փո-
ձերէ, մեզի կը բերէ իսկական տալմը
Սփիւռքի ժամանակները ապրող հայ
մարդուն. եւ առկա՝ առանց խնդրոյ
առարկայ դարձնելու — հատուածի մը
քայքայութեամբ — ազգային զանազան
ըմբռնումներ, քաղաքական շէլ կամ
միամիտ տեսութիւններ, նարեկացի եւ
... արդարական ապուխտ: Ահա ինչո՛ւ՝
«Եւ Եղեւ Մարդ»ը հայ վէպ է, ամբողջ
հաւաքականութեան մը Կենսապայմանը
թելադրող գործ է, զի մը վերը տրուած

զուտ անհատական հոգեբանությունն սահմաններուն մէջ իսկ. Թոմասի մը հաղթանային կեանքին, փափական երկունքի ճիգերուն եւ բարոյական մէջէն, Որբունի կու տայ Սփիւռքը՝ անմեղականացուած, միտ ու ուկոր հաղած. ենթականական ոգեբանութեան վերածուած: Եւ այդ մտաթելագրանքը, դարձեալ քանի մը հատուածի բացատրութեամբ, սոսկական խորհրդանշի չի վերածեր անհատը: Թոմաս անհատի վերածուած վերացական տղամ մը չէ: Փորձ մըն է ան ենթականայօրէն ապրելու տալանալ մը, Սփիւռքի հայ մարդուն տալանալը, որ սկզբնական ենթականական է՝ արդէն, ներքոյ զեղծերու, աւային կծիկներու եւ բարոյական խորէն եկող, բայց որ ճենք, անտեղական քաներու դիտարարման օճանին վրայ, կը զոհենք վերացականութեան, առարկայականին, շնամային: Այս ուղղութեամբ պերճախօս են Որբունիի ձախողանքները՝ ամէն տեղում որ ան կը փորձէ զուտ անտեղական վերադարձի հիւսնադրին բայց վաւերական ենթականականութենէն, օրազրային դարձումով մը կամ ընդհանրացումի փորձով մը զայն վերածել առարկայականի, երբորդ զէմքի: Թոմաս-անհատին ու անոր հաւաքական զինաստան մասին կրկնակ, անանջատելի սեւեռումը վաւերական է մասնաւոր՝ երբ այդ երկու պատկերները կը վերածուին օրականական միտերի մը: Մեր Սփիւռքի տաղանալը ենթականական տաղանալ է, ուրիշ որեւէ բան ըլլալէ առաջ:

Հապճեպ, թերեւս նաեւ բիրտ ըլլալ եղբայրացեալ, որ Սփիւռքի վէպը այսօր իսկ պէտք է ճամբայ փոխէ, Փարիզէն եկող նոր եւ ուշագրաւ, այլ համաստեալում վայր վէպին տուած ազդանշանին վրայ: Նաեւ անհեթեթ, ինչ որ փորձուեցաւ այս էջերուն մէջ, Զ. Որբունիի վէպին հայթայթած փաստերու լոյսին տակ, կարելի առարկայականութեամբ

վերլուծում-ախտահանում մըն էր, ըմփիւռքի մեր վէպին շուրջ, անոր պարզած մէկ անընական երեւոյթին առնչութեամբ: Ենչտօրէն ենթականայապաշտ այս գիծը, որ Սփիւռքի վէպին մէջ շեւ եղեւ Մարդոյ առաջին անգամ ամբողջականօրէն կը նշանակուի՝ կրնայ, գրական այլ ազդեցութիւններու կարգին, թերեւս նորոգել մեր վէպին յոգնած, նախնական դարձած կեանքը, բեղմնաւորել վիպագիրին ստեղծագործ կարողութիւնները՝ նոր ձեւերու, նոր խորացումներու հրաւիրին դէմ, զայն առերեսելով մեկուսացնելով հաւաքական մտահոգութիւններէ, բայց իրականութեան մէջ տանելով այդ մտահոգութիւններուն, այդ զինաստանայմանին խորագոյն մէկ ճանաչում մին: Կզպիացած, անարձագանք մնացած մէկ-երկու փորձէ ետք՝ Որբունիի վէպ եղեւ Մարդօք՝ նոր, կենդանի փաստ մը այս կարեւորութեան:

Ինչո՞ւ չհաւատարման, միտ կողմէ, որ այսօր, մեզ հաւաքական անհատի վերածող, ուրուարական մեր ներաշխարհէն զուտ բնկերայինի բարոյութիւն-միտարանքին նետող Ոճիւրէն յիսուն տարի ետք, փոխուած է ա՛յլ, կամ փոխուելու վրայ է նաեւ մեր հոգեկան կառոյցը: Ներքին կերտումներու շուրջ սահմանափակուող կեանքի կարեւորութիւնները՝ մէկ կողմէ, նաեւ մեքենականին, առարկայականին աստատանում մը ժամանակակից կեանքին մէջ՝ միտ կողմէ, մեզ կը նետեն մեր ենթականական արժէքներուն, ներառելի հայեցողութեան, ներքին ժամանակի, վերլուծական մտածումի մեր զգայարանները կը վերադառնն իրենց ներքին ընկալումութիւնը, կամ նոր կը ստեղծենք զանոնք՝ համաշխարհային զանազան շողարձակումներու դէմ: Եւ Սփիւռքի ժամանակաշրջանի հայ մարդը, ուրիշ օրէն մը շարունակին անհատի նման, իր պատկերին վրայ պիտի ստեղծէ իր վէպը:

Թ. ՔԻՐԻՐՔՅԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Դ.

(ԵՌԻԿՈՍԱԴՐԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ)

ԵՌԻԿՈՍԱԴՐԱՆՈՒԹՅԱՆ

Այս եկերը իր մէջ կը պարփակէ Եւրոպայի մանրանկարը: Արեւելքի եւ Արեւմուտքի սահմաններուն վրայ, Հին Հռոմի եւ Բիւզանդիոնի արդեցութիւններուն տակ, եւ պատմութեան վերլուծութեան հետեւ, եւսկոստիւնի տնայնոց է որ դուռն է իր միութիւնը: Վեց երկրներէ, վեց ժողովուրդներէ բաղկացող այս հանրապետութիւնը, ժողովուրդներ, որոնք կը պատկանին երեք կրօններու եւ որոնց լեզուն նոյնը չէ, ճնշուած Ասորիական կայսրութենէն եւ բղկուած Օսմանեան բարբարոսներէն, իր գիւղական ուրուագծեց 1918-ին, եւ 1939-1945-ի զօտիւքէն անցնելէ ետք, իր զանազան տարրերը կըցտա իրարու հետ լաղախել:

Միջպատերազմեան ըրջանին ամէնէն կարգացուած հեղինակները եղած են Միլան Բաքիլ, Օփան Զուփանիլի եւ մանաւանդ Վլադիմիր Նազոր:

Վլադիմիր Նազոր (1876-1919),

Երեսն է Տալմոցիոյ Պրաչ կղզիին մէջ: Իր հսկայածաւալ գործը կը ներկայանայ ոչ ոքի զիցարանութենէն, եւ իր երկրին պատմական եւ ընկերային անցեալէն: Եւ սակայն ինք կը հեռանայ ժամանակակից յոռետես մտայնութենէն եւ իր բանաստեղծութեանց եւ վէպերուն մէջ, կ'երգէ ապրելու երջանկութիւնը, աշխարհի գեղեցկութիւնը, երիտասար-

դութիւնը, հաւատքը իր ժողովուրդին արժեքներուն մէջ: 1942-ին, հակառակ իր յառաջացած տարիքին, կը միանայ փարթիզաններուն՝ իր հայրենիքին ազատագրման համար: Իր առաջին գործը, բանաստեղծութեան գիրք մըն է, Լիբի-նա, ունի նաեւ զիցարանութիւններ, խորապ թագաւորները: Վէպեր եւ վէպակներ, Ժողա իսկան, Ասֆուր, Պատմութիւն կղզիին, Բաղաթիւն եւ լեռներուն, եւ Լուսնի հովիտը: Թարգմանած է նաեւ Տանթէն, Հիւկոյէն, Հայնէն, եւ Լէօփարտիէն:

Օքան Զուփանիլի, բանաստեղծ է, երգած է նախ անմասնաշարժութիւնը, յետոյ՝ իր հայրենիքին գեղեցկութիւնը եւ ոտրկութիւնը: Ունի հարուստ լեզու: Յաջորդ սերունդին կը պատկանին հետեւեալ անունները. Փրէմիւսով Վորունց, Միլոսլավ Քրիշթա, եւ իմօ Անտրիլ, որոնք մեծ արդեցութիւն գործած են իրենց երկրին գրականութեան վրայ եւ ունին միջոցային համբաւ:

Փրէմիւսով Վորունց, (1893-1950), աղքատ գիւղացիի մը զաւակը, հագիւղայրոց տեսած, զարդացած է ինքնաշխատութեամբ: Հակառակ որ կը պատկանի գործաւոր դասակարգին, աւելի երգած է գիւղացիները: Իր առաջին վէպը՝ Պատմութիւնները անցու աննշմար, Տասը տարի վերջ միայն իր Փաղիթով-ճիւղի կռիւն վէպը եղաւ յայտնութիւն մը: Երկրորդ համաշխարհային պատերազմի

ընթացքին ձերբակալուեցաւ Գերմանացիներուն կողմէ: Պատերազմէն վերջ հրատարակեց ուրիշ վէպեր: Վորանց առարկայական գրող մըն է եւ կը պատկանի իրապաշտ զպրոցին: Գաղափարով համայնավար է եւ իր գործերուն մէջ կ'արտայայտէ դասակարգային պայքարը գիւղացիներուն եւ դրամատէրներուն միջեւ: Սակայն իր անձերը կաղապարուած չեն իրենց գաղափարներով, անոնք կ'ապրին, եւ հակառակ իրենց թշուառութեան՝ կը հետապնդեն մարդկային երջանկութեան իրականացումը:

Միտայլալ Գրիլծա, ծնած է 1893-ին: Եղած է հակառակորդը արդի քաղաքակրթութեան բարոյական սկզբունքներուն, եւ ջանացած է զանոնք փոփոխութեան ենթարկել: Եղած է սպայ Աւստրո-Հունգարական բանակին մէջ: Պատերազմէն վերջ մասնակցած է յեղափոխական շարժումներու, նոյն ատեն ինքզինքը պարտադրելով դրական շրջանակներուն, իր բանաստեղծութիւններով: Ասոնց կը յաջորդեն վէպեր, թատերգութիւններ, ուսումնասիրութիւններ եւ քննադատական յօդուածներ: Ուսումնական միջավայրէն յանդիմանալով իր ճոխութեամբ, ինքնասպանութեամբ Քրիշտա կը քանդէ ընկերային առասպելները: Կլամպերը վէպին մէջ կը նկարագրէ ազնւական դասակարգին պատկանող ընտանիքի մը անկումը, ընտանիք որ դարերով կեդրեւած է թշուառ ժողովուրդը: Իր ճոխութեամբ, ընտանիքական շունչով, Քրիշտա խորունկ ազդեցութիւն ունեցած է ժամանակակից գրականութեան վրայ:

Իվո Անտրիշ — ծնած 1893-ին — մեղի կու տայ նկարագրութիւնը աշխարհի, աւելի դատական, աւելի բանաւոր ձեւով: Ուսումը առած է Զակրէպի, Քրաքովի եւ Վիեննայի համալսարաններուն մէջ: Պատկանած է երիտասարդ յեղափոխականներու շարքերուն եւ բանասիրական է բազմաթիւ անգամներ: Հետագային վարած է քաղաքական մեծ պաշտօններ: Կանուխէն սկսած է գրել, բայց նշանաւոր դարձած է բանտի մէջ գրած իր ոտանավորներով, ինչ ֆանթո, 1919:

Երկրորդ համաշխարհային պատերազմին կը քաշուի Պեկիրատ եւ հոն կը գրէ երեք վէպեր, որոնք կը հրատարակուին պատերազմէն վերջ: Թրավմիէի քրոնիկը, պատմական վէպ մըն է, հիմնուած՝ Վիեննայի եւ Փարիզի արխիւներուն վրայ: Այս վէպին կեդրոնական անձը Ֆրանսական զեապան մըն է Պոսնոր մէջ, նախորդող շուրջ կը զտնան թուրք պէյեր, կը դերականներ, աւստրիացի սպաներ: Տեսակ մը խառնարան Արեւմուտքի եւ Արեւելքի միակ Տրիմայի կամուրջը իր ամէնէն ճանշցուած վէպն է: Կամուրջը ամէնէն կարեւոր դերը կը խաղայ այս վէպին մէջ: Հոնկէ անցած են մարդիկ, դժբախտ մարդիկ, որոնց իւրաքանչիւրը կը ներկայացնէ ամբողջ մարդկութիւնը: Զուտ, զգայուն եւ նուրբ արուեստ մը ունի Անտրիշ: Ան Եւրոպայէ գրողներուն առաջինն է: Ստացած է Նոպէլեան դրական մրցանակը:

Ինչպէս ամէն տեղ, հոս ալ գերիւրապաշտութիւնը ունեցած է իր ազդեցութիւնը: Տաւնիքսֆենքա խոմբին մէջ կարելի է յիշել Մարքո Ռիթթլը, Միլան Տէտրիազը եւ Տուշան Մաթիշը:

Իսկ դաւով մարթագմի ազդեցութեան Եւրոպայէ գրականութեան վերջ, առջ եղած է ինքնատիպ: Իւրաքանչիւր հեղինակ իր ուրոյն աշխարհայեացքը պահած է նիւթերու մշակման մէջ: Մշակուած նիւթերը ընդհանրապէս վերցուած են ազատագրման պատերազմէն, փարթիզաններու կեանքէն եւ նոր ապրեքակերպի մը փնտռութէն:

Գալով գաւառական, կամ աւելի հիշող գաւառի մէջ ապրող գրողներուն, որքան որ ալ ազդեցութեան տակը ըլլան տիրող գաղափարներուն, անոնց մէջ կը նշմարուի աւելի անկեղծութիւն մը, աւելի մարդկային շնչաւ մը: Հոգին մային է որ կ'երգէ անոնց գործերուն մէջ:

Նալ Փոգաք, ծնած է 1892-ին: Պատերազմի ատեն աշխատեցաւ գիմապրութեան ուստերուն մէջ, ձերբակալուեցաւ: Գործը բազմազան է. բնապաշտութիւն,

առմանը քնարերգութիւն միաժողովուրդ էն իր վէպերուն եւ պատմածքներուն մէջ. Սարգս Պետրոս, Գիմազնեան և րը:

Վլադիմիր Տէգլան, իր պատմածքներուն մէջ իրապատկութեամբ կը նկարագրէ տալմայեան ծովափին աղքատ ձկնորսները ու զինուորները: Իր լուսավորող հրահրութեամբ է հիմնադրում: Իրմէ յիշենք Աւետիսեան արեւիմ տակ, ջմրամ արմախաւքներ, ժամ Կալեպի գալուստը:

Նոյն թեմաները կը զարգացնեն Ռանքո Մարինըսովիչ եւ Վիկտորիա Քալէպ, որ դրած է Եռլոսլաւ յեղափոխութեան նուիրուած լաւագոյն վէպը, եւ որուն համար մարդիկը լաւ կամ գէշ չեն: Համայնականութիւն եւ ոչ-համայնականութիւն մասին կանխապէս կարծիք չունի:

Փեթար Երկրտիմ կը նկարագրէ նաեւ տալմայեան ծովափին զեղեցկութիւնը իր գործերուն մէջ: Կը հետաքրքրուի նաեւ բնագիտական հարցերով: Աւելի փոքրիկ է քան Վիկտորիան: Մարքսեան մտածելակերպը չի բաւարարեր իր տենչը հասնելու համար բարոյական եւ զեղեցկադիտական և զբաղմունքներուն:

Միքո Պաթիլ, ծնած 1919, մեծ յաջողութիւն գտաւ թատրոնի մէջ, սակայն աւելի ճանչցուեցաւ իր Գալիլեոսովիչ վէպով, ուր կը նկարագրէ կատաղի եւ անգիշտող պայքարը երկու բնականութիւն, աղքատ եւ հարուստ գիւղացիներու միջավայրին տանուած:

Օսթար Տալիտայի կեանքը ինքնին արդէն վէպ մըն է: Եղած է փոխտոմարտական ուսանող Պեդրոսի համալսարանին մէջ, որնարանի սպասեակ, բեռնակիր՝ Փարիզի մէջ, պաշտօնեայ՝ Եռլոսլաւի մէջ. հինգ տարի բանտարկութեան դատապարտուած իր համայնավար, բանտին աղտոտելով կը միանայ ազատագրական բանակին: Տասնընեքներու իռաւորին ամէնէն աշխատեց բանտարկուածը կը դառնայ: Բանաստեղծութիւններ, Զրեմտանիմ, Կեանքնիմ պատիմ և տեղ, Համա, եւ Յոթա, գերբնապաշտ

բանաստեղծութիւններ են: 1952-ին կը գրէ իր առաջին վէպը, ուր նոր ակնոցով կը դիտէ իր հայրենիքին մէջ առիւտեան ցոյց յեղափոխութիւնը: Պէթրոսի եւ Կոյժ-ժողովները վէպին մէջ կը զարգացնէ այն զաղարկարը, թէ ամէնէն առաջ յեղափոխականը պէ՛տք է պաշտպանէ իր արժանապատուութիւնը եւ անկախութիւնը:

Միտրաի Փալիտիլ, ծաղաւղը ըմբոստացողն է: Իր վարպետները կը կոչուին Քաֆեա, Պէթիլ: Իր գործերը, բանաստեղծութիւնները ըլլան առնոյթ թէ պատմութեան ճիշտ, գալթակողութիւններ ըստեղծեցին:

Եւ այսպէս Մոնթենէկոն, Մաքս-տոնիան, Պոնիան իրենց բաժինը կը բերեն Եռլոսլաւ զբաղմունքները համարաւորեցին: Միտրայի լալիլ զ'երդէ իր երկրի ժողովուրդին թշուառութիւնը եւ նաեւ կատաղի սէրը դէպի անկախութիւնը: Միտրայի Պալիտիլ կը նկատուէ զատկաբանային պայքարի աշխարհէն, եւ ուր չարին բաժինը աւելի բնագիտական երեւոյթ ունի քան ընկերային:

Ազատագրուած զինկերպարական իրապատկութեան՝ կապանքներէն, Եռլոսլաւ գրականութիւնը կը բացուի տիւնգերէն, կը ներշնչուի համամարդկային գաղափարներով եւ իր բաժինը կը բերէ միջազգային զեղարուեստին:

ՅՈՒՂԱՍԱՆ

Եռլոսլաւ միտքը իր արմատները խրած է հեռաւոր անցեալին եւ բիւզանդական նորամտութեանց մէջ: Սակայն ինքզինքը գտնելու համար կատարած է երկու յեղաշրջումներ. մէկը գրական եւ միւր լեզուական:

Երկրորդ համաշխարհային պատերազմը ծնունդ կու տայ գաղտնի գրականութեան մը: Այդ գործերուն հեղինակները կը պայքարեն գրիշով ու զէնքով: 1945-ին այլեւս կրնան ազատորէն արտայայտուիլ եւ կ'ու տան բանաստեղծարարականութիւն եւ կ'ու տան բանաստեղծարարականութիւն:

ծուծութիւններ, վէպեր, Թատերգութիւններ, Ազգային միասնականութիւնը պահելու ջանք մը նկատելի է ասոնց մէջ, Հակառակ որ անոնք կը պատկանին տարբեր Հոսանքներու:

Հեզուի խնդիրը կը կարգադրուի Հակառակ կառավարութեան միջամտութեան եւ կը սկսի ոճի եւ ձևի հարցը:

Ներկայ Յունաստանը կը մասնակցի արդի գրականութեան Հոսանքներուն: Սերա կապէր ունի արեւմտեան մտքին հետ: Պորթրէթապատկերներ տեղի տըւած է արդէն գերբնականութեան:

Սիֆէլիանոս (մեռած 1951-ին), կը ներկայացնէ անցեալի աւանդութիւններով ճոխացած արդիական միտք մը: Քնարերգակ՝ իր երիտասարդութեան միջոցին, ինքզինքը կը պարտադրէ Թատրոնին ողբերգական երկերով: Սիֆէլիանոս կը ջանայ Հեթանոսական եւ զրիստոնէական տարրերը միացնելով, ստեղծել միջնորդ մը ուր տիրէ ներդաշնակութիւն, որպէսզի լուծուին Հակառակութիւնները՝ մահը եւ կեանքը, անցեալը եւ ապագան...

Սիֆէլիան, մեծագոյն բանաստեղծն է Յունաստանի, Նոպլէիան մրցանակաւոր 1963-ին: Իր գործը տարած է երկու Հակոտնեայ ուղղութեամբ. իսկ ջնջում եւ Եսի փառաբանութիւն, տիեզերքի տաւրածութեան մէջ: Սկզբնական գործերուն մէջ կը տիրէ յոռետեսութիւն եւ առանձնութիւն, բայց այս դադափարը կը լուսաւորուի յոյսով մը, թէ արդարութիւնը

անխուսափելի է, սակայն անձկութեան միջնորդութեամբ միշտ կը տիրէ իր գործերուն վրայ:

Նիքոլ Բազանցաֆիս (1883-1957): Բանաստեղծ եւ վիպասան: Զարգացուցած է պատմական եւ մանաւանդ փիլոսոփայական վէպը: Իր գործերը դարձած են աշխարհագրական, մանաւանդ որ Հատերը արդէն Հարձակատիկերի նիւթ դարձած են. Ալեքսիս Զորպա, Ազատութիւնը կամ մահը, Յիսուս վերափայլուած, Արքիմ փորձաքիւնը:

Քաղանցաքիս կը սիրէ արկածներ պատմել, բացատրելու Համար իր դադափարները. կը հակադրէ անձը բազմութեան, եւ կը ջանայ բացատրել հեղինակականութեան հարցը:

Յունական արդի գրականութիւնը ունի տիեզերական արժէք: Ան չի զրադիր միայն ազգային հարցերով, այլ նաեւ կը ջանայ բացատրել միջազգային եւ Համամարդկային խնդիրներ, ըլլայ վէպերով, ըլլայ Թատերգութիւններով, ըլլայ բանաստեղծութեամբ: Եւ այս առաջադրութիւնը ապարդիւն չէ անցած, որովհետեւ մեր դարուն տուած է Համաշխարհային Համառ վայելող երկու գրողներ. Ժորժ Սէֆէլիս եւ Նիքոլ Բազանցաֆիս, առանց Հաշուելու տասնեակ մը ուրիշներ, որոնք պատիւ պիտի բերէին որեւէ երկրի գրականութեան:

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՕՍՄ. ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՆՁՐ

ՆԻ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Սակայն խալիֆայական իշխանութիւնը չէր սահմանափակուեր օսմ. պետութեան միւս զանազան գործունէութիւնները: Խալիֆան իրաւապէս քաղաքական եւ կրօնական գերագոյն պետն էր նաեւ կայսրութեան սահմաններէն դուրս ինկոզ բոլոր միւս ժողովուրդներուն: Հետեւաբար անոր պարտականութիւնը չէր վերջանար իր երկրի քաղաքական սահմաններէն ներս իսլամին տիրապետութեամբ: Գուրանէն հրահանգուած անոր աւագ պարտականութիւնն էր՝ նուաճել բոլոր զանազան երկրագործներ եւ դայն դարձնել բոլոր միւս ժողովուրդներուն հայրենիքը՝ տալ իսլամ: Գաւառական այս առաքելութեամբ նոր իմաստ կը ըստանային նաեւ խալիֆա-սուլթանին յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ՝ գրգռուած ըլլալով ո՛չ լոկ օսման-ցիական շահերէ, այլ մանաւանդ իսլամական նկատմաներէ: Փրկատունեայ պետութիւններու դէմ խալիֆա-սուլթանին կռիւները այլեւս տեղի պիտի չունենային յանուն օսմ. աշխարհակալութեան, այլ, գէթ սկզբունքով, յանուն իսլամական աշխարհակալութեան, ուրիշ խօսքով՝ անոր պատերազմները ցիւղանք պիտի նկատուէին այլեւս: Եւ հարկաւ խալիֆային համար ալ ստացելէ էր որ իր այս նախնական առաքելութեան ճամբուն վրայ իրեն զօրավիգ ունենար աշխարհի ամբողջ միւս ժողովուրդները՝ իրեն պատրաստի բանակ:

Համիդայական այս քաղաքարարարութեամբ առաջնորդուեցան օսմ. թուրք-էրոյ խալիֆա-սուլթանները իրենց ամ-

բողջ գոյութեան ընթացքին, այսինքն՝ մինչեւ իսկ այն շրջանին, երբ հետզհետէ կը փոխուէին քաղաքական աշխարհի տարկայական պայմանները եւ ամբողջով կը շրջուէր ուժերու յարաբերութիւնը:

Սիւլթան Գանուշի օրով օսմ. աշխարհակալութիւնը կը հասնէր իր ծալքագոյն սահմաններուն, որոնք մինչեւ 17-րդ դարու վախճանը պիտի մնային գրեթէ անփոփոխ: Արեւելքի մէջ շիի Պարսկաստանի դէմ օսմ. թուրքերուն մղած կռիւները նոր նուաճումներու պիտի չյանգէին: Ի վերջոյ թուրքերուն իր ձեռքը պիտի պահէր միայն Անդրկովկասի եւ արեւելեան Հայաստանի մէջ մասը՝ այս շրջաններուն աւելի ընդարձակ մասը դիմելով Պարսկաստանին: Սակայն արեւմտեան ճակատի վրայ կայունութեան այս շրջանին պատմական փոփոխութիւններ տեղի կ'ունենային եւրոպական ժողովուրդներու ընկերային-քաղաքական կեանքին մէջ: Նախ՝ աւատական կարգերու նահանջով հետզհետէ կը կազմակերպուէին աշխարհակալ միապետութիւնները ազգային գետնի վրայ. իսկ յաջորդող դարերուն քաղաքակրթական նուաճումները իրարու կը յաջորդէին ընկերային կեանքի բոլոր երեսներուն վրայ: Ստեղծուած պայմաններուն մէջ՝ ռազմագիտութեան եւ ռազմական ճարտարագիտութեան մասնագիտական նորութիւնները արհամարհելի կը դարձնէին ամբարշտի բանակներու թիւն ու վարարապետները: Իսկ եւրոպական ազգերու այս վճռական յառաջնութիւններուն

դպարի հարուած մը պիտի ըլլար պաշտօնական ժողովուրդներու անջատումը կայսրութենէն եւ, ասով, եւրոպական կալուածի մեծագոյն մասին կորուստը:

19-րդ դարուն սկիզբներէն Ֆրանս. Յնդափոխութեան գաղափարական ալիքը, քաղաքացիներու եւ ազգերու իրաւահաստատութեան սկզբունքներով, կը ցնցէր տիրապետուած ժողովուրդներու ազգային գիտակցութիւնն ու արժանապատուութիւնը: Այս շրջանին է որ կը սկսին օտ. Թուրքիոյ դարաւոր բռնակալութեան տակ Փիլիքապէս եւ բարոյսպէս խոշտանգուած՝ պայքանեան ժողովուրդներու ազատագրական շարժումները, որոնց Թուրքը կը պատասխանէր իրեն յատուկ մեթոտներով՝ ժողովրդական զանդուածներու կոտորածով: Թըրքահայաստանի քրիստոնեայ ժողովուրդներու այս կոտորածները մնայուն առիթ մը եղած էր Ռուսիոյ համար՝ յաջորդաբար Թուրքիոյ դէմ ասպարէզ իջնելու (1828-29, 1853-56, 1877-78) իրեն պաշտպան կամ ազատաբար իր օրթոտքս եղբայրներուն: Գլխաւորաբար ռուսական յաղթանակներուն շնորհիւ էր որ իւրաքուհի տեւէ Թըքական լուծէն պիտի ազատագրուէին սերպիբը, յոյները, բուլղարները, ղուկարները, մոնթենեգրոցիները: Այսպէսով՝ 19-րդ դարու վերջերը իր եւրոպական կալուածէն Թուրքիոյ կը մնար միայն պայքաններուն հարաւը բռնող Ռումէլիս:

Ճ

Նկատի ունենալով Օսմ. Թուրքիոյ տրէնդադրական եւ վարչական ախտաւոր դրութիւնը՝ Եւրոպական պետութիւնները, ոտնակոխ ընելով սուլթանական վեհապետութիւնը, թէեւ իրենց Թուրքիա-թանկ հպատակներուն համար լայն տառանջանորոշումներ ապահոված էին, սակայն իրենց դիտարկումներուն եւ հիւսիսադարձներուն աչքին դիմաց Թըքահայաստանի քրիստոնեաները միշտ ենթակայ կը մնային բռնութիւններու եւ հալածանքի, ինչ որ առիթ կը հայթայթէր Ռուսիոյ տեւական յարձակումնե-

րուն: Ըլլա՛յ քրիստոնեայ տարբին կոտորածներու դարձան մը տանելու նկատուածով, ըլլա՛յ, մանաւանդ, ռուսական յարձակումներուն քաղաքական անդատահոսութիւնները կանխելու մտահոգութեամբ, եւրոպական պետութիւնները, Անգլիոյ գլխաւորութեամբ, յոճախ ճնշում կը բանեցնէին Թուրքիոյ վրայ՝ երկրէն ներս ընդհանուր քարեկարգութիւններ մտցնելու: Եւ ի վերջոյ Թուրքիան ալ, կամայ թէ ակամայ, չէր կրնար տեսալէս անընկաւ Թուրքի բարեկարգութեան պահանջը՝ ինքզինքը ենթակայ պահելով նոր քարձակումներու կամ ճնշումներու վտանգին: Հետեւաբար 19-րդ դարու ընթացքին պատեւեցան իրերայալոքը քանի մը առաջնորդներ եւ քարձակոյն պայտօնատարներ, որոնք, եթէ ոչ աւելի արդար կարգեր հաստատելու գաղափարական առաջադրութեամբ, բայց գէթ պետութիւնը շարունակական քայքայումէ վերելու մտահոգութեամբ մը, հարկը զգացին քարեկարգութեան փորձեր մը կատարելու կամ այդ կարգի բաներ մը ցուցադրելու:

Նթէ մէկդի դնենք Մահմետ Բ-ի ձեռնարկները, — որոնք վարչական դեռուի վրայ յանդէպան պայտօն խախտած հեղինակութեան վերահաստատումին եւ մշակութային գեանի վրայ քանի մը մասնագիտական վարժարաններու հիմնադրութեան, — քարեկարգութեան առաջին լուրջ փորձը կ'ըլլայ Կիւիտնէի Խաղդը հիմնադրութիւնը: Մուլթանական այս հրովարտակը կը հռչակէր երկրի բոլոր հպատակներուն իրաւական հաստատութիւնը, առանց ցեղի եւ դուռանների խտրութեան, եւ այդ հիմնական սկզբունքները: Այս հանդիսաւոր յայտարարութիւնը, սակայն, առանց իրագործման որեւէ լուրջ փորձի, իր շուտ մասնակի եւ սահմանափակ արդիւնքներով, երկրի ընդհանրութեան որեւէ քարեք բերելու կոչուած չէր:

Իրիմի պատերազմին վերջաւորութեան (1856) Անգլիա եւ Ֆրանսա, որոնց մտադրանքները Սեւ ծով մտած էին ռու-

օին դէմ թուրքը պաշտպանելու համար, Նեպոլեոնը դուրս ելլելէ առաջ պարտադրեցին սուլթանին որ Թուրքիոյ մէջ լըթօրէն ձեռնարկուի պահանջուած բարեկարգութիւններուն: Անոնց ճշումին առկա սուլթանը հրատարակեց նոր փերման մը, որ նախորդ խաղաղը եխմալուօնի սկիզբունքներուն վրայ ձեւակերպուած օրէնդրութիւն մըն էր եւ որ կոչուեցաւ քանգիւմաք: Սակայն քանգիւմաքը եւս սեռեակալ տառ մնալու դատապարտուած էր, կամ՝ գրեթէ:

1875-ին, դարձեալ մեծ պետութիւններու պահանջով, սուլթան Ապուլ-Ազիզ ստորագրեց բարեկարգութեան նոր հրովարտակ մը, որ ըստ էութեան նախորդ երկուքին վերհրատարակութիւնն էր: Բայց այս շրջանին հրապարակի վրայ երեւցող կարգ մը ազատական տարրեր, օգտուելով օրուան թոյլտառութեամբութեան 1876-ին կրցան սուլթանին ընդունիլ տալ օսմ. առաջին սահմանադրութիւնը (որուն խմբագրման մէջ լայն մասնակցութիւն ունեցաւ Գ. Օտտոման՝ իրեն զլխաւոր գործակիցը Միտհատ Փաշայի): Ասիկա 19-րդ դարու բարեկարգչական զանաւոր վերջին տարրն էր: Սուլթան Համիտ այս սահմանադրութեան վրայ երգում ընելով դաւ պիտի բարձրանար՝ տարի մը շանցած օրքին առկա տրուելու համար թէ՛ սահմանադրութիւնը, թէ՛ սահմանադրականները: Անկէ վերջ Օսմ. Թուրքիոյ վրայ պիտի հաստատուէր պատմութեան ամէնէն դաժան բռնակալութիւններէն մէկը՝ Համիտեան ընթացքը, որ պիտի տեւէր մինչեւ 1908-Թ-ի սահմանադրութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԹՈՒՄԸ ԵՒ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Այսուհանդերձ, ինչ որ ալ եղած ըլլար բարեկարգութեան փորձերուն իրական շարժառիթը, 40-50-ական թուականներուն, ռուսական նոր յարձակումներու սպառնալիքին եւ եւրոպական պետութիւններու ճնշումին տակ, Թուրք քաղաքական ղեկավարութիւնը պարտա-

ւոր էր, ամէն գնով, երկրի ընկերային-վարչական կեանքին մէջ փոխուած բան մը ցոյց տալ եւրոպայի աչքին: Իսկ առիկա անհրաժեշտ էր, մանաւանդ, եւ կարելի գէթ քանի մը գլխաւոր ուստաններու՝ առաջին հերթին մայրաքաղաք Պոլսոյ եւ Իզմիրի մէջ, ուր կային եւրոպական դեսպանատներ, հիւպատոսարաններ, կրթական հաստատութիւններ եւ ընկերութիւններ, ինչպէս նաեւ որոշ թիւով եւրոպացի հասարակութիւն: Հետեւաբար այս քաղաքներու թրքահայատակ քրիստոնեաներու (գլխաւորաբար յոյներ եւ հայեր) քաղաքացիական կացութիւնը զգալի չափով մը կը բարելաւուէր կառավարութեան օրինական թոյլտառութիւններով, երթեւեկի ազատութիւն, առեւտուրի եւ մշակութային ձեռնարկներու դիւրութիւններ, մինչեւ իսկ իրաւունք (անշուշտ փաստօրէն սահմանափակուած) կառավարական պաշտօններ ստանալու: Բայց այս շրջանին կառավարութեան վերաբերմամբ թոյլտառութեամբէն բացառու հայ տարրին վերաբերմամբ, որ մինչ այդ որեւէ քաղաքական պահանջ առաջադրած չըլլալով՝ «միլլէթի սատրզա» (հաւատարմ ազգ) էր տակաւին: Արդ՝ հայերը գիտցան լաւապէս օգտուիլ իրենց տրուած մասնաւոր արտօնութիւններէն եւ հիմնովին վերանորոգել իրենց հասարակական կեանքը: Արտաքին առեւտուրը մեծ մասամբ կեդրոնացաւ հայ տարրին ձեռքը եւ ժողովուրդին հետզհետէ բարեկալուող աշխատեցութիւնը զարկ տուաւ գաղթական ցանցի տարածման, որ մինչեւ դաւաճական քաղաքները հասաւ: Ասիկէ զատ մեր ազգը առիթը կ'ունենային՝ ազգ. վարժարաններու համեմատ կրթութեան վերջ իրենց ուսումը շարունակելու վերոյիշեալ մեծ քաղաքներու եւրոպական կրթական հաստատութիւններուն եւ կառավարութեան քանի մը մասնագիտական հաստատութիւններուն մէջ: Իսկ կրթութեան այս ծաւալումը ընկերային նոր պահանջներ կ'առաջադրէր անշուշտ:

Սակայն մեր հանրային կեանքի կաղձաբերական եւ գաղափարային աջ շար-

ժողովին յառաջագահի դերը ստանձնողները պիտի ըլլային այն խումբ մը երկատասարդները, որոնք իրենց ուսումը ստացած էին Եւրոպայի մէջ եւ մօտէն ճանչցած եւրոպական ժողովուրդներու ընկերային յառաջդիմութիւնները: Նախորդ դարու 40-ական թուականներուն վերջը Փարիզի մեր ուսանող աղաքը իրենց աչքովը տեսած էին Փրոտեստի ժողովուրդին արեւնոտ ըմբոստութիւնը իր դրսեւորները խլելու համար իր ազգային կառավարութիւնէն իսկ: Վերադարձին այդ երկատասարդները իրենց հետ կը բերէին դարը ալեկոծող ժողովրդավարական գաղափարներու խանդը: Մինչ այդ շրջանի հայութիւնը անհաղորդ չէր հարկաւ այդ գաղափարներուն: Անիկա իր պայքարը սկսած էր արդէն մեր համայնքային գործերու մատակարարման վերաբերմամբ պատրիարքի մենատիրութեան կամ ամիրաներու ազնուապետական վարչութեան դէմ: Սակայն Եւրոպայէն վերադարձող երիտասարդներու խումբն էր, որ շարժումը գլխաւորելով զայն պիտի հասցնէր իր տրամաբանական հիշքին՝ ազգ. «անհամարժեքան» որ հիմնովին պիտի բարելւէր մեր ներքին կեանքի վարչական դրութիւնը:

Բայց ծայր առնող ժողովրդական շարժումը չէր կրնար սահմանափակուիլ վարչական բարեկարգութեամբ: Ընկերային կեանքի երեւոյթները չղթյալաբար կը կապուին իրարու: Կրթութեան տարածման դուզահեռարար նոր պահանջներ ծնունդ կ'առնեն: Ուսեալ հասարակութիւնը պէտքը կը զգայ առօրեայ մամուլի եւ գրականութեան՝ ըլլա՛յ քալելու համար ընթացիկ կեանքին հետ, ըլլա՛յ հաղորդ դառնալու համար գաղափարներու եւ գաղափարներու աշխարհին: Իսկ ոգեկան այդ հաղորդակցութեան համար անհրաժեշտ էր որ մինչ այդ հրապարակին տիրող ժամանակավրէպ գրաբարը նահանջէր ու ապաստանէր մեր եկեղեցիներէն ներս՝ իր տեղը տալով մեր արդի գրականութեան՝ նոր լեզուով, նոր բովանդակութեամբ: 40-ական թուականներէն սկսեալ մեր ընկերային կեանքի բո-

լոր երեսները հետզհետէ կը վերանորոգուին, կ'արդիականանան (տեղի՞ն է արդեօք յիշել որ այս շրջանին հայ մամուլի եւ թատրոնի կողքին թրքական մշակոյթի այս ճիւղերուն հիմնադիրները եւս հայերը եղան):

Համաժողովրդական մշակութային այս շարժումը կոչուած էր մեր պատմութեան նորագոյն շրջանը բանալու: Դառնալոր քոնակալութեան մը ճնշումին տակ կըսած ազգ. գիտակցութեան եւ արժանապատուութեան ցնցումի եւ վերականգնումի շարժում մը, որ ընդհանուր առմամբ յատուկ է նոր արթնացող կամ նորէն արթնցող ժողովուրդներու պատմութեան հոգեբանական մէկ պահուած: Այդ օրերուն մեր ընկերային կեանքի բոլոր երեսները խանգավառ հայրենասիրութեան մը կնիքին տակ են: Վարչական ժողովներ ու միութիւններ, դպրոց ու մամուլ, գրականութիւն ու թատրոն կը սպասարկեն մեր ժողովուրդի ոգեկան վերադարձութիւն: Մեր ազգային արժէքներն ու արժանիքները կը պանծացուին՝ հող չէ թէ երբեմն խոշորացոյցի տակ դիտուելով: մեր մոռցուած անցեալը կը վերաբացուի իբրեւ վտարներու հանդիսարան՝ թի՛ղ թէ՛ քիչ մը ուսած փառքերու: մեր պատմութեան գերակառարները կեանքի կը վերակոչուին մեր գրականութեան մէջ թէ՛ բնին վրայ՝ թէ՛ կողքին մը աւելի զիւրացնացած կերպարանաքով: Հայրենասիրական լոմանքի գեղումներու մթնոլորտ մը հայ մարդուն կը ներշնչէ իր հայ ըլլալուն հպարտութիւնը:

Անշուշտ մեր երկրի վարչական ու մշակութային կեդրոններէն ծագում առնող ոգեկան այս շարժումին բոլորովին անհաղորդ չէր նաեւ մեր երկրի ժողովուրդը, մանաւանդ քաղաքային բնակչութիւնը: Բայց մինչ երկրէն գուք ինկած քանի մը գլխաւոր ոստաններու հոս-յուրիւրը բազմաոտար աւելի թայտաւորութեան պայմաններու մէջ կ'ապրէր, քուն հայրենաբնակ գոնդուածը արիւն կու լար տեղական պաշտօնեաներու շահասակութիւններէն եւ արտօն-

ուսած աւազակախումբերու բռնութիւններէն: Տեւապէս տեղեկագիրներու լուսերէր կը հասնէին պատրիարքարան՝ տեղի ունեցող ապստամբիւններու, թալանի եւ անաւանորոշման մասին: Եւ պատրիարքարանէն ալ այդ տեղեկութիւններուն համապատասխան քաղաքներ կը տեղային Բ. դրան՝ զբարեխնամ զաւապարտութեան աշխատութիւնը հրահրելով հայրենակ զաւաններու կացութեան վերջոյ: Բայց պատրիարքական այդ քաղաքներէր կառավարական դիւանատան մէջ միմեւոր արքայ ըլլալու սահմանուած էին, որովհետեւ կառավարութեան վերաբերումը նոյնը չէր իր բնիկ երկրին մէջ ապրող հայութեան հանդէպ: Այլապէս՝ Բ. դուռը պէտք չունէր պատրիարքարանի տեղեկագիրներովը ծանօթանալու իր կայսրութեան մէկ շրջանին կացութեան մասին, որ իր ուղղակի կամ անուղղակի թելադրութիւններով իսկ կը ստեղծուէր եւ իր քաջակերպական հաւանութեամբ կը յարտուէր: Կառավարութեան տեսակէտով՝ հայ ժողովուրդը իր բնիկ երկրին մէջ պէտք էր պահել ստրկացնող ճնշումներու եւ բռնութեան տակ, որպէսզի պաշտօնատնային ժողովուրդներու օրինակով անխտական շարժումի չդիմէր: Կը հետեւի, ուրեմն, որ բարեկարգութեան փելմաններով երկրի մեր ժողովուրդին կացութենէն բան չէր փոխուած:

Բայց փոխուած էր հայ ժողովուրդին, մանաւանդ հայ ղեկավար շրջաններուն, հողեկան վերաբերումը կացութեան հանդէպ, եւ հետեւաբար կարելի չէր այլեւս հայութիւնը ենթակայ դառնել շարունակուող ստրկական պայմաններուն:

Նիշդ է, իր զարթոնքի սկզբնական շրջանին մեր ժողովուրդը մղատման ու համարձակութիւնը շունի տակաւին իր քաղաքական կամ քաղաքացիական կեանքի յեղաշրջումին, ճիշդ է որ մեր հայրենասիրական շարժումը, առաջին օրերուն, քնքի մէջ ամփոփուած, ինքիքին բաւող հուզական խնջօք շարժում մըն է դեռ: Բայց... Վերջ հայկազունք, յառաջ

ընթանանք: Պատմութեան հոլովոյթը չէր կրնար քարացած մնալ այդ հանգրժանին վրայ: Ուշ կամ կանուխ, ըլլալ ներքին հոլովոյթով, ըլլալ դէպքերու արտաքին մղումով, հոգեկան այդ շարժումը կոչուած էր յանգելու աւելի զորեւեակեան առաջադրութիւններու հետապնդումին:

Բայց մենք հոս աւելորդ կը գտնենք տնտեսալ դէպքերու եւ անուններու, թիւերու եւ թաւականներու մանրամասնութիւններուն վրայ, որոնցմով լեցուն են մեր պատմութեան դասագրքերը եւ որոնք անհրաժեշտ լրացում մը չեն բերել մեր նիւթի ընդլայնումին: Հետեւաբար մենք կը բաւականանանք տալով քանի մը գլխաւոր հանգրուանները մեր դատին՝ առնչաբար թուրք քաղաքական դեկավարութեան վերաբերումին:

Ծանօթ են Անգլիոյ խաղերը՝ 1878-ի Սան-Ստեֆանոյի դաշնագրով Ռուսիոյ ապահոված հողային եւ քաղաքական շահերը նաւազագոյն չափին իջեցնելու: Այդ դաշնագրի վերաքննութեան համար իր նախաձեռնութեամբ գումարուած Պերլինի վեհաժողովին կողմէ հայկական նահանգներու բարենորոգումներուն վերաբերեալ 16-րդ յօդուածը 61-րդի վերածուելով ըովանդակութեամբ նոյնը կը մնար թէեւ, բայց կը փոխուէին այդ յօդուածին գործադրութիւնը երաշխաւորող պայմանները: Սան-Ստեֆանոյի դաշնագրով Ռուսիա իրեն իրաւունք կը վերապահէր՝ մինչեւ բարենորոգումներու գործադրութիւնը դրուած ըլլալով մեն պետութիւններու հաւաքական երաշխաւորութեան տակ՝ Ռուսիա հարկադրուած կ'ըլլար իր ուժերը քաշելու յիշեալ շրջաններէն, ինչ որ հայ ժողովուրդը կը զրկէր սպասուած բարեկարգութիւններուն դրական երաշխիքէն: Այսպէսով՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրով նպաստաւոր սկզբնաւորութիւն մը ունենալու կոչուած մեր դատը

Պերլինի դաշնադրով ազնետուր ընթացք մը պիտի օտարանար ենթակայ դառնալով հետապնդան պիտութիւններու քաղաքական խաղերուն եւ փաստօրէն յանձնուած մեղքով թուրքիոյ խղճմտանքին։

Թուրքիան, քայքայ մանաւանդ Համիտեան Թուրքիան, անշուշտ պիտի գիտնար լուսապէս օգտուիլ եւրոպական պետութիւններու այդ խաղերէն, քայքայ մանաւանդ Անգլիոյ եւ Ռուսիոյ քաղաքական հակամարտութիւնէն՝ այս վերջիններուն փոփոխական դիրքին համաձայն յարելով մէկուն կամ միւրին՝ ազատօրէն զործադրել կարենալու համար հայկական հարցը շուրջ թափելու իր միջոցները։

Այդ միջոցներէն մէկը եղաւ հայկական շրջաններու վարչական բաժանումները սահմանային տնայալիսի փոփոխութիւններու ենթարկելը որ հայը իր երկրին մաս կազմող նահանգներուն մէջ մեծամասնութիւն չունենայ։ Այս կերպով կազմուած վարչական միութիւններէն նտերուն մէջ հայ տարրը իր մեծամասնութիւնը կը կորսնցնէր քաղաքամար միւսերի մարերին (ո՛չ առանձնապէս Թուրքիին)։

Այս նպատակով հետապնդուած ուրիշ միջոց մը եղաւ քիւրտ աշխրհներու տեղաւորումը հայկական շրջաններու մէջ։ Հայկական հարցի ծագումէն վերջ, քանի մը տասնեակ տարիներու ընթացքին, կառավարութեան քաջախիւրտով եւ ընձեռած փութութիւններով, նախկին հարիւր հազարաւոր քիւրտ բնակչութեան վրայ հ'աւելնար հարիւր հազարի քաղմութիւն մը եւս։

Յակասի հին թէ նոր այս քիւրտ զանադուածներուն դերը պիտի չլլար միայն միւսլիմ տարրին թուական յաւելումին ծառայել։ Անոնք կառավարութեան ձեռքը թանկագին դործիք էին հայ ժողովուրդը իր երկրին մէջ տեւական արհաւիրքի տակ պահելու՝ արտօնուած ըլլալով ամէն կարգի բռնութիւններ պարծադրելու։ Ի վերջոյ այս տարրերէն պիտի կազմուէին օրտան սուլթանին՝ անուշով Կէմալիոյն կողմէն այն համապատասխան

տաւոր անկանոն հեծեալադուները, որ օտարաւոր պիտի ըլլային ոչ թէ սուլթանին արտաքին թշնամիներուն դէմ նետուելու, այլ սուլթանին հրամանով արիւնի մէջ խեղդելու հոս ու հոն երեւան եկող հայ դիմադրական շարժումները։

Պերլինի վեհաժողովին յաջորդող տարիներուն հայ ժողովուրդը ի գործ պիտի օգտակէր քարենորոգումներու գործադրութեան։ Միջազգային դաշնադրով շահուած այդ տարրական իրաւունքը պահանջող մեր դիմումներն ու բողոքները ամբողջապէս կը դատապարտուէին։ Ընդհակառակը՝ հայկական հարցը իր սարսիւն մէջ իսկ խեղդելու համար կառավարութեան ձեռք առած ուղղակի կամ անուղղակի միջոցներով երկրի հայութեան կացութիւնը հետզհետէ անելի կը ծանրանար։ Ժիշդ է որ 61-րդ յօդուածին գործադրութեան պատասխանատուութիւնը ստանձնող պետութիւնները չէին թերահար ոտեն-ոտեն յուշագրիւնի յղելու Բ. դրան՝ պահանջելով բարենորոգումներու անյապաղ իրագործումը։ Բայց, ընդհանրապէս, այդ ձեւական պահանջին շուտով կը յաջորդէր Թուրք կառավարութեան կողմէն կաշառուած զինումը։ Թէ ի՞նչ բնոյթ ունէին այս յուշագրիւնները մինչեւ իսկ 1895-96-ի զանադուածային ջարդերէն ետք, որոնք Եւրոպայի մէջ անպաշտօն մատուցականներու յուզումնալից ճառերուն նիւթ կը մատակարարէին՝ ասոր քայքայութիւնը թող տայ մ. Նանտէն, այսինքն՝ նոր ժամանակներու ամէնէն հազուադէպ զաղափարական առաքանքներէն մէկը, որ միշտ ինքզինքը դուրս պահեց քաղաքական շահագրգիռութենէ, Վիեննայի պետական դէմքերը հայկական ապրաքաններուն առջեւ եւրոպական հասարակութեան զգացած յուզումը կը ծառայեցնէին պարզապէս իբրեւ ճշուամբ միջոց մը Թուրքիոյ վրայ, անկէ խելոյս համար նորանոր զինումներ՝ իրենց երկրին համար, առանց իրապէս օգնելու մարտիրոս ժողովուրդին, որուն տառապանքները կը շարունակէին հայթայթել

ճառերու ազդուոր նիւթ մը» (Հայոց Պատմութիւն, Բ. Հատոր, էջ 114, 4. Պատարմանեան) :

Ինչ որ ալ ըլլար, սակայն, ստեղծուած կացութիւնը, Հայ ժողովուրդը յայնս չէր կրնար հրաժարել իր դատի հետապնդումէն՝ թէկուզ ատկա կարելի ըլլար քաղաքական պայքարի լարծուն ճամբով, ուր առաջին քայլը նեաած էր արդէն իր դատը նիւթ դարձնելով միջնադարին ժողովներու օրակարգին. թէկուզ կարելի ըլլար ազատագրական կռիւի արիւնքով ճամբով, ուրիշ իրմէ առաջ անցած էին պալլածնեան ժողովուրդները : Արթնցած էր Հայուն ազգային գիտակցութիւնն ու կամքը : Գանի մը տառնեակ տարիներու անցելուպաշտ Հայրենասիրութեան տեղ այժմ Խրիմեանները, Պատկանեանները եւ Բաֆֆինները աւելի ազատատենչ ու գործօն Հայրենասիրութիւն մը կը քարոզէին՝ ցոյց տալով միանգամայն ազատութեան գոնդակ ճամբան եւ ատով իսկ ըլլալով յառաջապահները մեր նորագոյն պատմութեան ամենին փորձանուտ շրջանին : Մեր յեղափոխական շարժումը պիտի սկսէր մեր պատմութեան հոլովոյթին ճակատագրական անհրաժեշտութեամբ :

80-ական թուականներուն վերջերը երեսն եկան մեր յեղափոխական կազմակերպութիւնները իրեն պահանջատէր մեր շահուած, բայց՝ նենդուած դատին եւ, անշուշտ, առաջին հերթին, միջազգային դաշնագիրներով ճշգրտած բարեփոխումներու գործադրութեան պահանջով : Այլ անկէ վերջ աղերսագիրներով եւ խոնարհ դիմումներով չէ որ պիտի հետապնդուէր Հայ դատը, այլ մասնաւոր յեղափոխական պայքարի միջոցներով : Պէտք էր Հասկցնել թուրքին թէ Հայ ժողովուրդը Համակերպող ըստրուկը չէ այնեւ եւ միանգամայն պատասխանատու պետութիւններուն զգացնել գործնական միջամտութեան մը անհրաժեշտութիւնը՝ յանձն առնուած բարենորոգումներու գործադրութեան Համար :

Եւ ահա իրարու յաջորդեցին բողոքի

ցոյցերը, ահաբեկումները, ֆետայական շարժումներն ու զանգուածային ըմբոստացումները, այսինքն՝ զարի արանց գործերու եւ զմայցեալ գոհաբերութիւններու կարմիր շարան մը ամբողջ, որ մեր պատմութեան մէջ փառքի եւ աղէտի անօրինակ շրջան մը պիտի բանար : Մեր ազատագրական շարժման այդ դրուագները խիզախութեան եւ անձնուրացութեան բացառիկ օրինակներ են անշուշտ, որոնք իրենց ներշնչական գործութեամբ միշտ պիտի ծառայեն նոր սերունդներու ոգեկան կրթութեան : Եւ սակայն թուրք բռնապետութիւնը անմիջապէս դիմումի դրօշը պիտի չխոնարհեցնէր յեղափոխութեան գրոհին առջեւ : Անոր հակահարուածը սաստիկ է եղած միշտ իր ճշդումին տակ ինկած ժողովուրդներու ազատագրական խոյանքին դէմ : Իսկ մեր շարժումին դէմ այդ Հաւակարուածը պիտի ըլլար շատ աւելի վճռական ու հետեւողական, այսինքն մեզի Համար շատ աւելի եղբրական : Մեր երկրի պայմանները նման չէին պալլածնեան երկիրներու պայմաններուն : Մենք պարտաւոր էինք կռուել ո՛չ միայն պետութեան պաշտօնական ուժերուն դէմ, այլ նաեւ մեզ զանգուածօրէն շրջապատող բարբարոս տարրերուն դէմ, որոնք, իրեն գործակիցները պետական ուժին, մեր շարժումներուն աջատ ընթացքը կը խափանէին : Ասկէ զատ՝ մենք Ռուսիոյ մնայուն բարեկամութիւնը չունեցանք (*), ոչ ալ ի նպաստ մեր դատին մեն

*) 10-րդ դարու 20-ական քառանկաններում վերջերս Ռուսիա վերջնականապէս կը հաստատուէր Անգլոփոկականի մէջ՝ Ժողովական արշաւի նախապատ մը բռնալով Ասիա Մերձ. Արեւելի վրայ : Իր այս աշխարհակալական նախաձեռնարկի առնչութեամբ Ռուսիա խոստումներ կուտար մեր ժողովուրդին՝ գրաւելիք հայկական հողերուն վրայ ստեղծելու իմաստարար շրջան մը՝ իր հովանաւորութեամբ տակ : Իրեն ներշնչուած յոյսերով խնդրվաւ՝ շրջանի հայաբնակ հասարակական բնակչութեան գործակցեցաւ ռուսական բանակին, որ յաջից նախ Պարսկաստանի, ապա Թուրքիոյ եւ գրեթէ Անգլիոյ վրայ մեծ

Պարզ չէ՝ եղբայրացութիւնը: Գիտութիւնը պիտի սկսի երկինքը պեղել, իսկ գրականութիւնը երկինքէն երկիր պիտի իջնէ:

Գուցէ կը լափաղանցեմ՝ հաստատեալով ճշմարիտին գերազանցութիւնը գեղեցիկին վրայ կամ գիտութեան գերակշռութիւնը գրականութեան վրայ, բայց չեմ սխալիս ապահովաբար:

Գիտութիւնը ուղենիշ մըն է հիմա, գրականութիւնը պարզ ուղեկից մըն է: Ասիկա բարեբախտութիւնն է թէ զժրատութիւն:

Ո՛վ կրնայ ճշդել...

Բ. ԹԱՇԵԱՆ



ԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Կ'անցնինք Երկրորդ Հոսանքին, զոր մարքսիսթները կը կոչեն Վանկուսային, դրամատիկական ազդեցող, հիւանդագին երեւակայութեան մակարդակին ծր-փառացող անիրականութիւնն: Այս Հոսանքը, իր երկու ճիւղերով՝ կարելի է որսակել որպէս Գիւնիլիսթ, այն իմաստով որ ժխտումն իսկ է բարոյական ու գեղագիտական այն բոլոր սկզբունքներուն որոնք ի դարձ կ'են 19-րդ դարուն: Բայց չի բաւեր Առտուած ճամբու դրած ըլլալ: Անոր հետը դեռ կը յամենայ մտքի գրասենեակներուն մէջ ու յիշատակը աւելի հզոր կը թուի ըլլալ քան ներկայութիւնը: Ամէն պարագայի, մէկ քան լահուած է, մարդուն առանձնութիւնը, զոր խճողած էին հազար մեծ ու պզտիկ իտէալներով: Հիմա գիտենք պոնէ որ առանձին ենք: Առաջ ալ էինք, բայց չէինք գիտեր: Որքան մօտենանք իրականութեան, այնքան աւելի պիտի նետուինք երազանքի բղբառող շղարշներուն մէջ ու պիտի հեռանանք հայելիներու մակերեսէն, այնքան աւելի պիտի մօտենանք հակասութիւններու անխմանալի քառազիւին ուր մերկ որքը նստեր կը դողդողայ: Գիտութիւնը ինքզինքը ժլտտելով միայն պիտի կարենայ դիմանալ միջինն որ հասնի ժամանակի կծիկին ծայրը, առանձնութեան պզտիկ ճախարակին: Այնպէս որ ճամբայ չեւած՝ արդէն հասնի ենք:

Պատերազմները, յեղափոխութիւնները ու առտուայ երկուքի պետական հարուածները իրենց պատճառած չարքին կողքին գոնէ մէկ դրական արդիւնք ունենցած են միշտ: Խաղաղութեան

մէջ, մարդիկ մաշկ ու մամուռ կը կտւեն, կը համակերպին, կը տափահնան, կը թմրին, կը վերմականան: Պատերազմը սակայն, մահուան յաճախեցող ու ցաւի արժանացումով՝ կը սրէ ու կը պրկէ ջիւղերը ու կոտորած պուպրիկի աշփէն՝ յանկարծ տիեզերական հակասութիւններու ու համատարած անհեթեթութեան նայուածքին մէջ կ'իյնայ, կը թռնուի: Հսկայ վարազոյրը կը դոցուի ու խոր լուսթեան մէջ սրահի ողբերգութիւնն է որ կը սկսի, ի վերջոյ, Ու արուեստի մարդուն կ'իյնայ քունէն արթնցած այս նոր զգայնութեան ուղղութիւն մը տալ, առնուազն մեկնարանել: Յարանական ու Ռուսական յեղափոխութիւններու ջուռն շողարձակումը ծանօթ է արդէն: Վերջին պատերազմները դեռ զգալի է, Եւրոպայէն մինչեւ Ամերիկայ, Գոյապալաութիւն, Ենիքի Եմեկ Մէն, Պիքսի, Կրուսի 57 - ամէն երկրի իր ոճով, իր տաշնապին մէջէն յանկարծ դիտակցեցաւ թէ ճամարտութեան պէս բան մը դարանակալ կը պահուրտէր Հոն ուր Հին խանութիւններու մէջ ծալլապատիկ օճառի վաճառականներու գործէ հանուած պաշտօնեաներ, եպիսկոպոսներու եւ համով բժիշկներու քարոզները մտիկ կ'ընէին, առաջ: Մանաւանդ մենք Հայերս, այս հարցին մէջ թանձր անթափանցութիւն մը ցոյց տուած ենք որ պատիւ կը բերէ մեր նախահայրերուն բայց ոչ մեզի: Գրեմք երեւակայել հայ դրող մը, կամ պարզապէս միակամի հայ մը՝ որ յանդգնի հայհոյել Առտուած ու եկեղեցիին, ծիծաղի առարկայ դարձնէ մայրութիւնը ու հայրենիքի

գաղափարը, միասնականության մասին հրապարակաւ արտայայտուի, փորձէ արդարացնել հաշիշի մոլութիւնը, քեփականութիւնը անտեսէ, Հայութեան հոգիին երկու փարա շտապ, կուտակեցութիւն ու բարեկեան առաջնորդը քննադատէ: Ահաւոր դալթակցութիւն...: Եւ սակայն այս տեսակ երեւոյթի մը մասին խօսիլ ստիպուիլն իսկ է մեծագոյն դալթակցութիւնը, 1968-ին: Փարիզեան սերունդի փորձը այս ուղղութեամբ՝ անցեալի մեծ ու մրոտ շուքին տակ ինկած ինքնապատուկ կայծոռիկներու շուրջնէն կը նմանի: Ի՞նչ մըլնաց, ո՞ւր եղ արտօր: Բայց անցնինք, դարը կը հրէ:

Այսպէս է որ, վերջին պատերազմը իմացապաշտ կամ օպիմացապաշտ ու գեղապաշտ երկու հոսանքներու ծնունդ տուած է, Եւրոպայի ու Միացեալ Նահանգներու մէջ: Կարելի է պայն կոչել Նիւիթիսթ օգիլի մը արտայայտութիւնը. կեղծ ու անկարելի բարոյականէն, որ-նանկացած ընկերային խախտներէն ու մանաւանդ մարդկային իմացականութենէն յուսախաբուած հոգեբանութեան մը՝ վաւերական ճշմարտութիւններու փնտռութիւնը նետուելու պահանջը ու քաջութիւնը: Կան այս երկուքը անկասկած ներկայ դրականութեան մէջ, նոյն-իսկ եթէ տարակուսիք այդ մարդոց կարողութեան մասին: Կը սկսինք Գերմանիայով:

Տարօրինակ պուրահեականներ կարելի է գծել դերման ու հայ դրական կացութիւններու մասին: 1946-ի Գերմանիան ու 1920-ի Հայութիւնը...: Գերմանիան բաժնուած, առանց մայրաքաղաքի ու խղճմանքի, շուարած ու թուրքովին յուսալքուած իր աւերակներուն մէջ, ուրիշ ժայն մը սակայն, ճիշդ կ'ըլլէր որ, Վլոֆկանկ Պօլէրթ-ի բերնոյ կ'ազադակէր հետեւեալը, այնքան նման ճն 1920-1930 ըրջանի մեր հայ բանաստեղծներու աղիողորմ կանչերուն, Հէլսինքիէն մինչեւ Գաշիքէն - Վիեննա շաղանց կապի ու խորքի սերունդն ենք: Վիեննա մը ունինք խորքի տեղ: Երջանկաւ-

թինէ, հայրենիքէ զրկուած, անվերադարձ մարդերու սերունդն ենք: Տփույն է մեր արեւը, անգութ է մեր օդը, եւրիտասարդներ, երիտասարդներ... առանց երիտասարդութեան: Անսահման, անզուպ, անպաշտպան սերունդն ենք մենք:

Բայց տարիները բարդուեցան, Գերմանական Հրաշքը եկաւ ու մեղմեց մարդոց ջղազալար զգայարանները. սակայն միայն աւագոտ անքնութիւնը, բանդա-գուշանքը դրողին: Ու 10 տարի ան փնտրուեց իր ինքնութիւնը, իր մշակոյթը, փախաւ հեռաւոր անցեալին մէջ, երեւակայեց օտար երկիրներ: «Եւրոպա» ու էսքիմօներու մասին շատ աւելի դիւրեւր դրուեցան քան Գերմանիոյ մասին, կըլ-սէր քննադատ մը 1963-ին: «Գերման արդի դրողը առանձին մարդն է», կը բանաձեւէր Ուոլթըր Չէնս, «անանցեալ, աններկայ, անպապաջ ու աներկինք»:

Հոս կը դադրի գուշահեռականը: Մենք տասը տարի մայր ու ըոր կանչել վերջ, հաշտութիւն կնքեցինք կեանքի հետ. հայ սկսանք ու հայ մնացինք: Գերմանիա սակայն տարբեր ժողովուրդի երկիր է: Վերջին Ե տարիներուն երկու տիրական դրողներ ի յայտ եկած են որոնք կրցան գերման դրականութիւնը հանել իր դաւառական կաղապարէն, իր ազգային մտածելակերպէն, կրցան բարձրանալ յետ-պատերազմեան ցուցակաւ դրական իրապաշտութեան մը հոգեբանութիւնէն՝ ու հասնիլ Մարտական դրական զգայարանքին մօտերը: Այդ անձե-րը կը կոչուին Կիւնթըր Կրաս եւ Իու Չոնսրն:

Կիւնթըր Կրաս-ի անունին կապուած է միջազգային համբաւ մը զոր շինեց իր «Կիւնթըր - Թիթեզ» թմբուկը (1961), Կատուն ու Մուկը (1962) եւ Դոմիքի Շունը (1965): 18 տարեկանին արդէն պատերազմական վեթէրան, կէս-լեւ, կէս-գերման դրական այս Գրուոզըր-ը որ ազարակէ, հանքէ, դժադրական դրասենեակէ ու դերեզմանաբարի փորա-գրութեան գործատեղիէն վերջ միայն հասաւ գրականութեան՝ քերթուած:

թաւորն ու վէպ՝ տարօրինակ խառնուրդ մըն է նորի ու հինի։ Առհասարակ, գերման արձակագիրները իրենց ոճային զգայարանքով կամ արուեստի նորութեամբ չէ որ կը հիացնեն մեզ։ Եղբրական ծանր միջոցներ, խորհրդանշական հակամենք, բնագոյնական մըտաւորութիւններ — կրկին գերմանական յատկանիւններ են։ Այս բոլորը կայ Կրասի արուեստին մէջ։ Ինչ որ նոր է, իրապաշտութեան ու գաղափարի, արուեստի ու կեանքի, մէկ խօսքով դրական աշխարհաշէջի նոր միաձուլումն է։ Կրաս ու իր հերոսները կ'ըմբոստանան հինի ու ներկային գէժ, կը հարուածեն քաղաքակրթութիւնը, քաղքենի իրականութիւնը Գերման շրջանին, ասօքայնութիւնն է ան, ինչպէս եղան Սարթը, Ժրնէ, Քամիւ, Քէրուաք ու իր խմբակը, Բիթթըր ու Ապիւրտի թատրոնին ներկայացուցիչները։ Թիթիզէ Թմուկին հերոսը, թղուկ Օսքար, անխորհրդ կը ծաղրէ, կը ծաղկէ, անընազնի կը դարձնէ կեղծ քաղաքակրթութիւն մը որ, իր ամենէն չքեղ ձեւին մէջ իսկ շտարբերի գերիզմանատներու, հիւզումներու, նացի հաւատքներու, պարսաբաններու, խոհանոցներու կատակերգութենէն։ Երբեմն սատանայ, երբեմն Յիսուս, ամէն վայրկեան սինիք ու անխիղճական՝ Օսքար կը մերժէ մեծնալ, մարդու կարգ անցնիլ, գիտնալով հասուն կողմած մարդոց ստեղծած քնկերութեան փութած անհեթեթութիւնը։ Լուսնոտներ ենք, մեր շինած աշխարհին նման, ու Կրասի համար այդ աշխարհը արուեստի փոխադրելու միակ եղանակը աւելի լուսնոտ աշխարհ մը ստեղծելն էր։ Կրանք ըսիլ թէ Կրասի նիւթիւղով ամէնէն զօրաւոր ձայնն է որ եկած է յետ պատերազմեան Եւրոպայի բնագոյնական ուժերէն։

Երեսունը նոր մտած ձոնսն նուազ քայքայիչ, ինքնատիպ ու տիրական ձայն մըն է։ Բայց իր նիւթն ու զայն մշակելու եղանակը նոր են ու յանդուգն։ Հարբենիքի, ժողովուրդի ու մշակոյթի բաժանումը երկուքի, Արեւելեան ու Ա-

րեւմտեան՝ գերման մտաւորականութիւնը ու ազգային գիտակցութիւնը զրազնցող կարեւորագոյն հարցերէն մէկն է ներկայիս, սուսմ մը՝ որու մասին ոչ ոք համարձակած էր անկախօրէն խօսիլ, արտայայտուիլ ա՛յն անկեղծութեամբ որ ցոյց տուած է Ճոնսն։ Իր երկու նախաւոր վէպերն ալ, Վարկածներ Ժաքոպ-Ժ մասին (1959) ու Արնիմ-Ժ մասին Երրորդ Գիրքը (1961), նոյն նիւթը կը ներկայացնեն։ Սակայն շոն ուր կը տարբերի ան, իր կեցումներն մէջ է։ Ճոնսն չէ համար, քաղաքականութիւն՝ ու զըրականութիւն՝ բոլորովին տարբեր բաներ են։ Ճանչցած է Արեւելեան Գերմանիան, ուր աւարտած էր իր համալսարանական ուսումը ու փոխած Արեւմտեան Գերմանիա, սակայն իր գրականութեան մէջ կրցած է վեր մնալ հատուածական կիրքերէ ու բռնել զուտ մարդկային սուսմը։ Պերլինի Պատը, կ'ըսէ, զըրական գէպք մը չէ. ան միայն մարդկային իրաւունքներն է որ կը խոցէ։ Գրողին գիրը ոչ թէ Պատմութիւն կըլուծէ, այլ պատմութիւն մը պատմել։ Իր մտքի խիղճութեամբ, իր գրեթէ կերպի ու զրական զգայարանքի ամուսնական նկարագրով, Ճոնսն այսօր ներկայացուցիչն ու ախոյեանն է գերման մտաւորական երիտասարդ սերունդի մը որ կը փորձէ վերագտնել իր ազգային իւժանիւզին հունը ուրկէ այնքան վարդազ կերպով խղճած մնաց իր երկերը՝ Հիթլէրական շրջանին։

Կրաս ու Ճոնսն չեն սպառն զրակտն հրապարակի այլազանութիւնը։ Եւրիտասարդներուն ըով, մանուկն ու Թատերադէր — Տիւրքմաթ, Ֆրիչ ու մտահաւորաբար Բիթթըր Վայս իր Մարա-Սատ յեղաշրջող ու այլանդակ խաղով — հեղնանքի, ուրացումի ու յուսահատ կատակութեան հասարակաց միջոցներ մը կը նշմարուի որուն այնքան հաղորդ են Եւրոպայի միւս երկիրները։ Այսօր Գերմանիան յաջողած է, տնտեսական հրաշքին զուգահեռ՝ զրական տոկոսն աւելի մը զոյութեան ու զարգացման ալ փաստը առաւ։

Ֆրանսա:

Սիրոյ ու գրականութեան վերջին բերդը. — այսպէս կը յատկանշուի Չենք գիտեր որքան ճիշդ է բերդի պարագան, բայց յստակ է որ սէրն ու գրականութիւնը միասին կը ծնին ու կ'ուսումնան ֆրանսացի գարագէտին կեանքին մէջ: Ահաւոր է գրական աւանդութեան ուժը ֆրանսայի մէջ, այնքան ահաւոր որքան զայն փչրելու, առնուազն նորոգելու մղումը: Ֆրանսական արդի գրականութեան առջեւ, մարդ միայն զմայլանք ու վախ կրնայ զգալ — այնքան այլապէս, աննախատեսելի ու յառաջադէմ է ան: Արդարեւ, վերջին ժամանակներու գրական երկու կարեւոր յեղաշրջումները ֆրանսայէն է որ ծագեցան — Ալֆրէդ թատրոնը ու Նոր Վէպը: Ու մանաւանդ՝ գրական կեանքը, ոչ թէ պարզ հրապարակ այլ կրկէս՝ ուր զազափարներու պայթումը, մարդկային իմացականութեան արկածախնդրութիւնը, եռանդ զգայաբանները՝ արուեստը կը վերածեն ամէնօրեայ ապրումի ու գրական որակին կ'ու տան ներգործական ուժ մը որ չունի ան որեւէ այլ երկրի մէջ:

Այնքան գրուած է ու կը գրուի ֆրանսական գրականութեան մասին որ աւելորդ կը դառնան մանրամասնել: Ոչ ալ տեղն է վերլուծելու զայսպաշտ իմաստասիրութիւնը, բացատրելու համար յետ-պատերազմեան ֆրանսական վէպին ու թատրոնին փիլիսոփայական հիմքը: Կը բաւէ յիշել որ Սարթրը ըրած էր Էմիլ Զոլի մասին ինչ որ Սարթրը ըրած էր Էմիլ Զոլի մասին, բայց ասիկա ֆրանսական իմացականութիւնն է որ ինքզինքով կը սնանի աշխարհի մէջ, մարդկային ներկայութիւն, հոգեբանութիւն ու խոհալ, խիղճ ու տաղանակ — այս առաքելական յղացքները կը սրբազորուէին ի վերջոյ ու կը փոխարինուէին, նոր փիլիսոփայութեան մէջ, մարդ-որպէս-առարկայ ու առարկայ-որպէս-մարդ ֆորմիւլով:

Այսինքն, մարդը է այն ինչ որ կ'երեւայ, օժտուած ներկայի խաբուսիկ յատկութեամբ մը, որ շնորհիւ իր անանական գիտակցութեան՝ զինքը իրեն կը հրամցնէր որպէս երեւոյթ մը՝ շատ մը այլ երեւոյթներու կարգին: Այնպէս որ, մարդուն փրկութիւնը շատ-շատ ծիծաղելի ու եղբրական պատրանք մըն է ու կեանքին իմաստը փնտռելը՝ նոյնքան ապսիւրտ է որքան այդ իմաստին ապսիւրտ բնոյթը:

Այդտեղ տարին 1950-ն էր, երբ Խոնէսթո Հրատարակեց իր ճապատ Նրգչուհին: Երկու տարի վերջ Պէթթ-Դը լուի-Գործոցը — Սպասելով կոտորածը: Նոյն տարին, Ռուպերթիյէ Հրապարակ կը նետէր իր առաջին վէպը, յեղաշրջելով սեփական աւանդական սահմանումը: Ու երկու շարժումները, որոնք ստացան հակա-թատրոն ու հակա-վէպ անուանումները, միասին կը շղթայազերծէին հինին, կեղծ-վաւերականին ջաջայալուծի գործը:

Յաջողեցան — կարեւոր չէ: Կարեւորը այն է որ մարդ էակին ու արուեստի սահմանները լայնացան, ու նորնիսկ իսկ եթէ օր մը այդ սահմանը հասնի իր վերջնաորութեան՝ քանի որ աշխարհը հարթ է ու եղբր մը սննդ՝ այն ատեն պիտի հակցուի թէ սահման չկար երբեք եւ թէ արեւի տակ ոչինչ չիւն է, ամէն ինչ նոր է կամ նոր պիտի սկսի: Տասէն տասնըհինգ վիպագիր ու թատերագիր, հրատարակչական ու գրական ուսնադիր՝ կրցած են նոր շտապները պարտադրել: Ու արդէն իսկ սկսած են հարց տալ — ի՞նչ կայ ասկէ վերջ: Ի՞նչ պիտի ըլլալ եթէ ոչ վերստին սկիզբ մը որովհետեւ առաջինը տեղ մը չհասաւ ու այս նորն ալ տեղ մը պիտի չհասնի, բայց ասիկա ֆրանսական իմացականութիւնն է որ ինքզինքով կը սնանի աշխարհի մէջ: Ի՞նչ:

Հարցումը առած կ'անցնինք Անգլիա:

Վ. ՕՇԱԿԱՆ



ՎՍԻՑԻԼԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

(Հեղինակ՝ ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԵԱՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՆՈՒՄ 1986

Ռազմավարության մըն է Վերջինիսական Պաշտպանությանը: Ռազմավարության մը՝ որ չի խնայիր: Կը պահանջէ զոհեր, զուցէ՝ անհաշիւ զոհեր, բայց ի վերջոյ կը տանի յաղթանակին:

Ռազմավարը՝ երիտասարդ: Հապել երեսուն տարեկան, բայց առ՝ իր անդրանիկ զորքը չէ: Արժէքաւոր՝ անոր համար որ կ'աւարտէջ ընթերցումը: Կը փակէջ զէրքը, բայց հերոսները չեն մեկնիր: Անոնք, զեռ երկար ժամանակ կը պահեն մեզ իրենց մթնոլորտին մէջ, կը ստիպեն որ խորհրդածէջ իրենց միտքերով:

Քիմիապատկան հետազոտարան մըն է հեղինակին միջավայրը: Միհան-յը՝ վէպին հերոսներ: Արդ, զարմանալի՝ կը զանէջ, թէ քանկան անբարոյութեան մը կը նմանի գրագէտին միտքն ու մեթոտը:

Իսկապէս: Մտածեցէ՛ք պահ մը: Ստուգեցէ՛ք որ կը մտածէ՛ք: Մոռցէ՛ք մեր մտածումներն նիւթը եւ կեդրոնացէ՛ք մեր մտածելու ճղանալին վրայ: Կը տեսնէ՞ք թէ նիւթերը ինչպիսի անկարգութեամբ կը ներկայանան եւ խախտարդէ շարողատու մը կ'ունենան: Բայց զուցէ զիտէ՛ք թէ խառնակ երեսոյթ է սա: Միտքերը ունին ընդոնին ներդաշնակութիւն մը: Անոնք կը դասաւորուին: Կը ժողովին, կը գտնուին, կը շարունակին, կը զարգանան, կը հասունանան, կը լրանան: Նոյն նկարագրով ալ կը սկսի ու կ'աւարտի Կարէն Սիմոնեանի Վերջինիսական Պաշտպանութիւնը:

Վերոյիշեալ այս պատճառով իսկ վէպը չունի հանդուց մը՝ դասական ըմբռնումով: Գծիկ մըն է ան որուն ծայրը կը յայտնուի առաջին էջերէն իսկ: $X = A + B + C$,

Այնչիսանի բանաձեւը — կ'ըսէ Լեւոն — ուր X -ը, այսինքն յաջողութիւնը գումարն է լուսալիսասանքին, լուս հանգիստին, եւ լեզուի կապանքին:

Շնչ, լեզուի փականքն է՝ վէպին հարցումը: Պէ՞տք է տեսնել եւ լսել թէ՛ պէտք է խիզախել եւ խօսիլ...

Կարէն Սիմոնեան նիւթը կը զարգացնէ դանդաղորէն: Ինքնավստահութեամբ եւ ձեռնհասութեամբ: Լեւոնին հետ կը փոխադրուիջ տարբարութեանէն տուն, անկէ՝ քաղաք, գրոտովայրեր կամ մօրեղբորը՝ Յակոբ Քէրդեանի բնակարանը:

Ուր որ ալ գտնուիջ միհան-յըն է: Լուս՝ թէ խօսիլ: Լեւոնը, Յակոբ Քէրդեանը եւ Այնչիսան համակարծիք են: Տեսնել՝ եւ լսել: Բայց ի՞նչ անուն տալ այս վերաբերմունքին: Դասալիցութիւն թէ՛ խոհեմութիւն...

Հիմա որ ունիջ բանալին, բացէ՛ք դուռը եւ ծանոթացէ՛ք Սիմոնեանի տիպարներուն հետ:

Արդէն հանգիպած էջ զստեմթ տարեկան այս երիտասարդին: Լեւոնն է: Քիմիապէտ: Ուսումնալից տաղանդ: Ան կը մերժէ զուրա գալ իր աշխարհէն: Լուսը խոհեմութիւն է... Բայց ակամայ՝ կը պատահին անկարգութիւններ: Անոնք կը խանգարեն զինքը եւ զորքը: Արդեօք պիտի շարունակէ լուսը...

Նախընտրելի է որ զիմէ իր մտերմի խորհուրդին: Մտերմը այս Երեմի Քիմիապէտն է: Իր մօրեղբորը՝ Յակոբ Քէրդեանը որուն նոյնպէս Երեմի Քէրդեանը էջ: Ասոր կը հանգիպէջ միմիայն իր տանը մէջ: Մեծագոյն զուարճութիւնն է հասարակը: Բայց սկզբունքով կը մերժէ խաղըն-

digitised by

A.R.A.R.®

կեր ունենալ: Առանձինն կը շարժ տեւ ու ներ-
ժակ զարբերը, առանձինն լարժման մէջ կը դնէ
զանոնք եւ ինքնիւրեն կը պարտադրէ բացարձակ
անկողմնակալութիւն մը:

Մենակեաց Յակոբ Թէրզեանը զլուռք մըն է:
Բայց անկողմնակալութիւնը ի ընէ բարբերու-
կան է: Կը զգայ Թէ ինքնաբերաբար կը նպաս-
տէ մերժակ զարբերուն եւ իսպառ կը խանգարէ:
Կարելի՞ է հասարակը յաղթանակ առանց խաղըն-
կերի...

Լուիլը խոհեմութիւն է: Բայց կայ Զուլեկը:
Ընկեր Զուլեկը Յակոբ Թէրզեանի դուռըն
է: Տիրար կուտակցական: Գործիչ: Հաստատար
ուխտեալ մը՝ որուն համար Պարտիան միայն
կը բերէ յուսադարձում ապագան:

Սակայն Զուլեկը կանգնեցի կայսր ունի
Բուրձինն հետ: Զարաշահ կուտակցական մը:
Անոր համար քուր միջոցները արդարաւայել են,
պայմանաւ որ քաւարարութիւն զանէ իր նշանի
գետն-ը:

Եւ հարցը կը զարգանայ հանդիպումովը կամ
բախումովը այս ախպարներուն: Առանց ցարտու-
մին մէջ անհերքելի քաղաքականութիւն կը հան-
դիտանան երկրորդական գծի գէժքեր: Եւ կը
ստացուին զիրար խաւաքանդ ընտանեկան եւ
սիրային բարդութիւններ, թնձուկներ:

Արդ, Լեւոնը պէ՛տք է շարունակէ լռել...
Եակոբ Թէրզեան պէ՛տք է հասարակ խաղայ
առանց խաղընկերի:

Կարէն Միմոնեանի խելքը կընար չհանել
իր վճռական հանդրուածին՝ Միցիլիական Պաշտ-
պանութեան, եթէ ոչ մի յանդիման չզանուէ՛նք
ընկերային հրամայականներու հետ:

Կարեւոր երեւոյթներ են ընտանեկան բար-
դութիւնները, հետեանք՝ ընկերային տաղան-
պին: Բարենորոգչական աշխատանքներու զան-
գաղութիւնը, հետեանք՝ վարչական պատասխա-
նատաններու անմեղհասութեան: Ընդհանուր
յառաջդիմութեան յամբարձիւ ընթացքը, հե-
տեանք՝ աշխատանքի տարբերու մեղմանում-
թեան, խոհեմութեան անուշոք: Վերջապէս
հարցեր, բազում հարցեր, բայց յանկարծ կը

ժայթքէ կարեւորագոյնը՝ Անհատին տեղը հա-
տարակալութեան մէջ:

Հարց է իրաւ որ: Մինք պէ՛տք ենք հաս-
տակութեան... զՄինք՝ եւ Կարէն Միմոնեան
անմիջապէս կ'աւելցնէ գետն-ը:

Սոսկալի է ետին կամ անհատին վերադար-
ժը սոցիալիստական ընկերութեան մէջ: Այն ետ-
որ երկար ասան պտուտակ մը նկատուեցաւ մի-
այն, ընդհանուր մեքենային մէջ եւ որ գիտէր,
գիտէ Թէ պտուտակէ մը աւելի, ինք ամբողջա-
կան մեքենայ մըն է ըստ ինքեան վախճանի
եւ անխորհրդի միանգամայն:

Հարցը կարելի է դնել անկասկած, բայց
չակտեղ պատասխանելի է: Կարէն Միմոնեան
երկուտ կը թափ տակալին: Ձի կընար (չ'ուզեր)
կոշիկէն վեր ելլել: Բայց վտան է Թէ վազուած
անբունդը կու տայ անպայման հարկաւոր պա-
տասխանը: Մինչ այդ ինք... ոխուր է:

Մինչ այդ Լեւոնը լի կընար մեղմանալ նը-
տիլ: Ճշմարտութիւն առջեւ նոյնիսկ Այնթափը
խախտեմ է իր քանաձեւը եւ քակտէ է լեզուն
կապանը: Վերաքննելի է Հ-ն: Պէ՛տք է խօսիլ,
գննողատել, միջամտել: Պէ՛տք է հալածել կու-
տակցական շարաշահներն ու խրատելակները:
Զգաստութեան հրաւիրել ուրիշները: Ճատրակի
համար պէ՛տք է խաղընկեր:

Եղբայրացութիւն: Ճատրակի թէ կեանք, Սի-
ցիլիական Պաշտպանութիւն է հարկաւոր: Զո-
հողութիւն է հարկաւոր:

Ճատրակ, սիրային էնթրիկներ, տարաշա-
հարանային աշխատանք, ընկերային հարցեր,
բոլորը կու գան հրամայական դարձնելու կեն-
սական խելքիդը՝ Անհատին տեղը հատարակա-
լութեան մէջ:

Միցիլիական Պաշտպանութիւն: Այո՛, Զո-
հե՛ր, ասանք եթէ հարկաւոր է, որովհետեւ ան-
հաղ ամբողջական մեքենայ մըն է հասարա-
կական ընդհանուր կազմաւորին մէջ: Թեոս եր-
բեք պտուտակէ մը:

Սովետական թեոս է սա, Թէ՛ հոմա-
մարդկային...

Ն. Փ.



ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԷԼԼՈՑԻ «ՊԱՏՈՒԻ ՎԱՅԵԼՔԸ»

Ներկայացում Համազգայինի
Գրասպար Իֆեկեան Թատերախումբի

1966 Ապրիլ 29-ին, (ինչպէս նաեւ 30-ին եւ Մայիս 1-ին) Համազգայինի Գրասպար Իֆեկեան Թատերախումբը Պէյրուսի Հասարակութեան կը հրաժեշտէր իտալացի ժանանուն Թատերագիր Լուիճի Փիրանտէլլոյի «Պատուի Վայելքը» Թատերակը:

Որքան զխոնք, առաջին անգամն է որ Փիրանտէլլո կը խաղցուի Հայ բեմի վրայ:

1923-ին Փարիզի բեմերուն վրայ Փիրանտէլլո երեսան կու դար, Թարգմանուած իտալերէնէ, եւ անկէ ետք, երկար ժամանակ կը տիրապետէր ո՛չ միայն Ֆրանսական բեմին, այլ նաեւ Ֆրանսացի Թատերագիրներու գրականութեան մէջ, իր խոր կնիքը դնելով գրեթէ բոլոր կարեւոր Թատերագիրներու գործերուն վրայ: Մինչեւ անգամ արդիական եւ յատկապէս կոչուած Թատրոնի Հեղինակներ՝ Իոնէսթօ, Ատամով, Պէքէթ, Փիրանտէլիան գիւտերու ընդլայնումին եւ խորացումին կ'երթան:

Փիրանտէլլո կը խաղցուի եւրոպական բեմերուն վրայ նաեւ այսօր: Թատերական սեզոն մը չ'անցնէր, չ'երթէ, առանց Փիրանտէլլոյի այս կամ այն գործի բեմադրութեան, Փարիզեան բեմերու վրայ:

1929-ին Հայ կեանքի պայմանները չէին կրնար նպաստել Փիրանտէլլոյի ծանօթացման, կամ գնահատման:

Տարիներու Հոլովոյթին եւ պայմաններու փոփոխութեանց հետ, հետզհետէ

աւելի ստիպողական կը դառնայ Թատերական Արժէքներին ծանօթացումը Հայ Հասարակութեան որ, հետզհետէ աւելի ու աւելի հաճոյք կ'առնէ ու պիտի առնէ, եթէ մեր Թատերախումբերը խիզախեն, ու մանաւանդ անհրաժեշտ բծախնդրութեամբ պատրաստեն Փիրանտէլլոյի, Իպոլէնի, կամ Պէրնար Շոյի գործերը, յայտնաբերեն պանոնք մեր ժողովուրդին, արուեստի անհրաժեշտ հարակատարութեամբ, ու գեղեցկութեամբ:

Այդ ուղղութեամբ առնուած կարեւոր քայլ մը եղաւ Համազգայինի Թատերասէրներու Գրասպար Իֆեկեան Թատերախումբի ներկայացումը, գեղաժամութեամբ ու խաղարկութեամբ Պրն. Ժ. Սարգիսեանի:

Պրն. Ժ. Սարգիսեան, եւ Տիգ. Գարմէն Տէր Կարապետեան Փիրանտէլլոյի մտածումներուն կեանքի ջերմութիւնը հազորդելու դժուարին պարտականութիւնը ունենին: Պրն. Սարգիսեան Պոլտովիտայի դերին մէջ, դիմակաւորուած մարդոց դիմակները վար առնող (իր անդիւղ պատուախնդրութեան պահանջներով) միաժամանակ իր սեփական սրտի մարդկային ապրումները դիմակաւորող եւ գիտակցութեան, կամքի մտրակումներուն շնորհիւ ինքզինքը առօրեայի հարուածներէն հեռու պահող անձնաւորութիւնը կը ցուայ ըլլալ, ամբողջական ձեւով, թէ մարմնով, եւ թէ արտայայտութիւններով: Արտաքինապէս քինէք,

digitised by

A.R.A.R.®

ներքնապէս ճիշդ հակառակը՝ խորապէս զգացունող, առաւելող մարդը եղաւ ան, որուն հիմնական մտաւարկները մընայց, սկիզբէն մինչեւ ետք, թէ կրնար պատահիլ որ պղտիկ անուշադրութեան մը հետեւանքով, իր հազած դիմակին տակէն երեւան դար տառապող մարդու իր իրական դիմագիծը։ Մինչ կեանքը ապրիլ կարենայու համար... անհրաժեշտ էր ծածկել անմահական բոլոր ապրումները, զգացածն ու մտածածը։

Տիկ. Գ. Տէր Կարապետեանի դերը, Ակաթ, դժուարին դեր մըն է, որովհետեւ Հեղինակը ամբողջութեամբ կեդրոնացած է Պոլտովինոյի վրայ, եւ բաւարար չափով քննարկ չունի Ակաթ, կարեւոր խաղալու համար կնոջ մը դերը, որ մինչ այդ ապրած է իրեն ծնունդ տուած ընտանիքին, եւ ընկերութեան կեղծ պատուախնդրութեան պահանջներուն համաձայն, ուր զգացումներն ալ չեն կրնար անկեղծ ըլլալ, սէրերն ալ, մարդիկ ամբողջ, եւ յանկարծ իրեն պարտադրութեամբ մտնին մէջ կը դռնէ մարդկային մեծութիւն մը, մարդկային խորունկ զգացումներ ու սէր, ինչ որ զինք հիմնովին կը փոխակերպէ, կը պատռէ իրեն պարտադրութեամբ դիմակը, եւ կը վերածէ զինք սիրող կնոջ մը, խորապէս կապուած ալիւս իր ամուսնին, որ մինչ այդ ընտանիքին պարտադրած ձեւական ամուսնին էր միայն։

Այս բոլորը տարու համար բաւարար տողեր ու արտայայտութիւններ չկան թատերակին մէջ, այդ իսկ կը կրկնապատկէ Տիկ. Գ. Տէր Կարապետեանի խաղին արժէքը։ Ան կրցաւ արտայայտել այդ բոլորը, մայրական շնչերով, նայուածքներով ու ընդհանուր խաղարկու-

թեամբ։ Շատ աւելի պատահանաւոր դերերու մէջ պէտք է օգտագործել Տիկ. Գ. Տէր Կարապետեանի բնական շնորհները։

Երկրորդական դեր չկայ թատերակի մը մէջ, եթէ լաւագոյն ուսումնասիրութեամբ, եւ լաւագոյն խաղարկութեամբ տրուին անոնք։ Այլապէս, կարելի դերերն անգամ կը դառնան երկրորդական։ «Պատուոյ Վայելք»-ի ներկայացման զբոլաւոր պակասութիւնը այս կէտին մէջ կը կայանար։ Անհրաժեշտ էր աւելի երկար ժամանակ տրամադրել թատերակի պատրաստութեան, աւելի ուսումնասիրութեամբ մեծով ներկայացնելու համար միւս տիպարները, ինչ որ անկասկած որ պիտի քառապատկէր ներկայացման արժէքը, բերելով գէթ փրանսէլլոյի մթնոլորտ, որը հիշ գոյութիւն ունեցաւ Պրն. Ժ. Սարգիսեանի մօտ, պակասեցաւ ընդհանրապէս մնացեալ տիպերու ըմբռնողութեան մէջ, ինչպէս նաեւ խաղարկութեան, Տիկ. Ջ. Շանթ միայն, մասնաւոր երկրորդ արարուածին, կրցաւ առաջացնել անհրաժեշտ մթնոլորտը, իր դերին մէջ։

Աւելի երկար ու մանրամասն ուսումնասիրութեամբ խաղարկութիւն մը բոլորին կողմէ, շատ աւելի մեծ վայելքի մը պիտի վերածէին «Պատուի Վայելք»-ի ներկայացումը։ Սակայն, իր այս մեծին տակ ալ, որպէս առաջին խիզախում, զնահատելի քայլ էր, ու արժէքաւոր արդիւնքով։ Այս ճանապարհին վրայ պէտք է շարունակեն քայլել Գոսպար Իփէկեան թատերախումբն ու իր վարիչը. վստահ ենք որ նորանոր յաջողութիւններ պիտի կարենան արձանագրել։

Բ. Փ.

ՀԱՐՑԱԳՐՈՅՑ՝ ԼԻՌԱՆԱՆԱՀԱՅ ԱՄՍԱԳՐԵՐՈՒ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՆԵՏ

Հայ Բարեգործական Հեղհանուր Միութեան Երկարատև ընկերակցութիւնը, իր Հայ Համալսարանական Ուսանողներու բաժինին նախաձեռնութեամբ, Զարեհ Նուպար ակումբին մէջ, 8 Մայիս 1968-ի երէկոյեան կազմակերպած էր հարցադրոյց մը Լիւթանանահայ ամսագրերու խմբագիրներուն հետ, հետեւեալ նիւթին շուրջ՝

«Ամբիւղը իր կեանքով ու կենցաղով, հազարամեութեամբ ու հոգեւորութեամբ, ընտանեկան եւ անտեսական տաղանդներով ներկայացուած է վերջին քսանամեայ (1948-1968) դրականութեան մէջ»:

Եթէ այդ՝ ինչպէ՞ս, պարբերական մամուլին մէջ, զբօսե՞մք մէջ, ո՞ր գրքերուն: Եթէ ոչ՝ ինչո՞ւ, ո՞ր է թերացումը:

Հարցադրոյցին ժամանկեւոր հրաւիրուած էին «Երկարատև» Հայուհիք խմբագիր, Տիկ. Ս. Սեդա. «Երկարատև» խմբագիր Պրն. Օ. Սարգիսեան, Արարատ Գրականին Պրն. Հ. Գրիգորեան, «Զանգակ» Պրն. Մ. Յ. Շնորհաբեան, «Բաղնիք» խմբագիրներէն Ե. Գեղարք, Տիկ. Ս. Սեդա կը բացատրէր, անհանգստութեան պատճառով:

Հարցադրոյցի համար նկատի առնուած նիւթը, իր լայն սահմաններով, ու պարունակութեամբ, անկարելի այնտեանք մը կը դարձնէր ղեկուցարարներուն աշխատանքը: Այս իրողութեան վրայ երբ աւելցնենք Հարցին ժամանակներուն անձնական ըմբռնութեանց, եւ մահաւանդ լափանիւններու տարբերութիւնը, այդ պարագային կարելի կ'ըլլայ զաղափար մը կազմել, արտայայտուած ժողովուրդի միջոցով, կապակցութեան եւ անկապակցութեան մասին, արծարուած հարցին հետ, եւ մինչեւ իսկ երբեմն՝ զբաղանդութեան հետ ընդհանրապէս: Պատահեալ նոյնիսկ, որ ղեկուցարարներէն մին (Պրն. Շնորհաբեան) պահանջ դէպք հայ զրազեաներուն, որ զրեւ հայկական համը կերակուրներու մասին, քննադատի եւ տուժանքի մասին, արժանադրութեան մասին, երաժշտութեան մասին եւայլն, որպէս նոյնը ժամանակնով «Երկար» Տայնէութեանը...

Հեղհանուր առումով սակայն, ղեկուցարարները անկեղծօրէն ճիշդ թափեցին տալարիտան

նիւթին ժամանակ, թէկուզ եւ անկարելի ըլլար այդքան ընդարձակ նիւթ մը ուսումնասիրուած ձեւով քննարկել, այն ալ այդ այլապէս պարզ մանկերուն մէջ:

Ե. Գեղարք առաւ ետեւ սփիւռքի սահմանումը, անոր ընդհանուր հոգեւորական 1948-էն այս կողմ, արտասահման եման ու մեծցած երբ սերունդի մը զօրութիւնը ընդգծեց, անոր պահանջները ներկայացուց, եւ այս բոլորի արտացոլումը մասնակցեց կարգ մը զբաղանք զորեւրում մէջ, ընդգծելով թէ այդ, մեր կեանքը ցուցած է մեր զբաղանքութեան մէջ, իր նորադոյն պահանջներով ալ:

Պրն. Օ. Սարգիսեան սկիզբէն իսկ զբաղանքին պատասխանելով արուած հարցումին, զոտա օր արամազրուած կարճ ժամանակը անկարելի կը դարձնէր նման նիւթի մը քննութիւնը, եւ մասնակցեց թէ եթէ ինչ տար աւանդները հայ հեղինակներու, եւ անոնց զորեւրում, արգէն իսկ պարզ պիտի ըլլար անոնց համար որոնք կարգացած էին այդ գործերը, թէ սփիւռքահայ կեանքը իր բոլոր երեսներով, կարտաներով, տկարութիւններով եւ վճռակաւ նիւթիւններով, հայրենապաշտութեամբ եւ ազգային նկարագրով, ցուցած է մեր զբաղանքութեան մէջ: Տուաւ երեսունի լափ անուններ, եւ ընդգծեց, թէ մեր մասնական մէջ մենք իրաւունք չունենք տեսարար համեմատելու ներկայ զբաղանքութիւնը, այլ ժամանակաշրջաններու զբաղանքութեանց հետ, շրջանները չեն կրկնուիր, ամէն շրջան կը բերէ իրեն յատուկ կնիք մը:

Զրոյցին ներկայ էին համալսարանական ուսանողներու կողմէն բաղմութիւն մը եւ բազմաթիւ զբաւերներ:

Նման հարցադրոյցներ կրնան օգտակար դառնալ, եթէ հարցադրոյցի ժամանակաշրջանին մէջ ներկայացուելու յարմարութիւնը ունեցող նիւթեր ընտրուին, որոնց լուրջ պատրաստութիւնը կարելի ըլլայ ղեկուցարարներուն արտադրուած պատրաստութեան ժամանակին մէջ, եւ եթէ ղեկուցարարները ՄԱՆՆ Նիւթի ՍԱՀ-ՍԱՆՆԵՐՈՒՆ մէջ:

Ք. Բ.

digitised by

A.R.A.R.®

ՍՈՆԱ ՂԱԶԱՐԵԱՆԻ

ԵՐԳԱՀԱՆԴԱՆԵՐ

Երգը, հայ երգը մանաւանդ, նոր յոյսով մը բախտաւորուեցաւ Գալուստ կիւլպէնկեան սրահի բեմին վրայ, Մայիս 6-ի Ուրբաթ գիշերը, հրաւիրեալներով լեցուն ունկնդիր բազմութեան մը ներկայութեան:

Սոնա Ղազարեան, օտփրանօ:

Նոր անուն մը արուեստագէտ-երգչուհի:

Արդարեւ՝ առաջին երիտաւարդութիւն եւ առաջին հրապարակային ելոյթ, Պետական Երաժշտահոցը տակաւին լաւարտած, բայց կրցաւ ունկնդիրներուն ներշնչել այն համոզումը թէ տէր է արդէն երգելու զաղտեիքին եւ դիտեալ փոխադրել հոգիները արուեստի աշխարհին ոլորտները:

Յայտագրին առաջին մասը յատկացուած էր օտար, իսկ երկրորդ մասը հայ երգահաններու:

Առաջին, երկրորդ երգերու մենակատարութիւն տալու իսկ Սոնա Ղազարեան կու տար երաշխիքը, թէ չէր տառապել նախորդ շաբաթը մեղքին, - չէր պտար ածնաբարձը, ածնաստեր ձախանիչերու հասած ատենն իսկ, այլ կ'ընդունար զարգացում, կ'երգէր բնականօրէն:

Երրորդ երգին՝ Վերտիի Գարօ Նամին մէջ ցուցահանեց, լրիւ կերպով, երգչուհիի քառակուսիքները, - ճշգրտութեամբ եւ լաւապէս ժարդուած ձայն, շուտիկ ջերմութիւն, նուրբ զգայնութիւն, դէմքի եւ ժարմիկ պատշաճ արտայայտութիւն:

Բայց չհասկցանք թէ ի՞նչ պատճառաւ յայտարարին մէջ տեղ յատկացուած էր Ռաֆէլի Յաւակում ժողովրդական երգիչ Երզնկայի, որոնք ոչ մէկ նոր վկայութիւն բերին մենակատարութիւն թեմբեքին եւ այլ շնորհներուն:

Հայերէն երգերու մէջ չէր վարանած զեան-ղեկու Կոստան եւ Երիտմարտի փորձաքաջ, բայց կրցաւ մեր սրտին մօտիկ պահել հայ երգի այդ զոյգ մը արտում թուշները:

Յանգձնութիւն մըն էր Պ. Ճեւախեանի նոր յօրինած Մեղեդիքին առաջին անգամ ծառայութեամբ



հասարակութեան: Եւ զարմեալ պատուով դուրս եկաւ:

Միւսներուն՝ Ալեքանի, Տիգրանեանի, Յարութիւնեանի, Մենքապի երգերուն վերջնական մէջ միշտ ալ կրցաւ յայտնաբերել բառերուն հիշատակը, ապրումին հարազատութիւնը՝ ուրախութեան եւ արտումիւնի օտար մէկ անգ պատշաճ երանգաւորումները:


Ձայնին յրաշխիք, տարբեր բերումով, զեռ չէ հասած իր լրումին, եւ շատ հաւանականօրէն ստանայ նոր փայլ ու խորութիւն հետզհետէ:

Կը մնայ որ հաւատքով կուսի իր կոչումին, մանաւանդ ուշադրութիւն դարձնել եւ սրբազն առողջանութեան թիթեւ սխալներ հայերէն թե օտար լեզուներու մէջ, շարունակել թեմբեքի կատարելագործումը, եւ տպագրել իր կ'ըլլաւ աներկրայ:

Դաշնակի յաջող ընկերակցութիւն Ռաֆի Ապրիլամյանի:

Երիտմարտի ի մանուկարար իր ուսուցչուհի՝ Տիկ. Պատիա Սապրա Հատառ, որ իր աշակերտուհի արդարօրէն քաջալերելու աղեր-ւութիւնը ունեցած էր, ներկայացնելով զայն հասարակութեան:

Ե. Գ.



ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Գարնանային ցուցանանդեղը Պէյրուսի գեղարուեստի հղանակին լրումն է: Ան հը ներկայացնէ լիբանանեան նկարչութեան եւ արձանագործութեան հարազատ պատկերը: Հոն է որ հը ցուցադրուին նոր յոյսեր ներշնչող իրազործութեան, ծանօթ ուղեւորութեան մերթն սրանումները:

Այս տասներորդ գարնանային ցուցանանդեղը հը ներկայացնէ 90-է աւելի արուեստագէտներու գործերը, որոնց կարգին անդ գրաւած են բազմաթիւ հայ նկարիչներու եւ արձանագործներու գործերը:

Քանի մը նոր անուններ ունին խորապէս ուշադրաւ գործեր, ինչպէս Վահէ Պարսամեան, որ լիբանանահայ նկարչութեան կրթութեան սերունդին հը պատկանի: Առաջ տալանդով օժտուած նկարիչ մըն է ան, իր իւզանկաբը՝ պոթիկումի արտայայտութիւն մը: Ոչ նուազ ուշադրաւ են նաեւ Գրիգոր Ձէրքէզեանի եւ Տիգրան Պոյանեանի գործերը:

Երբեքսարգ նկարիչներու սերունդին հը պատկանի Ժ. Ժիրգո: Անոր նկարները վերացական են ու հը ներկայացնեն ընդծովային ափայի ու լուս աշխարհ մը, իր նկարներուն մէջ կայ ցու, տառապանք եւ առանձնութիւն:

Գիւ. Թէն իր իւզանկաբերուն մէջ մեծ նորութիւն մը չէ մացուցած, սակայն Գեղանմանութիւն տուած իր գծանկարներու ցուցանանդեղով

բուրոյնին նոր մարդ մը կ'ընդգրկէր: Համբարտար եւ նուր աշխատանքով իրագործուած պայտն գործեր էին անոնք:

Փոլ Կիրակոսեան միշտ հը շարունակէ իր ոճը, անշարժ ու իրար սեղմուած մարդիկ, կիներ, երախներ ներկի հաստ լերտով մը գոյացում: Փետրուարին իր տուած ցուցանանդեղով անգամ մը եւս ապացուցանեց իր վաւերական նկարիչի տաղանդը:

Այս ցուցանանդէսին հը մասնակցէր նաեւ Դարբինեան, ապաւորապաշտ բնանկարիչ մը որոն գործերը ունին քանադակաւն մթնոլորտ մը:

Սօֆի Երամեան բուրոյնին գարտաւոր հոսանքի մը հը պատկանի, ան մանկական միամըտութեամբ մը հը ներկայացնէ զիւզական կեանքի պատկերներ:

Արձանագործներու կարգին կան Ջուէնի մէկ դաճէ արձանը, Զամիլեանի վերացական դպրոցին պատկանող գործերը եւ Ե. Եփրեմեանի մէկ գործը:

Այս ցուցանանդէսին թէեւ հայ տարեց սերունդին պատկանող նկարիչներ ոչ մէկ քառալորեմութիւն ցոյց չեն տար իրենց արուեստին մէջ, սակայն նոր անուններ, երբեմն բոլորովին անծանօթ, հը յայտնաբերուին եւ կարեւոր է անոնց վրայ յոյսեր դնել:

Մ. Պ.

Վ. Գոհեանին ասողը փայլեցաւ առջին անգամ Լիբանանի մէջ եւ անկէ յետոյ թարգմացաւ միջազգային երկնազամարի գնեթը: Իւրաքանչիւր նուազահանգէս եղաւ նոր նուաճում մը եւ միջազգային մամուլը նուիրեց ներբողներ միտ՝ լիբանանեան արուեստագէտին: Ստորեւ վկայութիւն մը Լոս Անճելեսի գնեթագէտ:



Միացեալ Արեւստի Միութիւնը ցարդ բազմաթիւ արժէքաւոր նուագաւորներ կազմակերպած է, բայց ամենցմէ ոչ մէկը կրցաւ հասնի վարուժան Գոհեանի իպէլ Թիւթթի մէջ տուած ձեռքբաղին:

Երիտասարդ ջութակահարը, անկասկած շատ լաւ պարտաստուած արուեստագէտ մըն է, եռնադարս, խառն եւ լուրջ նուագածութիւն մը ունի: Մասնաւոր ի յայտ կը բերէ երաժշտական զգայում եւ ցրտալի արտայայտութիւն մը:

Վարուժան Գոհեան չունի կատարելագործուած քննիչ տաք շունչ, չի նուազանքութիւն: Թեքնիքը իրեն հաճաք մըն է՝ դժուարութիւն չունի:

Իր յայտագրին մէջ կամ վիկալտի, Ֆրանսէ, Կոմիտաս եւ Խաչատուրեան:

Գոհեան, ամենալ ստորի Հայֆեցէն տապալ ջութակ մը՝ առ ի վարձատրութիւն իր յաջողութեան:

Հայֆեց անցեալ տարի այդ ջութակը բերաւ Հարաւային Գալիֆորնիայ Համալսարանի կատարելագործութեան դասընթացին եւ ամէն մէկ ջութակահարէ ուղեց որ այդ ջութակին վրայ նուագէ: Ջութակը շինուած էր 1772-ին եւ կ'արժէր 10-000 տոլար: Վարուժան վարպետին ծով էր իրը անոր միակ աշակերտը: Ջութակահարները նուագեցին, ուսուցիչները եւ միւս ուսանողները, ինչպէս նաեւ Վարուժան՝ ունկընդիպին: Երբոր նուագը վերջացաւ, Հայֆեց առաւ ջութակը, դարձաւ Գոհեանին եւ ըստ:

— Այսօր շատ համազարտ վիճակ մը աւծիս: Կ'ուզե՞ս այս ջութակին տէրն ըլլալ:

— Բայց ինչի նուագը չտուիք ամօր վրայ, ըսաւ վարուժան:

— Դուն իմ միակ աշակերտն ես եւ արդէն իսկ վերջիւս մը եղած ես, բոլ արժէքն ճանաչուաւ իմ մօտ: Այս ջութակին վրայ փորձելու պէտք չունիմ: Զու՛ր, կ'ուզե՞ս այս ջութակին տիրանալ:

— Այո՛, շատ կ'ուզեմ, ըսաւ Գոհեան, բայց ինչպէ՞ս կրնամ 30-000 տոլար վճարել:

— Պեզի ռ'վ կ'ըսէ որ գնեա, ըսաւ Հայֆեց, ջութակը ճուղի է: Անոր պէտք ունի եւ հետեւարար իր արժանաւոր աշակերտն՝ Ֆեզի կը նուիրեն՝ այս ջութակը:

Վարուժանի կեանքին տմեկն յիշատակելի պահն էր այս: Ջութակը առաւ՝ դադարով: Երբ այս պատմութիւնը պատմեց մեր ջութակիցին, Գոհեան հետեւալը ըսաւ:

— Գիտե՛ք, այդ հիւանալի ջութակին հետ, Պր. Հայֆեց գեղեցիկ նպատակ մըն ալ նուիրեց:

Հայֆեցի կատարելագործումի դասընթացներուն վերջին երեք տարուան ընթացքին 12 ջութակահարներ մասնակցեցան: Մի առ մի նամբու դիտարար եւ լսեց միայն ամէնէն տաղանդաւորը եւ լուրջը՝ վարուժան Գոհեանը:



Արևիկա Լուսին

ՅՈՒՆԵՍԿՕՆ՝ ՆՈՒՐԱՐԱՄ
ԴԱՆԻԻԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ճարտարապետ Լիոն Գուլ-գի Սալ Ռոմա որակի
մէջ, Մարտ 19-ին տեղի ունեցած է յուշատառ
մը, Նախարարութիւն՝ Դանիէլ Վարուժանին:

Հանգէտին բացումը կատարած ու Դանիէլ
Վարուժանին կենտրոնի ու գործին մասին խոսած
է Պր. Գ. Պապաստասը:

Տարբարում մէկ բանաստեղծի մասին խո-
սած է Նաեւ Պր. Վարդան Նշէշեան:

Հանգէտին իրենց մասնակցութիւնը բերած
են Վարդան Վարուժանին, զինքնամարտի մի-
կէն Յամիկ Գի. Բնէշեանի եւ խմբավար Պր.
Նարայիս Արքիւկեանի շտապէրը — պարերով, մե-
նեղներով ու խմբերգներով:

Դանիէլ Վարուժանի բանաստեղծութիւններին
ընտիր կտորները առատաւան են ծանօթ դերա-
սան՝ Արաւշէտ Գործիքեան ու Փրանտակեան ձա-
յուսքերով եւ պատկերասրահով առեւտրապէս-
անքէն՝ Ի. Ռուտէ, Ժ. Մարիէյի, Տընիզ Պախէ
եւ Փ. Գալար:

Գաղաքին Փրանտակեան թերթերը մեծ գո-
ղեւորով արտայայտուած են այս յուշատառի մա-
սին:

Օր. ՓԱՌԼԱ ՄԻԼՏՈՆԵԱՆԻ
ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Վեներաբլէ՛մ՝ Օր. Փառլա Միլտոնեան, փե-
տքըւար Ժ-իմ, փառավայրի մէջ, փայլուն ին-
ճութիւն մը տալի վերջ գրականութեան գտնա-
թարած տեսցած է: Իրրիւ աւարտածա ճարտա-
յարգեցած է Վալառա մը հայերէտի կրթական
բառագիտութեան աւտամարտութեան շտա-
կան եւ արժէքաւոր աշխատութիւնը, իւր՝ մե-
տաւարակէ՛ս վեց հարիւր էրի մէջ ճարտարա-
յարգեցած է աւելի քան հազար եկեղեցական ու կրո-
նական հայերէն բառեր, գտնեմք բազմաթիւ
պարսկերէնի (իւր գտնեմք տարբարածմանմե-

րով), յունարէնի, ասորերէնի, լատիներէնի,
հին ֆրանսերէնի, կովկասեան, սլաւոնեան եւ
ուրիշ լեզուներու հետ:

Օր. Միլտոնեան իր աշխատասիրութիւնը
պատրաստելու համար, ամիսներով պրպտու-
մեր կատարած է ոչ միայն Ս. Ղազարի Միլի-
թարեան հարուստ մատենագարանին այլ նաեւ
Փատավայրի եւ Միլամայի համալսարաններու գը-
րադարաններում մէջ:

ՓՅՅի յամենայնուորը զմահատելով Օր.
Միլտոնեանի բանասիրութիւնը եւ աւարտածա-
նին բացառիկ արժէքը՝ 110-ի վրայ «110 եւ
գովեստով շնորհած է գրականութեան՝ գտնա-
բարան, միեւնոյն ասեմ յայտնելով՝ որ օրիոր-
դին գործը համալսարանին կողմէ հրատարակ-
ուելու պատիւին պիտի արժանանայ:

ՆԿԱՐԻՑ ՄԱՆՈՒԼ ԹՈՒՆԵԱՆ

Ամերիկահայ նկարիչ Մանուէլ Թոյնեան,
ծանօթ անուն մըն է Միայնալ Նախագահու
արուեստի աշխարհին մէջ: Երեսուցեանից ու-
րիշներու ստեղծագործական կենսութիւնը ունի
իւր համարը կը ծաւալի օրէ օր:

Ծնած է Պրեզիտ 1911-ին: Աւարտած է իր
Անճելոսի մեծարուեստից բարձրագոյն վարժա-
րանը:

Իր ցուցանանդէսներուն կ'այցելեն աւելի
քան 5000 սիրողներ: Իր գործերը, որոնք 3000-էն
մինչեւ 7000 առարկ կը գնահատուին, մեծ ըն-
դունեցութիւն գտած են ամէնէն զօտաբանեալ
թանգարաններու եւ բազմաթիւ արուեստի դա-
լիներու մէջ:

Ձերտնոյի հայաշունչ մթնոլորտին մէջ հա-
սակ առած արուեստագէտը իր. Վարդիւր մըր-
թերուն մէջ կրցած է հոգի դնել:

Իր ստեղծագործական կենսութիւնը 35-ամեակին
աւելիով, բազմաճարհար մեծանուն գէմեր ող-
ջուլած են հայ արուեստագէտին գործերը, ու-
նեց մէջ հաստատելով հոգեկան վայելչի եւ
արուեստագիտական գոհացման առիթ առնող
նկարչական արժանիքներ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

1.- Գեորգ Մելիտինցի Գրական Մրցանակի Դատակազմը իր առաջին ժողովը գումարեց Վեհարանի Դահլիճին մէջ 11 Մայիս 1966-ին Նորին Ս. Օծուքիւն Վեհափառ Տ. Տ. Կորէն Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ եւ ընտրեց իր Դիւանը հետեւեալ ձեւով.-

Տիար Կարօ Սասունի՝ Ատենայեւո եւ
Տիար Բիւզանդ Եղիայեան՝ Ատենայեւո

2.- Դատական Կազմն քացուած կը յայտարարէ Գեորգ Մելիտինցի Դրական Մրցանակը 1966 տարուան համար, համաձայն 10 Յունուար 1966-ին հրատարակուած Կանոնագրութեան:

3.- Մրցանակի կրնան մասնակցել «բոլոր Հայ Մտաւորականները, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, առանց դաւանական եւ գաղափարական խտրութեան» (Յօդ. 9):

4.- «Մրցանակի կրնան ներկայացուիլ բոլոր այն հեղինակութիւնները, հայերէն կամ օտար լեզուով, որոնք կը վերաբերին Հայկական Մշակոյթին՝ գրական, խմբագրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական, լեզուաբանական, հնարանական եւ այլ յարակից կալուածներու մէջ» (Յօդ. 10):

5.- Ներկասիրութիւնները պէտք է ներկայացուին Վեհափառ Հայրապետին, դիւրմբեռնելի ձեռագրով, նախընտրաբար մեքենագրուած եւ երեք օրինակով, մինչեւ Մեպտեմբեր ամսուան վերջը (Յօդ. 13):

6.- Մրցանակի արժանացած գործերը կը հրատարակուին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տպարանին մէջ, եւ ծախսերը կը հոգացուին Հիմնադրամին տակառովը (Յօդ. 14):

7.- Մրցանակի արժանացած հեղինակը անկախաբար իր գործի տպագրութենէն, կը ստանայ 1000-2000 Լիր. ռսկիի պարգիւ մը, համաձայն Դատակազմի գնահատումին, ինչպէս նաեւ տպագրեալ գիրքէն նուազագոյն 500 օրինակ (Յօդ. 15 եւ 18):

Պայմաններու մանրամասնութեանց համար, փափաքողները Դատական Կազմի Դիւանէն կրնան ուղարկել օրինակ մը Գեորգ Մելիտինցի Դրական Մրցանակի Կանոնագրութենէն, որ կը բաղկանայ 20 Յօդուածներէ եւ հրատարակուած է 10 Յունուար 1966-ին:

Դ Ի Ի Ա Ն

ԳԵՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

ՀԱՅՏԷ՛

Catholicosssat Arménien de Cilicie
Antélias - Liban

ԱՆԴՐՈՋ ՄԵԿՆՈՂՆԵՐ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՅՑՆԵՐԸ՝

ԳՐԻԳՈՐ ՃԻԶՄԷՃԵԱՆ (*Փա՛յ Ղ*)

ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆ (*Հայաստանի*)

Յ. ԱՍԼԱՆ (*Իրանի*)

Մեր յաջորդ թիւով տպուի Խրափանչիւրիւն
կենսագրութիւնը :

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԵՆԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

G. SASSOUDI

Rue Sélim Boustani, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@